

ՕՆԻԿ
ՓԱՆԻԿՅԱՆ

Մահիւ
դապար կյանք

ՍՈՎԵՏԱՎԱՆ
ԳՐՈՂ

1948

891.99

1225.1

Փ-19

Փարիզյան, Օ.

Մանկիկ դպրոց

31/10

13/2

ՕՆԻԿ ՓԱՆԻԿՅԱՆ

891.99

ՍՏՈՒԳԱՍԾ Է 1961 Ք.

Փ-19

Մահից դեպի կյանք



A II 30159 15321 1957

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ
ԵՐԵՎԱՆ - 1948



О. ПАНИКЯН
ОТ СМЕРТИ К ЖИЗНИ

(На армянском яз.)
Советский писатель
Ереван, 1948 г.

Ա Մ Ա Ս

ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

ԻՄ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

Իմ ծննդավայրը, Մալգարա, գտնվում է Կ. Պոլսից դեպի արևմուտք, եվրոպական Թուրքիայում: Նա հիմնված է մի մեծ բարձր բլուրի վրա, ամֆիթատրոնի ձևով: Մալգարան նայում է դեպի հարավ: Այդ բարձր դիրքից նա հսկում է իր առաջ տարածված կանաչածուփի և հետո ոսկեգույն արտերի վրա, դիտում է իր ձախակողմն ընկած թթաստանների և այգիների գեղեցիկ շարքերն ու հանգչում է իր աջակողմը, դաշտերից անդին, հեռո՛ւն, բարձրացող Գուրու Դաղի հովանու ներքև: Ճանապարհորդը Ռոդոսառոյից Մալգարա գնալու ժամանակ, տակավին քսան կիլոմետր հեռվից, մի պահ տեսնում է Մալգարան իր բարձր գահի վրա, որ հետո կորսնցնում է տեսողությունից, մինչև հասնում է քաղաքից մի քանի կիլոմետր հեռու գտնվող բարձունքը, որ կոչվում է Երեք ծառեր:

Մալգարայի բնակչությունը կազմված էր հայերից, թուրքերից և հույներից: Քաղաքի հյուսիս-արևելյան կողմը հայերի թաղամասն էր, հյուսիս-արևմտյան կողմը՝ հույների, իսկ հարավ-արևմտյան կողմը՝ թուրքերի: Բնակչության թիվը հասնում էր մոտ 10,000-ի, որից մոտավորապես 4000 հայեր էին՝ 800 ընտանիքներով: Քաղաքի շուկան և արհեստանոցները մեծ մասամբ հայերի ձեռքումն էին, մի փոքրիկ մասը՝ հույների, իսկ մի շնչին մասը՝ թուրքերի: Քաղաքի շրջանի 80 գյուղերին շուռնչ ու կյանք տալիս էին հայ արհեստավորներն ու խանութպանները:

Իմ հայրենական երկհարկանի տունը գտնվում էր հայ-
կական թաղի արևելյան ծայրամասում, դպրոցի մոտ, եկե-
ղեցու կողքին: Հայրս ամուսնությունից առաջ հիմնովին
վերաշինել էր իմ հողագործ պապի թողած հին բունը:

1913 թվի Բալկանյան պատերազմին բուլղարական բա-
նակը երբ գրավեց Մալգարան, մեր տանը բնակվեց Դիմիտ-
րով ազգանունով մի բարձրաստիճան սպա: Սրանից հետո
նույնպես մեր տունն իջևանեց բուլղարական բանակի բարձր
հրամանատար զորավար Գենևը, որ թուրքերի դեմ վարում
էր ռազմական գործողություններ: Սրա օրով մի մեծ ցույց
կատարվեց մեր քաղաքում: Մեր տան առաջ տեղի ունեցավ
միտինգ, զորացույց, դրոշներով ու ռազմական շեփորով
ինքը, զորավար Գենևը՝ խոսեց խանդավառ մի ճառ: Ժողո-
վուրդը համակրական ցույցեր կատարեց և բուլղարական
դրոշը պարզվեց մեր տան վերև:

Զորավար Գենևը հորս խորհուրդ էր տվել և հաճախ
թելադրում էր թողնել Մալգարան և անցնել Բուլղարիա: Նա,
մեր ընտանիքի կողմից վայելած հյուրասիրության համար,
շատ գոհ և երախտագետ, մեզ մի պաշտոնաթուղթ էր տվել
շտաբի կողմից, ու պարտք էր դնում բուլղարական կառա-
վարության և ժողովրդի վրա, որ մեր Բուլղարիա գնալու
դեպքում, մեր ընտանիքին ամեն կերպ օգնեն՝ Բալկանյան
պատերազմի ընթացքում բուլղար բանակին որպես շատ օգ-
տակար հանդիսացող մարդկանց:

— Ստեփան, — ասել էր զորավար Գենևը հորս, — այս
կողմերը հավանաբար նոր կռիվների, նոր բախումների թա-
տերաբեմ պիտի լինեն: Լավ չէ՛, ես ամիսոսում եմ քո անմեղ
երեխաներին, կարիք չկա տունդ քանդելու, օր առաջ պատ-
րաստվիր. փոխադրության ամեն միջոց հատկացնելու եմ
քեզ. դու անհոգ կաց, մի օր կհիշես ինձ և ես ուրախ կլինեմ,
որ քո ընտանիքին օգտակար հանդիսացա:

Հայրս չէր համաձայնել, նա չէր ցանկանում թողնել
ամեն բան, չէր ուզում բաժանվել իր տանից, մեր ռազմա-
թիվ ազգականներից, դառնալ գաղթական: Նա հաշվել էր, որ

օտար երկրներում, անծանոթ միջավայրում դժվար կլինի գործել ու ապրել: Նա զորավար Գենեկի տված պաշտոնաթուղթը վերցրել էր, բայց որոշել էր մնալ. միայն ժողովրդին հայտնել էր զորավարի մտքերը, մի 50 հայ ընտանիքների ցանկացել էին Բուլղարիա դադլթել: Հայրս խոսել էր զորավարի հետ և որոշ օգնություն և դյուրություններ էր ձեռք բերել նրանց փոխադրության համար:

Մի քանի ամիս հետո բուլղարական բանակը նահանջել էր և թուրքերը վերադարձել էին: Նրանք խանութները կողոպտել և հետո ի մի հավաքելով քարյուղը թափել էին խանութների վրա, հրդեհել, որ ավաղակությունը երևան չգա: Կատարվել էր և սպանություն: Մեր քաղաքացի ծանոթ Պարետ Աճեմյանը նահատակվել էր: Մոխրացած հարյուրավոր խանութների և տների հետ, ավերակույտի վերածվել էր և իմ հոր արհեստանոցը՝ լիքը ատաղձներով, ապակու սրնդուկներով, ներկերով և իր արհեստին վերաբերող այլ ապրանքներով:

Հրդեհից հետո հայրս նոր արհեստանոց էր շինել ու կրրելին սկսել աշխատանքը:

Մեր ընտանիքը բաղկացած էր 7 հոգուց: Հայրս ձիրքերով օժտված մարդ էր: Նա բավականին զարգացել էր ինքնաշխատությամբ, ուներ հարուստ գրադարան: Նրա գրական հասկացողությունը զորացել էր շնորհիվ բանաստեղծ Արտաշես Հարությունյանի հետ ունեցած իր տեսակցությունների: Հայրս ասում էր, թե ինքը կարող էր գրող դառնալ, եթե միայն ուղղագրություն գիտենար: Նա սաստիկ ամաչում էր իր տառասխալներից:

— Ի՞նչպես կարելի է, — ասում էր, մի որևէ դրության մեջ Բ-ով գրածս բառը մի քիչ վարը փ-ով եմ գրում, Գ-ը՝ ք-ով կամ Ք-ն գ-ով, մեկ երկու չեն, որ սովորես, Դ և Թ կա, Ե և Է, Հ և չ, Չ և Յ, Չ և Զ, Ո և Օ, Ռ և Բ, ես ի՞նչ իմանամ, սրանց որ մեկին ուր պետք է գրել:

Հայրս նկարչության հակումն էլ ուներ: Նա մի քանի փոքր լուսանկարներ մեծացրել էր մեծ հաջողությամբ.

քնությունից մի քանի տեսարաններ էր նկարել. ինքն իր համար շինել էր մի սազ և մերտանը տեղի ունեցող հավաքութենէրին նվագում, ուրախացնում էր բոլորին, տրամադրություն ստեղծում: Նա մեր քաղաքում ծանոթ էր նաև որպէս գալֆա (տուն շինող, հատակագիծ պատրաստող, ինժեներ): Մեր տան հատակագիծն ինքն էր պատրաստել և շէնքը իր հսկողութեամբ էր կառուցվել:

Մայրս հեզ ու խոնարհ, իր երեք զավակներին նվիրված մի տանտիկին էր: Ես արդեն նորահաս պատանի էի: Հաճախում էի Ռոդոստոյի ազգային վարժարանը: Այնտեղի դպրոցը մի քիչ ավելի լավն էր այդ շրջանին, քան մերը: Դպրութեաններ էլ կային, մամս (մորս մայրը) իր ընտանիքով ծերունի ծնողքով այնտեղ էին ապրում, ես էլ նրանց մոտ էի մնում: Միայն ամառային արձակուրդներին վերադառնում էի Մալգարա: Քույրս, Հռիփսիմեն, հաճախում էր մանկապարտեզ: Նա շատ գեղեցիկ մի աղջնակ էր: Ամառներին հանդեսում, ես հիշում եմ, նա բեմ եկավ հրեշտակի դերով, սպիտակազգեստ, կապույտ ժապավեններով, երկար, արձակ մազերով, ուսերի վրա երկու թև, վարդակարմիր այտերով և երկնազույն աչքերով: Ժողովուրդն ուղղակի հիացած անվերջ ծափահարում էր. ծափահարում էր խանդավառված ու մարդիկ հարցնում էին իրար. «սա ո՞ւմ աղջիկն է»: Եղբայրս, Մուշեղ Մամիկոնյանը, ավելի փոքր էր, բայց կանխահաս մի խելոքություն կար նրա մեջ: Հայրս նրան կոչել է Մուշեղ Մամիկոնյան, ցանկանալով, որ նա քաջութեամբ, հայրենասիրութեամբ նմանվի պատմական հերոսին: Եղբորս ծնվելու ժամանակ հայրս նոր էր վերջացրել Րաֆֆու «Սամվելը»: Այդ վեպի ազդեցության տակ նա իր նորածին զավակին անվանել էր այդ անունով:

Մեր տանը մեզ հետ բնակվում էին նաև ազապ հորեղբայրս և հորաքույրս:

Հայերը մեր գյուղաքաղաքի թուրքերի և հույների հետ

ապրում էին խաղաղությամբ և սիրով: Հայ բնակչությունը մշակութապես բարձր էր մյուս ազգերից:

Մալգարայում գոյություն ունեւ գրադարան, ակումբ, թատրոն, կազմակերպւում էին դասախոսություններ, որոնք օժանդակում էին հայերի մտավոր բարձրացման ու հառաջադիմության: Թուրքերը, մանավանդ գյուղացիները, գրեթե ամբողջապես անգրագետ մարդիկ էին: Նրանցից շատերը, իրենց նամակները գրել էին տալիս հայերին, չցանկանալով փող վճարել Հյուսէին էֆենդիին՝ որ նստում էր շուկայում մի նեղ փոքր սենյակի մեջ, որի արհեստն էր նամակ գրել ու փող վաստակել:

Տասնյակներով հասուն հայ պատանիներ գնում էին Պոլիս միջնակարգ ուսում ստանալու, կային և բարձրագույն վարժարան ավարտած՝ բժիշկ, դեղագործ, ինժեներ, իրավաբան, անասնաբույժ, պատրաստված երիտասարդներ:

Թուրք բնակչությունը շատ էր հարգում հայերին, բայց երբ իշխանությունը կամ հետադեմ տարրերը գրգռում էին նրանց մեր դեմ, այն ժամանակ պատահում էին ընդհարումներ ու ջարդեր:

Այնուամենայնիւ մեր առաջ տնտեսական և մշակութային հողի վրա ստեղծվել էր զարգացման որոշ հնարավորություններ և մենք ձգտում էինք ավելի բարձրանալ, առանց կռահելու, որ դարավոր թշնամին դանակ էր սրում:

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Այն օրից, երբ թաթարական հորդաները երևացին, առանց նրանց էլ բազմաշարշար և շատ ոտնակոխված մեր երկրամասում, մեր երկիրը բոլորովին քանդվեց ու մեր աշխատավոր ժողովրդի հանգիստը հիմնովին խանգարվեց: Մեր հայրենիքը նմանվեց անսահման հրդեհարանի ու վերածվեց ավերակույտերի: Մեր ժողովրդի արյունը հոսեց առատորեն և ոչ մի ընտանիք, ոչ մի սիրտ չմնաց առանց վերքի ու սուգի: Ժողովուրդը հարկադրվեց գաղթել, փախչել իր

հայրենիքից, ուր ոչ ինչքի, ոչ պատվի և ոչ էլ կյանքի ապահովություն չէր մնացել:

Թաթարներից, սելջուկներից հետո ավելի զարգացրին ոճիրների և ավերումների տխրահռչակ գործը՝ թուրքերը: Այս բարբարոս, քաղաքակրթությունից զուրկ, կողոպուտների ընդունակ պետականությունը Արևմտյան Հայաստանին առաջին անգամ տիրապետեց 1514 թվին: Հայերը վերջնական կերպով թուրքերի ծանր լծի տակ ընկան 1639 թվին:

Թուրքերի տիրապետության բոլոր դարաշրջաններում հայ ժողովուրդն ապրեց անօրինակորեն ողբերգական մի կյանք: Եկվոր թուրքերը բոլոր միջոցներին դիմում էին իրենց նորահաստատ իշխանությունը ամրացնելու և բնիկ հայ ժողովրդին իրենց հպատակեցնելու նպատակով:

Հայ ժողովուրդը ոչ թե ապրում, այլ բառի ամենալայն իմաստով անարգալից տանջվում և կոտորվում էր: Դպրոց չկար, որ հասնող սերունդը սովորեր իր անցյալ պատմությունը, հասկանար ճշմարտությունը, գիտակցեր իր դրժբախտության պատճառները: Հայոց աշխարհի վրա իջել էր մի զարհուրելի խավար, մի կուրացուցիչ աղջամուղջ: Նորահաս սերունդը կարծում էր, որ թուրքը միշտ եղել է Հայաստանում. որ նա է իր տերը, որ իր պարտականությունն է հպատակվել նրան, որ նույնիսկ իր կյանքը պատկանում է թուրքին և նա ի՛նչ որ ուզենա կարող է անել, իսկ ինքը բողոքելու, տրտնջալու իրավունք չունի, պարտավոր է միայն հնազանդել:

Հայն իրավունք չունեի անգամ հողից վեր աղոթելու: Եկեղեցիներն արտոնվում էին միայն կեսգետնահարկ լինելու պայմանով: Մինչև օրս էլ Բուլղարիայում թե՛ բուլղարական, և՛ թե հայկական հին եկեղեցիների մեծ մասը, որոնք կառուցվել են թուրքական տիրապետության շրջանում, հիմնվել են 3—4 մետր հողի տակ: Թուրքերի տարածած սարսափից շատ վայրերում հայը վախենում էր իր մայրենի լեզվով խոսել: Հայերին թույլ չէր տրվում ամեն գույնի հագուստ հագնել: Նույնիսկ հայը ձի նստելու իրավունք չու-

ներ: Փոքր Ասիո մի քաղաքում, քաջամարտիկ մի հայ երիտասարդ, մի քանի թուրքերի կյանքը փրկում է ստույգ մահից. հայ երիտասարդն իր ոտը վնասում է սակայն: Թուրք կառավարութիւնը ազատարար հային մի արտոնաթուղթ է տալիս, որ իր կատարած գնահատելի գործի համար կարող է ձի նստել, միայն թե չպետք է անցնի շուկայից և գլխավոր փողոցներից:

Բայց կյանքը գնում էր առաջ, ժամանակը փոխում էր ամեն ինչ: Հայը թուրքական գեհենի միջից, թեև վիրավոր ու արյունլիւ, բայց եկել հասել էր 19-րդ դարի շեմքին. մի դար, որ արձագանքը պիտի լիներ բազմաթիւ ազգերի ազատագրական պայքարներին:

Եվրոպայում դանազան ազգեր բարձրացել էին ապրատամբության ու ազատության դրոշմ: Գահեր էին ճարճատում, թագեր էին ընկնում և մասսաների գլխին նստած մարդիկ, խոնարհվում էին ժողովրդական խավերի պահանջների առաջ, խոնարհվում էին նրանց միաձուլ կամքերի առաջ: Ռուսաստանում կատարված դեմոկրատական-հառաջադիմական ռևոլուցիոն շարժումները մեծ ազդեցութիւն էին թողել արևելահայերի ազգային-ընկերային կյանքի վրա, որից ազդվել էր և՛ արևմտահայերի կյանքը:

Թուրքիո հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի արձագանքը հասել էր Փոքր Ասիայի խուլ ու խավար անկյուններում ապրող հայ ժողովրդին, հասել էր և ցնցել, արթնացրել նրան: Թուրքական հսկա կայսրութիւնը, որ իր ժողովրդի թվի հետ համեմատած վիթխարի և անբնական սահմաններ էր ընդգրկել, հասնելով մինչև Վիեննայի դռները, շէր կարող կանգուն մնալ, որ նախ հիմնվել էր սարսափի քաղաքականության վրա, և ապա այն պատճառով, որ հպատակ ժողովուրդները մշակույթապէս անբաղդադելիորեն բարձր էին կանգնել իշխողներից, անցյալ ունեին, գիտակցել էին իրենց ազգային շահերն ու մարդկային իրավունքները:

Այս պատմական դաստիարակիչ դեպքերը ամենաուժեղ

կերպով ազդում էին հայ ուշիմ ժողովրդի մտքի վրա: Ազդում էին ու շարժում նրա թանձրացած արյունը, խառնում մոխիրը և կայծեր երևան հանում: Ամենից շատ հայ ժողովուրդն էր պահանջ զգում ազատվել թուրքական արյունոտ ճիրաններից, հիմնել իր ազատ, ինքնուրույն կյանքը:

Այսպես, 19-րդ դարի 40-ական թվականներին թե՛ արեւելահայերի, թե՛ արեւմտահայերի մեջ միանգամայն սկսվեց ազգային վերածնունդը: Թուրքահայ բազմաթիվ երիտասարդներ ուրիշ երկրներ գնում բարձրագույն ուսում էին ստանում: Նրանք վերադառնում էին լուսավորված, և քաղաքակիրթ երկրներում իրենց սովորած գիտություններն ու կրթութւյան ձևերն ու կենցաղավարական բարքերը ներմուծում հայ կյանքի մեջ: Հայոց լճացած, ճահճացած կյանքը շարժվում էր: Հայ ժողովուրդն այժմ հասկանում էր պատմութւյան, կյանքի և իր ճակատագրի ուղին: Հայ զարգացած տարրը, տեսնում էր իր ժողովրդի հետամնացությունը և ցանկանում թթխմոր հանդիսանալ համայն հայությունը շաղախելու՝ զարգացման, հայրենասիրութւյան և ազատութւյան գաղափարներով: Նրանց պայքարը հայ հետադիմական տարրերի՝ ամիրաների և տղետ եկեղեցականների դեմ անպտուղ չի՝ անցնում: Նրանք հաջողում են ազգային սահմանադրությունը վավերացնել սուլթանից: Հետզհետե հայկական դպրոցներ են բացվում, ուսումնասեր հայ ժողովրդի անհամար երեխաներով դպրոցները հորդում են: Կազմվում են մշակութային ընկերություններ, կատարվում են դասախոսություններ, որոնք ծառայում են ազգային գիտակցութւյան մշակման և հզորացման:

Սկսվում են թերթեր հրատարակվել: Գրականությունը քանի գնում ծաղկում է: Հայկական թատրոններ են գործում: Հայերի առաջավոր, մտավորական տարրը ցանկանում է թուրքերի նախկին հպատակ, բայց այդ օրերին արդեն ազատ Հունաստանի, Սերբիո, Ռումինիայի, Բուլղարիայի նման սեփական ազատ հայրենիք ունենալ:

Եվ քանի հայը առաջադիմում ու քաղաքականորեն հա-

սունանում էր, քանի Հայաստանի պայքարը զարգանում էր, մյուս կողմից թուրքերը այնքան անհանգստանում էին, միջոցներ էին խորհում հայերի ձգտումներն արմատախիլ անելու, նրանց նպատակները խափանելու:

Եվ ամենափոքր մի պատճառը Հայաստանի դավառների մեջ առիթ էր ստեղծում կոտորածի, որին պաշտոնապես մասնակցում էր թուրք կառավարությունը իր արնածարավ բատիկաններով և ընչաքաղց պաշտոնյաներով: Թուրքական հետադեմ կառավարությունը, մոլեռանդ հոգևորականութիւնը, փողասեր վերին դասակարգը իրենց խավարամիտ, տգետ ժողովրդի մի որոշ մասին թունավորում էին և նրանց ոճիրների, շարագործությունների մղում:

Զարդերը թուրքերին ապահովում էին հայերի ինչքերի յուրացում, հայ կանանց բռնաբարում, կեղեքումի միջոցով հարստացում, ապրուստի ապահովում: Թուրքը վստահ էր, որ վերջիվերջո պատասխանատուն ու հանցավորն է՝ ի հայն էր լինելու: Կառավարական քննությունից ու պատրաստված տեղեկագրերից պարզվում էր, որ «դեպքը առաջացել է հայերի պետության հանդեպ ցույց տված ըմբոստ արհամարհանքից և մուսուլման ժողովուրդը անարգելուց» — դինիմե սեովդի. (հավատիս հայհոյեց): Զարդից հետո պատահում էր, որ եթե հրաշքով փրկվել էին մի քիչ հանրածանոթ հայ մարդիկ, նրանք էլ կա՛մ բանտարկում էին իբրև «անախորժ դեպքերի» պատասխանատու, կա՛մ աքսորում և անհետ կորցնում: Հետո ջարդավայրից Կ. Պոլիս սուլթանին հասնում էր հանգստացուցիչ, սովորական հեռագիրը.

«Ասայաջը բեր քեմալ դըր»

(անդորրությունը կատարյալ է):

Միայն 900-ական թվականների մոտավոր շրջանում Կ. Պոլսից մինչև Ալաշկերտ, Զեյթունից մինչև Սասունն ու Կարին, զոհ էին գնացել շուրջ 300 հազար հայեր:

Սակայն այս նախճիրների գույժը հասնում էր Եվրոպա և հայկական հարցը է՛լ ավելի գրավում էր դիվանագետների ուշադրությունը: Բայց այդ դիվանագետները կեղծավոր ու

խորամանկ գործակալներն էին իրենց բուրժուական պետութ-
յուններին և պարզապես շահագործում էին հայկական տա-
ռապանքներն ու զոհերը և Թուրքիայից քաղաքական կամ
տնտեսական շահեր ապահովում՝ հայկական հարցի շնոր-
հիվ: Այստեղ փակագծի մեջ ասենք, որ հետագայում մեր
տեղահանության պատճառով զոհված մեկ միլիոն հայերի
արյունը, Անգլիան սակարկում էր Մուսուլի նավթահորերով
և իր «փոքր զինակցին», որին այնքա՜ն շուտ խոստումներ
էր տվել, հայտարարում էր թե՛ անգլիական զրահանավերը
չեն կարող Արարատը բարձրանալ և հայերին օգնության
հասնել: Սրանից դեռ 70 տարի առաջ «Փորձ»-ի խմբագիր
Աբգար Հովհաննիսյանը իր պարբերականում գրել էր.

«Անգլիան իսկապես ոչ մի ազգային նպատակ չունի
արևելքում, այլ նա յուր ավանդությունների համաձայն՝
ձգտում է պահպանել այնտեղ անգլիական առևտրական դա-
սի եսական շահերը: Անգլիական ազգի այժմյան պետական
և հասարակական կազմակերպության շնորհիվ՝ տիրապետող
տարրը Մեծ Բրիտանիայում հանդիսանում է միջին առև-
տրական դասը. և որովհետև այդ երկրում սահմանադրական
սկզբունքները խստությամբ գործադրվելով՝ տերությունը
ստիպված է միշտ այնպես ընթացք բռնել, որ համապա-
տասխան լինի հասարակության տիրապետող տարրի պա-
հանջներին, այս պատճառով հասկանալի է, թե ինչու համար
անգլիական նախարարները, որ կուսակցության և պատկա-
նեն, արևելյան խնդրի վերաբերմամբ իրենց բոլոր ճիգը թա-
փում են պահպանելու Անգլիայի առևտրական դասի շահերը:
Այդ շահերը պահանջում են, որ Թուրքերը իշխեն արևելքի
վրա, և այդ պատճառով Անգլիան առհասարակ ստիպված է
պաշտպան հանդիսանալ Բ. դրան և նորա իրավունքներին:
Անգլիայի պաշտոնական ներկայացուցիչը նույն երկրի կա-
ռավարությունն է, որ յուր իշխանությունն ընդունում է
առևտրական դասի ձեռքից, ուրեմն և պարտավոր է պաշտ-
պանել նորա շահերը: Այս շահերը պաշտպանելու, այսինքն
ընդհանրապես անգլիական վաճառականությունը օսմանյան»

կանխարութեան մեջ որքան կարելի է շահավետ պայմանների մեջ դնելու համար, կառավարութիւնը, ասում ենք, հարկադրված է պաշտպանել Դրան (Թուրքիո) իրավունքներն ու արտոնութիւնները, որ այս կողմից անգլիական հասարակութեան տիրապետող դասին համամիտ ու համակամ է:

«Այս մի քանի խոսքերը բավական են ընթերցողին համոզելու՝ թե մի անհրաժեշտ պարտք կա դրված անգլիական կառավարութեան վրա օսմանյան իշխանութիւնը պաշտպանելու արեւելքում»:

Շատ քիչ բան էր փոխվել անգլիական քաղաքականութիւնից և նրանք այդ օրերին էլ վարում էին նույն քաղաքականութիւնը Թուրքիո հանդեպ:

Հայկական հարցը անընդհատ շարշարվում էր քաղաքական սեղանների վրա, բայց երբեք լուծում չէր գտնում:

Իսկ հայկական հրդեհը չէր մարում, նա ծխում էր, ծխում էր, և մեկ էլ հանկարծ կրկին բոցավառվում, կրկին ճարճատում:

Սուլթան Աբդուլ Համիդից զգվել էին ոչ միայն հայերը, այլ և Եվրոպա ուսած և զարգացած թուրք երիտասարդները (ժյոն թուրքերը), որոնք մեծահարուստ, վաճառական, կալվածատեր մարդկանց որդիներն էին: Սրանք էլ դժգոհ էին ո՛չ թե նրա համար որ, իհարկե, իրենց բարբարոս փառիշահը անմեղ հայերին է ջարդում ու թուրքի անունը վարկաբեկում, այլ նրա համար, որ սուլթանն առհասարակ չափազանց սեղմում ու կաշկանդում էր բոլոր քաղաքացիներին և հնարավորութիւն, գյուրութիւն չէր ընծայում գոնե զուտ տնտեսական, ազգային մշակութի հողի վրա ազատ գործելու և զարգանալու: Սուլթանն ա՛յն բռնապետներից էր, որոնք սիրում են իրենց ժողովուրդը տգիտութեան ու կալանքի տակ պահել:

Երիտասարդ թուրքերը, թուրքական կապիտալիզմի առաջին այս սերունդը, կազմակերպվել էին և կցանկանային Համիդը տապալել, սահմանադրութիւն հռչակել: Նրանք շատ տկար էին սակայն և հենց այս պատճառով էլ դիմում են

հայկական մի կաղամակերպության, խնդրելով նրանց օժանդակությունը թուրք և հայ ժողովրդի միակ թշնամին, Համիդը գահընկեց անելու: Երիտասարդ թուրքերը խոստանում էին իրենց հայ գործակիցներին, որ պայքարը հաջողությամբ պսակվելու դեպքում, հայ ժողովուրդը վայելելու է այն բոլոր քաղաքացիական ազատություններն ու իրավունքները, ինչ որ թուրքը: Ջնջվելու է շարիաթը, որ կրոնական մի օրենք էր և քրիստոնեի վկայությունը մահմեդականի վկայությունից ստոր էր համարում. այս օրենքից օգտվում էին թուրքերը, ամեն շարիք գործում և մի թուրք վկայի միջոցով արդարանում, ազատ արձակվում: Սահմանադրական վարչաձևի տակ է՛լ չէին լինելու հալածանքներ ու ջարդեր և հայերը ապրելու էին մի նոր կյանք, թուրք ու հայ «եղբայր» ժողովուրդների համար ստեղծվելու էր մի նոր դարաշրջան և երկու ազգերի միասնական գործակցության ու գործունեության անսահման ասպարեզ: Այս խոստումների հիման վրա նրանք ստորագրում են մի ուխտ: 1908 թվին տապալվում է սուլթանը:

Սահմանադրությունը հռչակվել էր արդեն, երիտասարդ թուրքերն ու իրենց կուսակցությունը Իթթիհատ, Թերհակը անցել էին կառավարության գլուխ ու ղեկավարում էին պետությունը: Հայերի մի մասը հարբել էր այս հաղթանակից: Այժմ երկրի ղեկը գտնվում էր «բարեկամ զարգացած թուրքերի ձեռքին». «Թուրքիան քաղաքակրթության ուղու մեջ էր մտնել»: «Հինը կործանվել էր. նոր պատմություն էր սկսվում», «նոր հորիզոններ էին բացվում»: Ու թուրքերի հետ հայերն էլ երգում էին ու ցնծում.

Յաշասուն նիադիլեր, էնվերլեր,
Կահը օլսուն համիդլի ասկերլեր:
(Կե'ցցեն նիադիները, էնվերները,
Նզո'վվին համիդյան զինվորները):

Սակայն, մի հասարակ թուրք մարդ տեսնում է միամիտ հայերի ծայրահեղ ոգևորությունն ու հեզնանքով ասում.

— Ի՞նչ է եղել ձեզ, հե՛յ հայեր, Արթի՞նը Ալի է դարձել,
թե՞ Ալին՝ Արթին...

Այսպես մի թուրքի բերանից խոսում էր ամբողջ թուրք
հետադեմ կառավարությունը։ Սահմանադրությունից ըն-
դամենը մի տարի հետո՝ 1909 թվի ապրիլ ամսին՝
կատարվում էր Կիլիկիայի հայերի ջարդը։ Թուրք խուժանը
կոտորում էր ավելի քան 20 հազար հայեր։ Հուսախաբված
ժողովուրդը այրված սրտով երգում էր.

Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան։

Իսկ թուրքական պառլամենտի դեպուտատ և իրավագետ
Հակոբ Բաբիկյանը, որ գնացել էր ջարդերի պատմությունը
ստուգելու, տեղեկագիր պատրաստելու, վերադառնալիս կա-
ռավարության կողմից թունավորվեց, որովհետև հաջողել էր
այնպիսի փաստաթղթեր ձեռք բերել, որոնց հիման վրա հեշ-
տությամբ կարելի էր ապացուցել կառավարության գործոն
մասնակցությունը Ադանայի ջարդերին—դա թուրքերի հաշ-
վին չէր գալիս։

Բայց Ադանայի կոտորածը դեռ ոչինչ։ Դեռ այն սկիզբն
էր «նո՛ր դարաշրջանի»։ Երիտասարդ թուրքերը և նրանց
կուսակցությունն ավելի՛ն էին պատրաստում։ Պատրաստում
էին մի ա՛յնպիսի սպանդ, որ մինչև մեր օրերը մեր պատ-
մությունը չէր արձանագրել իր էջերում։

Հայկական հարցի բարեկամ քաղաքական գործիչները
երբ տեսնում են, որ Սահմանադրությունն էլ վերջ չգրեց
հայահալած քաղաքականության և Թուրքիո մեջ հայերի վի-
ճակը մնում է նույնը, ինչ որ Համիդի օրով, կրկին, և այս ան-
գամ ա՛վելի ուժեղ կերպով սկսում են արժարժել հայկական
6 նահանգների բարեկարգության անհետաձգելի խնդիրը։
Օտարների այս միջամտությունը թուրքերն ընդունում են

անգսպելի կատաղությամբ: Բարենորոգումների տանջված հարցը վերջապես գտնում է իր լուծումը: Հայկական շրջանների (Վան, Կարին, Սեբաստիա, Տիգրանակերտ, Բիթլիզ և Տրապիզոն) օտար երկու կառավարիչները, նորվեգիացի Հոֆն ու հունդացի Վեստենենզը, արդեն իսկ նշանակվել էին և հարկ էր հսկեին ընդունված օրենքների գործադրության և կարգի պահպանման վրա: Այլևս թուրքերի վրա վստահել չէր կարելի: Նրանց խոստումներին և ստորագրած ուխտագրերին ո՛չ ոք չէր հավատում: 1914-ին, նշանակված օտար կառավարիչներից Հոֆը արդեն հասել էր Վան ու պատրաստվում էր ձեռնարկել աշխատանքի: Շուտով հասնելու էր և մյուս կառավարիչը՝ Վեստենեն: Այս բոլորը թուրքերը նկատում էին իրենց ներքին գործերի միջամտություն: Նրանք իրենց շատ վատ էին զգում և անհանգիստ՝ միջոցներ, ելքեր էին որոնում մի կերպ դուրս գալու այս անհաճո գրությունից:

Այդ ելքը նրանք գտան: 1914 թ. օգոստոս ամսին սկսվեց առաջին իմպերիալիստական պատերազմը, որի շղթայազերծման, այսպես ասված բոցավառման պատճառ դարձան գերմանացիները: Թուրքերն անցել էին Երրյակ Զինակցության, այսինքն Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կողմը: Այս ճակատի դեմ կանգնել էր Երրյակ Համաձայնությունը, այսինքն Անգլիան, Ռուսիան և Ֆրանսիան:

Թուրքական պառլամենտի ազդեցիկ հայ դեպուտատները շատ էին աշխատել, որ թուրքերը չեզոք մնան, պատերազմի հրդեհի մեջ չնետվեն. պարտության դեպքում, չհաշված անփոխարինելի զոհերը, նրանք ցույց էին տվել ա՛յն ծանր հետևանքները, որոնք անխուսափելի էին. նյութական հատուցումների խնդրից, մինչև երկրի փոքրացումը և այլն: Բայց թուրքերը չէին ցանկանում լսել բանականության ձայնը: Նրանք վճռել էին պատերազմել. վճռել էին ծուռ խղճմտանքով, սխալ հաշիվներով: Նրանք մտնում էին աղետի մեջ, հայկական հարցը պատերազմի խառնակ ժամանակ «լուծելու» նպատակով: Նրանք ունեին նաև հափշտակողական

Ֆանտաստիկ երազանքներ: Նրանք հետապնդում էին պանիս-
լամիզմի մեծ հեքիաթի իրականացումը, բոլոր իսլամ ժողո-
վուրդներից՝ Նգիպտոսից մինչև Հնդկաստան՝ կազմել կրո-
նական մի հսկա՝ կայսերություն, խալիֆայի (քանի որ նա
նստում էր Կ.Պոլիսում, ուրեմն թուրքերի) հովանավորու-
թյան տակ: Այս ծրագրի անհաջողության դեպքում, նրանք
ցանկանում էին պանթուրանիզմը իրականացնել, որի նպա-
տակն էր թուրանական ծագում ունեցող բոլոր ազգերից
կազմել մի ծավալուն պետություն իրենց ղեկավարությամբ
և անգլիացիների հովանավորությամբ:

Ինչպես անհատական մեծամտությունները, նույնպես
ազգային խոշոր հավակնություններն անպատիժ չեն մնում
տակայն: Պարզ է, որ թուրքերն էլ իրենց այս ծավալապաշ-
տական, անիրականանալի ծրագրերի համար հուսախաբու-
թյունների և դառն վնասների պիտի ենթարկվեին մի օր:

Այստեղ պետք է նշել հայերի հետզհետե աճող, զորա-
ցող ազդեցությունը թուրքական քաղաքական, տնտեսական
և մշակութային կյանքի վրա: Այս երևույթից էլ թուրքերը խոշ-
վում էին: Արդեն իսկ թուրք նախարարների կողքին տեղ էին
գրավել մի քանի հայ նախարարներ. արտաքին գործերի նա-
խարար՝ Գաբրիել Նորատունկյան, փոստային նախարար՝
Ոսկան Մարտիկյան և հողագործության և հանր. շինության
նախարար Պետրոս Հալաջյան: Թուրքական պառլամենտում
գտնվում էին ազդեցիկ և կորովամիտ հայ դեպուտատներ,
որանցից Գրիգոր Զոհրաբը (մասնագիտությամբ անվանի
իրավագետ և հայ գրականության խոշորագույն դեմքերից
մեկը) հաճախ առաջնորդում էր շվարման մատնված պառ-
լամենտին իր տաղանդավոր ելույթներով: Ամեն անգամ, որ
պառլամենտը գտնվում էր մի ծանր հարցի առաջ, բերաննե-
րը փակվում էին ու մտքերը կանգ առնում, իրենք թուրք դե-
պուտատները ինքնաբերաբար դառնում էին դեպի լուսավոր
հայ միտքը՝ մի ելք, ուղի գտնելու անկաշկռվությամբ.

— Սեռը Զոհրաբ էֆենդին զրո (ձայնը պատկանում
է Զոհրաբ էֆենդին):

A 30159 12257



Եւ Ջոհրաբը ցուց էր տալիս ուղիղ ճանապարհը, արդարացնում՝ բոլորի հույսերը:

Տիգրան Կելեկյանը հրատարակում էր թուրքական լեզվով քաղաքական «Սաբահ» (Առավոտ) օրաթերթը, որ հանդիսանում էր թուրք առաջավոր տարրի ղեկավար օրգանը: Նրա ազդեցությունը թուրքական արտաքին և ներքին կյանքի վրա մեծ էր: Թուրք խմբագիրների թերթերից ամենի սպասվում և ընթերցվում էր «Սաբահը»: Կելեկյանի խմբագրական հոդվածները ամենախոշոր ուշադրությամբ և հետաքրքրությամբ կարդացվում էին, յուրացվում նրա մտքերը: Այդ օրագրողի գաղափարներից, տեսակետներից և խորհուրդներից թուրքը չէր ուզում զրկվել: Թերթն առնելուց հետո ընթերցողն առաջին հերթին աչքը դարձնում էր խմբագրական հոդվածի վրա.

— Բաքալըմ նեդիոր Կելեկյան էֆենտի (տեսնենք ի՞նչ է ասում Կելեկյան էֆենտին): Թուրքական թատրոնի հիմքը դրել և ներկայացումներ սարքում էին հայ դերասաններ (Ֆասուլյաջյան, Մինակյան), խաղում էին հայ հեղինակների թուրքերենի թարգմանված կամ օտար գրականությունից վերցված պիեսներ: Թուրքական հաստատությունների մեջ հայ բարձր պաշտոնյաների թիվը խիստ մեծ էր: Նույնիսկ թուրքական բարձրագույն վարժարաններում, թուրք լեզվի, գրականության, մաթեմատիկայի հայ ուսուցիչներ կային (Կուրտիկյան, Ադրունի և այլն), որոնք, «զարգացած և քաղաքակրթված թուրք հանրապետության օրով» էլ պաշտոնավարում էին և բարձր պաշտոնատարներ և նախարարներ են հասցրել: Կ. Պոլսո ու գավառների ամբողջ բժիշկները համարյա հայեր էին, սուլթանների և ապա թուրք նախարարների անձնական բժիշկները՝ նույնպես: Կ. Պոլսում բարձրացող ամենաշքեղ շենքերը հայ ճարտարապետներն էին կառուցել: Վաճառականությունն ու մանավանդ արհեստները համարյա ամբողջությամբ հայերի ձեռքին էր գտնվում:

Հայերը անկեղծորեն ցանկանում էին քաղաքակրթել, զարգացնել թուրք ժողովրդին, նրանց սովորեցնել կյանքի

ուղիղ ճանապարհը, պարզապես այն հաշվով, որ մի գուցե լուսավորված, կրթված թուրքը այն չի անի, ինչ անում էր տպետ թուրքը: Սակայն այս վեհ գաղափարը ծուռ կերպով էին հասկանում թուրք իշխանավորները և կարծում էին, որ հայերը ձգտում են պաշտոնների, դիրքերի տիրանալով՝ պատասխանատու դեր կատարել թուրքիայում և իրենց ազդեցության ենթարկել թուրքերին:

Թուրքերը գերմանական ազդեցությամբ՝ կրկնելով «Գերմանիա, Գերմանիա ամեն բանից վեր և գերման ժողովրդի տիրապետություն» խոսքերը, ընկել էին գերզգայնական ջրադարձի մեջ, իսկ դա միշտ իր հետ աղետ է բերում և երբեք բարիք: Թուրքերի ազգային ֆանատիզմը նախանձում էր հայերի գրաված դիրքերին և նրանք պատրաստվում էին թուրքավարի կերպով հայերի ազդեցությունը ջնջել:

Թուրքերը բանաձևում էին հայերի վերաբերյալ խնդիրները հետևյալ կերպով.

Հայերը իրենց բնակած հողերի իրական տերերն են: Հայերն էլ երբեմնի իրենց հպատակ հույների, բուլղարների պես մի օր թոթափելու են թուրքական լուծը: Հայկական հարցը դարձել է միջազգային խնդիր և ամեն առիթով պատճառ է դառնում նորանոր զիջումների և սպառնում է արտաքին միջամտության իրենց ներքին գործերի մեջ. արդեն իսկ 6 նահանգների բարեկարգության հարցն իրականանում է և օտար կառավարիչը գտնվում է թուրքիայում: Հայերը տիրապետում են թուրքերի տնտեսական, մշակույթի կյանքին և խորը արմատներ են արձակում քաղաքական հողի վրա: Հայերը արգելք և խոչընդոտ են ապագա ծրագրների իրագործման ճանապարհին (տնտեսական մրցակցությունից մինչև պանթուրանիզմ): Հայերը երբեք չեն ների դարերի ընթացքում կատարված հարստահարությունները, բարբարոսություններն ու ջարդերը: Ուրեմն, ուրիշ միջոց չկա, կարող չեն խաղաղ, օրինավոր ճանապարհով պայքարել հայերի դեմ, հետևապես անհրաժեշտ է հայ ժողովուրդը բնաջնջել, սրբել նրա անունը ազգերի ցանկից և միանգամ ընդմիշտ

«արմատապես լուծել հայկական կնճիռը»: Մյուս կողմից Գերմանիան շատ լավ էր իմանում, որ Թուրքիային համարյա բոլոր մեծ պետությունները ցանկանում են իրենց ազդեցության ենթարկել, ոչ միայն տնտեսական, այլ առավելապես ռազմական, քաղաքական հաշիվներով: Ավելին, նա լավ էր իմանում, որ բոլորը ցանկանում են զորացնել Թուրքիան. ցարական Ռուսաստանը ընդդեմ Անգլիայի: Գերմանիան՝ ընդդեմ ցարական Ռուսաստանի, Անգլիան՝ ընդդեմ ցարական Ռուսաստանի և Գերմանիայի ձգտումներին: Գերմանիան ձգտում էր հայերի մաքրագործումով միապաղաղ, միաձուլվ թուրք պետություն ստեղծել՝ ապագայում անախորժություններ, վեճեր ու պայքարներ չունենալու նպատակով, հաշվի մեջ էր նաև տնտեսական գործոնը և այդ ուղղությամբ հաշվի էր առնվում մանավանդ հայերի ներկայացրած արժեքն ու ուժը Թուրքիայում: Մյուս կողմից Գերմանիան լավ էր իմանում, որ հայերը ի վերջո իրենց փրկությունը և ազատությունը սպասում են ռուս մեծ ժողովրդից:

Այս բանը հաճելի չէր գերմանացիներին: Նրանք հաշվում էին, որ հայերի պատճառով Ռուսաստանը կարող է ավելի հարավ իջնել, տիրել Հայկական բարձրավանդակին, ռազմական խոշորագույն և ճակատագրական նշանակութուն ունեցող այս հանգույցին: Իսկ սա գերմանական երեք Բ.-երին (Բեռլին, Բաղդադ, Բոմբեյ) վտանգում ու լրջորեն սպառնում էր իրենց վաղվա շահերին:

Գերմանացիները իրենց կարգին հաշվում էին, որ հայերից ոչ մի օգուտ չունեն բացի վնասից, և որպեսզի թուրքերը իրենց քաղաքական կյանքին լծվեն և իրենց կողքին կռվեն, համաձայն էին հայերի բնաջնջման:

Ու Թուրքիո ներքին գործերի նախարար և հայերի տեղահանության գլխավոր կազմակերպիչ ու ղեկավար Թալեաթ փաշան, անվախ կերպով հայտարարում էր.

— Եթե մեզ հաջողվեց հայությունն ամբողջապես չեղաքացնել, (դուք հասկացե՛ք ջա'րդել) լա'վ. եթե չհաջողվեց,

այնպէս անհնք, որ նրանք առնվազն մի 50 տարով ետ գնան
և ի վիճակի չլինեն մեր դեմ շարժվելու:

Զինվորական նախարար էնվեր փաշան ձայնակցում էր
նրան.

— Թուրքիայում է՛լ չեմ ցանկանում քրիստոնյաներ
տեսնել....:

Իսկ գերմանացիների կայսրը, Վիլհելմ Բ-ը, վաղուց
հայտարարել էր արդեն.

— Հարկավոր է բոլոր հայերին ոչնչացնել, բացի մեկից,
նրան էլ իբր նմուշ պահելու համար ազդաբանական մուզե-
յում:

ԹՈՒՐԳԱՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի հրդեհը հետզհետե ավելի տարածվում և
իր մոխրացուցիչ բոցերի մեջ էր առնում երկրներ ու ժո-
ղովուրդներ: Միլիոնավոր աշխատավոր մարդկանց արյունը
հոսում էր մի փոքրաթիվ խմբակի գերնյութական և գերազ-
դեցության քմահաճույքների պատճառով:

1915 թվի ապրիլ 11—24-ին թուրքական կառավարությու-
նը մի գիշերվա մեջ թե՛ Կ. Պոլսում, թե՛ գավառներում ապ-
րող հայ մտավորականներին և աչքի ընկնող ղեկավար տար-
րերին իրենց ընտանեկան խաղաղ բույնից ձերբակալել և
լցրել էր բանտերը: Խմբագիրներ, գրողներ, ազգային գոր-
ծիչներ, բժիշկներ, իրավագետներ, ճարտարագետներ, ու-
սուցիչներ, հոգևորականներ առանց խտրության և առանց
պատճառի արգելափակվել էին:

Թուրքական պառլամենտի դեպուտատ Գրիգոր Զոհրաբը,
հաջորդ առավոտն իսկ լսած լինելով գիշերվա ձերբակալու-
թյունների մասին գնում է Թալեաթի մոտ:

Մտավորապես հետևյալ խոսակցությունն է կատար-
վում.

— Փա՛շա, դո՛ւք եք հրամայել հայ մտավորականներին
բանտարկել, — հարցնում է Զոհրաբը:

— Այո՛:

— Փա՛շա, պատժական ո՞ր օրենքի հիման վրա հրա-
մայել եք այդ մարդկանց ձերբակալել, ի՞նչ է նրանց մեղքը:

— Պատերազմի հարկադրիչ օրենքի հիման վրա: Ժա-
մանակները մեզ պարտադրում են զգույշ լինել, որ անցյալի
հեղափոխական ցույցերը չկրկնվեն:

— Ի՞նչ եք լսել, ի՞նչ տեղեկություններ ունեք, որ զգու-
շության մասին եք խոսում: Հայերը իրենց որոշումը պաշ-
տոնապես հայտնել են կառավարութեանը, թե մնում են օրի-
նական քաղաքացիներն այս երկրի, հնազանդում են պետու-
թյան բոլոր հրամաններին և պատերազմի ընթացքում իբրև
թուրք բանակի զինվոր մասնակցում են իրենց կյանքի գնով
պաշտպանել թուրքական հայրենիքը:

— Խոսքը ուրիշ բան է, գործը ուրիշ բան: Հարկավոր է
զգույշ լինել, չենք ցանկանում, որ պատերազմի ընթացքում
ներքին բարդություններ ստեղծվեն:

— Ի՞նչ պիտի լինի ձերբակալյալների ճակատագիրը:

— Ոչի՛նչ էֆենդիմ, ոչի՛նչ: Նրանց կենտրոններից ներ-
քին գավառներն ենք ուղարկելու. իրենց հատկացված բնա-
կարաններում մի որոշ ժամանակ կապրեն, հետո նորից
կվերագրանան:

— Ձեզ մոտ գալու ժամանակ ճամփի վրա լսել եմ, որ
արդեն իսկ ուղարկվել են, ճի՞շտ է:

— Այո՛:

— Իսկ ի՞նչ պիտի լինի նրանց անտեր ընտանիքների
վիճակը, նրանք ի՞նչ միջոցներով կարող են ապրել, երբ
տան աշխատող ձեռքը բացակայում է:

— Ոչինչ, մի բան կխորհենք. առայժմ նրանք այստեղ
կմնան ու մի կերպ կապրեն: Նրանց մասին դուք անհան-
դիստ մի լինեք. մի կերպ յուրա կգնան, էլի:

— Բայց թշվառություններն ու մահացումներն անխու-
սափելի են և այս հետևանքների համար մի օր պատասխա-
նատու կլինեք, մի օր ձեզանից հաշիվ կպահանջեն:

— Իսկ ո՞վ է հաշիվ պահանջելու, — հեզնում և արհա-
մարհում է թալեաթը քմծիծաղով:

— Ե՛ս, փա՛շա, ե՛ս, — վրդովվում ու գոռում է Զոհրաբը զայրացած նրա անպատկառ համարձակութունից:

Հայ դեպուտատը անզոր կատաղությամբ լցված բաժանվում է Թալեաթից և ներքին գործերի նախարարության շենքից հազիվ մի քիչ հեռացած թուրք երկու ոստիկաններ հայտնում են իրեն, որ ձերբակալելու հրաման ունեն:

— Բայց ես դեպուտատ Զոհրաբն եմ, — առարկում է նա: — Օրենքով անձեռնմխելի եմ, քանի դեռ իմ մասին կառավարական հատուկ հայտարարություն չկա:

— Մենք այդ գիտենք, համեցեք մինչև ոստիկանատուն, այնտեղ կարող եք խոսել, մեզ հրամայված է ձեզ ձերբակալել:

Գնում է Զոհրաբը, գնում է և մեկ էլ ետ չի վերադառնում:

Մյուս կողմից մի այլ հատկանշական խոսակցություն կատարվում է գերմանական դեսպանատանը:

Բանաստեղծ բժիշկ Ռուբեն Սևակի կինը մի գերմանուհի էր: Սևակն ուսանողության ժամանակ սիրահարվել ու ամուսնացել էր նրա հետ: Երբ բանաստեղծին ձերբակալում են, կինը հաջորդ օրն իսկ գնում է գերմանական դեսպանատուն, այն մեծ հավատով, որ գերմանական դեսպանը մի խոսքով կարող է փրկել իր ամուսնուն: Բայց Սևակի կնոջ բոլոր թախանձանքներն ու կոշերը անլսելի են մնում: Գերմանուհին տեսնելով, որ զուր է օգուտ սպասել, ջղադրգրոված, հուզված բացազանչում է:

— Չե՛ք ուզում ինձ օգնել, չեք ցանկանում մարդասիրական մի բարի գործ կատարել նրա համար, որ դո՛ւք էլ համաձայն եք կատարված ոճրի հետ: Բայց ձեզ հանդիսավոր կերպով հայտարարում եմ այստեղ, որ սրանց (նա ցույց է տալիս մասնավոր նպատակով, գութ շարժելու հույսով հետը վերցրած երկու փոքրիկներին) սրա՛նց պիտի կրթեմ ու դաստիարակեմ մի այնպիսի ոգով ու գաղափարով, որ վաղը վրեժ լուծեն իրենց հոր սպանիչներից:

Ասում է, և ամբողջ մարմնով դողդողալով դուրս գալիս դեսպանատնից:

Թուրքահայ բոլոր մտավորականները քշվում են դեպի Այաշ և մինչև Տիգրանակերտի խուլ ու մութ անկյունները և այնտեղ մահացվում անլուր տանջանքներով:

Թալեաթը իր վալիներին (մարզային շրջանային պետերին) ուղարկում էր գաղտնի ու խիստ մի հրաման (այդ հրամանագրի պատճենը պատերազմից և Թուրքիո պարտությունից հետո երևան հանվեց ու հրատարակվեց), մի հրաման, որ սպառնում էր կյանքով պատժել բոլոր նրանց, որոնք ճշտորեն չեն գործադրում նրա մեջ հիշված բոլոր կետերը: Մտավորապես հետևյալն էր հրամանագրի բովանդակությունը.

«Բոլոր հայերը, առանց տարիքի, սեռի խտրության տեղահանել ու քշել դեպի Միջագետք:

«Հայերի շարժուն և անշարժուն հարստությունը գրավել պետության դանձի օգտին:

«Զխնայել ոչ մեկին, ծերից մինչև օրորոցի երեխան աքորել և կաշառքով մարդ չազատել:

«Հայերի իսլամանալու խոստումներին կարևորություն չընծայել:

«Աշխատել որ տեղահանված հայերը այնպիսի պայմանների մեջ դրվեն, որ նրանք քաղցից ու համաճարակներից մահանան:

«Միայն թույլատրվում է գեղեցիկ կանանց վերցնել իբրև կին և թուրքացնել նրանց»:

Ներքին նախարարից եկած այս հրամանը, անշուշտ, կետ առ կետ գործադրվում էր գավառների մեջ: Թուրք տգետ ժողովուրդը թունավորված իր մեծերից, անօրինակ գազանություններ էր գործում: Տեղահանությունը նախապես սկսվում է բուն իսկ Հայաստանից: Հայկական անթիվ գյուղեր կողոպտվում, կոտորվում ու հրդեհի բոցերով մոխրանում են: Գետերի մոտ ապրող հայերը ջարդվում ու ջուրն են թափվում: Լեռների մոտ գտնվող հայերը առաջնորդվում են դեպի խոր ձորերը ու այնտեղ սպանվում: Եկեղեցիների մեջ

ապաստանած հայերը եկեղեցիով միասին այրվում, ջնջվում են, իսկ թուրքերը քեֆ են անում, հրճվում զոհերի վրա:

...Թուրքական այս սարսափների բոթը տկար և աղուտ կերպով հասնում էր մինչև մեր կողմերը. Կ. Պոլսի մտավորականների անհետացումի գույժից անկախ, լսել էինք նաև հուլիսի մեջ Պոլսում կախված 20 հայերի մասին: Այս բուրր մեզ անհանգստացնում էին և շատ-շատերը մտահոգ իրենց հերթին էին սպասում:

Ես իմ ծննդավայրից 50 կիլոմետր հեռու Ռոդոստո քաղաքի հայկական վարժարանն էի հաճախում: Հարկ էր, որ սեպտեմբերի 10-ին այնտեղ լինեի, բայց արդեն սեպտեմբերի 20-ն էր մոտենում և դեռ չէի մեկնել: Հայրս արգելում էր ինձ: Չէի հասկանում ես նրա հաշիվները, սակայն շուտով համոզվեցի, թե ինչո՞ւ հայրս չէր համաձայնում ինձ իր քովից հեռացնել: Սեպտեմբերի 22-ի մի երեկո, հորս արհեստանոցը գնացի. փակ էր: Այնտեղ, փողոցում կանգնել էին հայ տղաներ և լրջությամբ, մտահոգ կերպով խոսում էին: Նրանք ինձ ասացին, թե երկու ոստիկաններ հորս աշխատանքից վերցրել տարել էին:

Շուտով պարզվեց, որ Մալգարայի հարուստ, զարգացած և աչքի ընկնող մարդիկ նույն ժամին ձերբակալել ու բանտարկել էին: Ուրեմն, հերթը մեզ էր հասել: Հարկ էր պատրաստվել. պարզ էր, որ տեղահանվում էինք. բայց թե ո՞ւր էինք գնալու, ի՞նչ էր լինելու մեր ճակատագիրը, այդ չգիտեինք:

Մեր տունը, ինչպես ամեն հայի տուն, լիքն էր ամեն տեսակ կահ-կարասիներով, գորգերով, թանկագին առարկաներով, արժեքավոր ինչքերով: Թեև պատրաստվում էինք, բայց չվարել մնացել էինք, ո՛րը վերցնենք, ո՛րը թողնենք: Ամեն բան մեզ անհրաժեշտ էր թվում և մայրս ոչ մի բանից չէր ուզում հրաժարվել: Վերջապես մանրագնին քննությունից հետո բավարարվեց երկու հակ կապելով՝ ճերմակեղեն, զգեստ, ձմեռնային վերարկու, գորգ, մի քանի պնակ, ջրի

բաժակ, պղինձ և ալյն: Մայրս բաց էր անում որմնադարանները, քաշում է զարդասեղանի պահարները, դիտում էր թողած կերպասները, զգեստները, սպասները, կարի նոր մեքենան, պատի շքեղ ժամացույցը և ալյն ու ցավում այդ բոլորի վրա: Դրանք բոլորը քրտինքով էին վաստակվել, իսկ այժմ պատրաստ թողնում էինք թուրքերին, որ վայելեն:

Առավոտյան լույսը դեռ չէր բացվել, մթնշաղում մի սալ կանգնեց մեր դռան: Դուռը թակեցին: Մեր սրտերը ալեկոծվեց և մեր աչքերում արտասուք փայլեց: Դուռը բացեց հորեղբայրս: Կամպի լույսով նշմարեցինք, որ սալը մի խեղճ բան էր: Մայրս տեսնելով, որ այդ սալի մեջ մենք ոչինչ չենք կարող դնել, դիմեց ոստիկանին և խնդրում էր մի ուրիշ սալ ևս տալ, որ կարողանանք գեթ մի քիչ ամենանհրաժեշտ իրեղենները վերցնել տնից: Ոստիկանը սակայն, անհող ծիծաղում էր և հրամայում անմիջապես տնից դուրս գալ: Հորեղբայրս հակի մեկը շալակած ուղղում էր դուրս գնալ, սալի մեջ տեղավորել, բայց ոստիկանն արգելեց: Բոլորս հիասթափվել, քարացել էինք: Քչից քիչն էլ մեզ չէր տրվում:

— Ի՞նչպես կարելի է, — խոսեց մայրս վրդովված, — ինչպե՞ս կարելի է առանց այս երկու հակերին ճամփա գնալ: Նս երեխաներ ունեմ, վերջապես մեր ապրանքից մի ձեռք փոխնորդ վերցնելու իրավունք չունե՞նք. տեսեք տունը լիքը թողնում ենք ձեզ, թո՛ւյլ տվեք, որ գոնե այս փոքրիկ մասը հետներս առնենք:

— Քայլելու անկարողները միայն հարկ է, որ սալը նստեն, մյուսները պետք է ոտքով գնան, սալը այս նպատակով տրվել է ձեզ, և ոչ թե կահկարասի լցնելու համար: Կո՛ւմ եք, դե՛ շուտ, դո՛ւրս եկեք:

Ոստիկանը հորեղբորս վրա զայրացած, թևից բռնեց քշեց փողոց: Մյուս կողմից ատրճանակը մեզ ցույց տալով, սպառնում էր կրակել, եթե անմիջապես տանից դուրս չգայինք:

Ոչի՛նչ, բացարձակ ոչի՛նչ, միայն մեր վրայի հագուստներով տանից դուրս եկանք, նույնիսկ հացի կապոցը, որ

երեխաները առավոտը մի պատառ բան ուտեն, չթույլատրվեց մեզ:

Աղվամութին սալը փողոցներից ճոնչելով անցնում էր: Ահավոր մի երկյուղ էր ընկել մեր սրտերը: Պատուհանների վարագույրների ետևից, մնացող հայերը վախկոտ մեզ էին դիտում: Ուրիշ փողոցներից նույնպես սալերի ճոնչոց և հեծկլտոցներ էին լսվում: Մեզ քաղաքից դուրս հանեցին և հողմաղացների առաջ, ճամփի վրա սպասեցնում էին:

Մենք մրսում էինք: Մայրս ողբում ու անիծում էր: Ի՞նչ պիտի անեինք: Չմեռը դեռ նոր էր գալու, իսկ մենք ոչինչ չունեինք: Կամաց-կամաց լույսը բացվեց: Մեկ էլ տեսանք, որ ղինյալ ոստիկանների օղակի մեջ բերում են մեր հայրերին: Նրանց միացրին մեզ: Մահվան թափորի նման առաջ շարժվեց մեր քարավանը: Առաջին խմբով տեղահանվում էին մի 80 ընտանիք: Հայրս ցավով ու զարմանքով նշմարեց, որ մեր սալում դրված ոչինչ չունենք: Ուրիշները մի-մի փոքր կապոց հաջողել էին իրենց հետ վերցնել: Մենք լուռ իրար աչքերի մեջ էինք նայում և տխուր հայացքներով խոսում միայն: Մեր հանդեպ շատ խիստ էր եղել ոստիկանը. նրան այդպես էր հրամայվել: Մենք հետո հասկացանք դրա շարժառիթը: Պատճառն այն էր, որ զորավար Գենեկը բնակվել էր մեր տանը, մեր դռան առջև ցույցեր էին տեղի ունեցել բալկանյան պատերազմի ժամանակ, երկու տարի առաջ: Թուրքերը մեր ընտանիքը համարելով մոլեռանդ բուլղարացիներ, որ օգնել էր իրենց թշնամուն, այժմ գաղթի ժամանակ շարաշար վրեժ էին լուծում մեզանից ու պատժում:

Հայրս մի խոր հառաչանքով ասաց.

— Ուրիշ բազմաթիվ ընտանիքներ աշխատեցի փրկել, իսկ իմ ընտանիքը ես ինքս քանդեցի:

Հայրս հիշեց նաև զորավար Գենեկի տված պաշտոնաթուղթը և վախով ասաց.

— Եթե թուրքերի ձեռքը ընկնի, մեզ ընտանիքով անմիջապես հենց այստեղ կսպանեն:

Մայրս հանգստացրեց նրան.

— Թուրքերը թղթի, գրքի հետ գործ չունեն, այդ մասին քնավ հոգ մի անի: Նրանց գործը փողի, ինչքի հետ է:

Մեր քարավանին հաջորդել էին ուրիշ քարավաններ և 800 ընտանիք հայությունից հազիվ թողել էին 30 ընտանիք:

Մեր վիճակը առաջին օրից իսկ հուսահատական էր: Զրկվել էինք ամեն բանից և զգում էինք, որ դնում ենք ուղիղ դեպի մահ: Իսկ թուրքերը մի ընդհանուր բանաձև էին գտել հայ ժողովուրդը խաբելու, սին հույսերով օրորելու.

— Ինչո՞ւ եք վախենում, ինչո՞ւ եք մտահոգվում: Կառավարութայունը ձեր մասին է մտածում, ձեր բարին է ցանկանում: Այս կողմերը պատերազմ է լինելու, բանակներ են իրար բախվելու, վնասվողը դո՛ւք կլինեք: Զեզ տանում են ապահով վայր, այնտեղ կտան տուն, խանութ և գործ: Աշխատեցե՛ք ձեզ համար և ապրեցեք ինչպես որ կամենում եք. էլ ի՞նչ եք ուզում...

Եվ քիչ էր մնում, որ մենք «երախտագետ հայախնամ թուրք կառավարությանը», մեր շնորհակալությո՞ւնը հայտնեինք նրանց ցույց տված «հոգածության» և «վեհանձնության» համար...

ՄԻՋԱԳԵՏՔԻ ԱՆԱՊԱՏՆԵՐՈՒՄ

Զարագործը խավարն է սիրում: Մենք թեև Ռոդաստո հասել էինք երեկոյան կողմ, բայց մեզ կանգնեցրին բաց դաշտում և չէին թողնում քաղաք մտնել: Դժբախտությունը այն էր, որ մեր վերև երկնակամարը ծածկվել էր ամպերով, ո՛չ մի աստղ չէր երևում և փայլատակում, որոտում էր երկինքը: Շատերն ամբողջ ճանապարհի ընթացքին քայլել էին հեխհե, հոգնել ու քրտնել և այժմ մրսում էին: Սեպտեմբերյան երեկոն զով էր: Շուտով տեղատարափ անձրև սկսվեց: Ոստիկանները մեզ զգուշացրին մեր տեղերից շարժվել: Բոլորս մինչև մեր ոսկորները թրջվել էինք: Մայրս մաշվում, հատնում էր: Փոխնորդ չունեինք: Երկինք ու երկիր բարկացել էին մեզ վրա, չգիտես մեր ո՞ր մեղքերի համար և իրենց կատաղությունն էին թափում մեր գլխին: Կես գիշերի մոտ

ձիայն մեզ թույլատրվեց քաղաք մտնել: Մեր պահակախումբը զորացրել էին նոր ոստիկաններով, որպեսզի քաղաքի միջից անցնելիս փախչողներ չլինեն: Իմ պապս, որ այս քաղաքում էր ապրում, արդեն ավելի շուտ տեղահանել էին:

Մեր քարավանը առաջնորդեցին ուղիղ նավամատուց: Ժողովուրդն իրար վրա տեղավորեցին երեք մեծ առագաստանավերի մեջ: Գլանակ ծխելը խստորեն արգելվեց: Անգլիական ընդծովյաներ ման էին գալիս Մարմարայի ջրերում և հսկում էին զինվորական փոխադրությունները: Ամբողջ գիշերը ճամփորդել և հաջորդ օրը ժամը 1-ին հասել էինք Կ. Պոլիս: Մինչև արևմայրը Պոլսի առաջ կանգ առանք: Մենք երկու օր էր որ «ողորմածությամբ» ապրում էինք. մեզի ծանոթ քաղաքացիներ իրենց քչից մեզ էլ բաժին էին հանում և մենք էլ մի պատառ բան էինք ուտում:

Վերջալույսին նպաստավոր քամի էր փչում ու մեր երեք առագաստանավերը ուղևորվեցին դեպի Իզմիդ: Կ. Պոլսից բավական հեռացել էինք, մոտավորապես գտնվում էինք Մալտեպեի մոտերը: Քամին քանի գնում սաստկանում էր, սակայն, և մեր առագաստանավերը անսահման ծովի վրա փոքրիկ շյուղերի նման օրորվում էին: Ալիքները հետզհետե ավելի բարձրանում, ձյունակատար լեռների նման փրփրաբաշ դեպի ափունք էին վազում: Մեր նավերը մեկ վեր էին թռչում, կարծես ջրից կտրվում, օդի մեջ բարձրանում, մեկ ծովի խորն էին իջնում, կարծես հատակը գնալու նպատակով, կարծես այդ պահին ծովի բոլոր ջրերը պիտի թափվեին մեզ վրա: Ծովի ալեկոծության անվարժ մալգարացիները, առանց բացառության տկարացել էին, փռվել հատակի վրա և չէին կարողանում աչք բաց անել: Մեր առագաստանավի վարիչը, մի փորձառու հույն մարդ, մեզ պահեց ծովի բացերը և իր արիությամբ փրկեց մեր կյանքը: Մյուս երկու առագաստանավերը ճարահատ դեպի ափունք էին դիմել և ընկղմել: Մի քանի ծերեր խեղդվել էին ու բավական ինչքեր կորել:

Մենք հաջորդ օրը Իզմիդ հասանք: Այստեղ կարողացանք մի քիչ ուտելիք ձարել: Շուտով մեզ նստեցրին բեռնա-

տար վագոնների մեջ և քշեցին դեպի Կոնիա (Իկոնիա): Մեր ճանապարհի վրա գտնվող հայաշատ քաղաքները իրենց հայ բնակիչներից ամայացել էին, Իզմիդ, Բիլեջիք, Էսքիշեհիր, Աֆիոն Բարահիսար, Քյոթահյա, ոչ մի հայ չէր մնացել: Երկաթուղին գործում էր հայերի համար: Ամբողջ գնացքներ՝ 40—50 վագոններով լիքը ժողովուրդ՝ փոխադրում էին դեպի հարավ, դեպի Միջագետքի հրակեղ անապատները:

Մենք առաջին անգամ հայ գաղթականների խայտաբղետ վրաններին հանդիպեցինք Էրոյիլում, որ գտնվում է Կոնիայից դեպի հարավ: Հայ ժողովուրդը գորգերով, կարպետներով, ծածկոցներով, ինչ որ ձեռքը ընկել էր վերջապես, լարել էր վրան ու տակը մտել: Խղձալի էր այդ տեսարանը և անհարմարություններով, տանջանքներով լի: Երեկ շքեղ տների տեր և ամեն տեսակետով հանդիստ ապրող մարդիկ, այսօր շարշարվում էին այդ վրանների տակ, խոնավ դետնի վրա: Մենք այստեղ գտանք իմ մոր ծնողներին: Պապս բավականին հարուստ մարդ էր, թուրք ոստիկաններին կաշառք էր տվել և խնդրել, որ մինչև մի վրանի պատրաստութունը թույլատրվի իրեն էրեյիլում ապրել: Պապիս ընտանիքն էլ բաղկացած էր 7 հոգուց: Նա վարձել էր մի սենյակ թե՛ վրան պատրաստելու և թե՛ մանավանդ մեզ հանդիպելու հույսով: Մեր երկու ընտանիքները միացան այստեղ. թեև 14 հոգի էինք լինում, բայց չէինք ցանկանում բաժանվել միմյանցից: Պապս հաշվում էր, որ մենք շուտով կկոտորվենք քաղցից, քանի որ նյութական միջոցներ չունենք: Սրանից անկախ, մահվան ճանապարհին մարդիկ ավելի մոտենում են իրար:

Անօրինակ թանկություն էր: Էրեյիլուց մինչև Տարսոն (Թարսուս) երկու կառքի համար իբրև վարձ վճարել էինք 20 հնչուն ոսկի: Կառավարական գանձ էր պետք, որ այդ ճանապարհին մի կերպ բավեր: Մի քանի օրվա ճամփորդությունից հետո հասել էինք Տարսոն, համարյա կես գիշերին: Մինչև մեր վրանի լարելը, մութի մեջ, տեղավորվելը արդեն կես գիշերն անցել էր: Նոր էինք պառկել, որ մի քիչ քնենք. հանդստանանք, մեկ էլ տեսնենք մեր վրանի ցիցերը քան-

դուժ էին դրսից և մեր բոլորած և վրանը ծալում է իր լայն փեշերը: Մի խռպոտ ձայն անդադար հնչում էր.

— Կալխն, յղըն, դիտն:

(Վե՛ր կացեք, քանդեցե՛ք, գնացե՛ք):

Մեր բոլոր պաղատանքները, որ գոնե մնանք, մի քիչ հանգստանանք, դուր անցան: Ճարահատ հավաքեցինք ամեն ինչ մի մոմի լույսով և մեր իրեղենները շալակած, մթում, անծանոթ ճանապարհներով, ընկնելով-բարձրանալով, գնացինք կայարան: Մինչև լույս մեզ պատի տակ, ոտի վրա սպասեցրին այդտեղ: Ի վերջո ցույց տվեցին պարապ վագոններ, բարձրացանք ու նստեցինք: Կեսօրվա մոտ միայն շոգեկառքը շարժվեց ու սլանում էր, հեռում, վշմշում: Տեսանք դժբախտ Ադանան, տեսանք Սիհունը, անցանք նրա կամուրջով, հասանք Օսմանիե:

Օսմանիեն մի գյուղ է Տավրոսյան լեռների ստորոտում: Նրա մոտ տարածված ընդարձակ մի դաշտագետին, մի 20 կիլոմետր երկարությամբ ու 10 կիլոմետր լայնքով, ամբողջությամբ ծածկվել էր հայ գաղթականների վրաններով: Իսկ Տավրոսի բարձր կատարին ամուր նստել էր Կիլիկյան երբեմնի հզոր թագավոր Լեոնի բերդը: Նա վերևից տխուր նայում էր այժմ իր դժբախտ ժողովրդի վրա: Այդ ժողովրդից շատերը չէին իմանում, որ այդ հողերի վրա, 600 տարի առաջ իշխել էին հայ թագավորներ, շարժվել էին հայ բանակներ, իսկ այսօ՛ր: Ո՞վ է հասկանում պատմության խաղերը:

Հայրս մեր հասած գիշերն իսկ գնացել էր Օսմանիե հաց ճարելու նպատակով: Վերադարձին մոլորվել էր և ամբողջ գիշերը վրաններում ման եկել, մեզ փնտրել, բայց չէր հաջողել գտնել: Նա առավոտյան մեզ միացավ և սրտի ճրմլումով պատմում էր անհամար ժողովրդի անհամար թշվառության մասին:

Օսմանիեն ահաբեկում էր ամեն մի հայի: Նա առաջին բազմամարդ գաղթականն էր: Թուրքիո ամեն կողմից բազմահազար հայ ժողովուրդը խռնվել էր այդտեղ: Զրի և մանավանդ հացի տագնապը աննկարագրելի էր: Խեղճ Օսմանիեն հազիվ մի երկու փուռ ունեւ, ինչպե՛ս կարելի էր այդ

քաղմության հաց հասցնել: Թուրքական կառավարությունն ամենաշնչին շափով չէր անհանգստանում, չէր կանխամտածում հասնող ժողովրդին գեթ փողով չոր հաց տալու մասին: Մարդիկ օրերով սոված ման էին դալիս: Չարաշահությունը առասպելական համեմատությամբ աճել էր: Մի ղուրուշնոց կիլոգրամ հացը վաճառվում էր մեկ միջիդեի (20 ղուրուշի), երբեմն նույնիսկ երկու միջիդեի: Ո՞վ կարող էր այդ գնով հաց գնել և քանի՞ օր կարելի էր դիմանալ: Իսկ հետո՞... հետո՞...

Այս «հետո»-ն ցնցում, վերք է պատճառում մարդկանց ուղեղներին:

Իսկ ջուրը բավարարում էր ժողովրդին, երբ հոսուն գետ էր: Զրհորն ու աղբյուրը ծով պահանջի հետ համեմատած մի կաթիլ էին: Մի բաժակ ջրի համար կռիվ, արյունահեղություն էր լինում: Մարդիկ ամբողջ գիշերը ոտի վրա սպասում էին հերթի, որ կարողանան մի բաժակ ջուր ստանալ:

Օսմանիեից սկսած ամեն մի կայան, այս հացի ու ջրի տագնապը խորովեց, տոշորեց հայ գաղթականներին և շատեր փողը իրենց ձեռքում բռնած սովամահ եղան, և այսպես հազար-հազարավորներ զոհվեցին: Անապատի միջից հոսող հայկական հարազատ Եփրատի տաք ու պղտոր ջուրն անգամ խնայվեց ծարավով պապակվող հայերին: Երբեմն մեր ուղին Եփրատին զուգահեռ էր լինում, իսկ բարկ արևի տակ վառվող մարդկանց թույլ չէին տալիս որ ջուր խմեն. ո՞վ քարավանից մի քիչ հեռանում էր, անմիջապես արաբական փայտազնդերով բրածեծ սպանում էին: Մի անգամ հայրս ինձ համար 5 ղուրուշ տվեց և արաբ ջրավաճառից ես 10 գդալ ջուր խմեցի, երբ 50 մետր հեռվից Եփրատն էր հոսում:

Օսմանիեում մենք մնացինք մի երկու օր: Հաջորդ երեկոյան լուր տարածվեց թե՛ «յարն սևքիաթ վար» (վաղը առաքում է լինելու): Այս «սևքիաթ» բառը առաջին անգամն էի լսում, բայց նրա առաջին «սև» վանկը սևով շրջապատեց իմ թարմ, պատանեկական ուղեղը, և ես բնազդաբար զգացի, որ հաջորդ օրը վատ բան է պատահելու:

Հաջորդ առավոտ «սևքիաթի» վարիչը, թրքատիպ իսկա-
 փան մի ոճրագործ, սև ձիու վրա նստած, մի ձեռքում ատրը-
 ճանակ, մյուսում՝ կաշյա խարազան բռնած, թռչում էր մեկ
 վրանից մյուսը, մեկին խարազանում, արյունլվա թողնում.
 մյուսի վրա ձին քշում, տրորում. մի երրորդի վրա հարձակ-
 վում, գոռում, ահ ու սարսափ էր տարածում: Ա՛յն հայերը,
 որոնք ընկրկում էին, չէին ուզում մեկնել, քանի որ նրանց
 փոխադրության ո՛չ մի միջոց չէին տալիս թուրքերը, իրենք
 էլ ի վիճակի չէին իրենց բեռները շալակել, կին ու երեխա-
 չով երկար ճանապարհ քայլել, սրանց գլխին կրակ էր թա-
 փում ոստիկանապետը. իսկ ոստիկանները իրենց պետից
 քաջալերված հրի ճարակ էին դարձնում, վառում հայերի
 վրանները: Ծուխ ու բոց էր բարձրանում ամեն կողմից, օգ-
 նության աղաղակներ էին լսվում, աղեգալար ճիշեր ու
 հեծկլտոցներ թնդացնում էին օդը, աղոթքն ու նզովքը
 խառնվել էին իրար, մարդիկ իրենց սև ճակատագիրն էին
 անիծում: Հրդեհի տրված վրանների տերերը խելագարվելու
 աստիճան հուզվում ու խռովում էին, գիշերը ո՛ւր պետք է
 քնեին, ի՞նչ պետք է անեին, ինչպե՞ս կարելի էր ապրել, երբ
 ամեն բան մոխրի էր վերածվել:

Մենք այդ օրը փոխադրության ո՛չ մի միջոց չունեինք:
 Մեր երկու ծերերն էլ (մորս պապն ու տատիկը) տկարացել
 էին: Արդեն նրանք մոտավորապես 80 տարեկան լինելով,
 պարզ է որ այդ պայմաններին չէին կարող դիմանալ: Երե-
 խաներ ունեինք, չէր կարելի ոտքով ճանապարհ գնալ: Իսկ սև
 ձիավորը հասել էր մեր վրանի մոտ և հրամայում էր մեկնել.
 մեկնել մեզ համար նշանակում էր ճանապարհին մնալ,
 տանջվել ու մահանալ: Մեկ էլ տեսնենք հրեշը սկսեց խա-
 րազանել մեր երկու ալևորներին: Բոլորս հուզվել, վրդովվել
 էինք: Այդ միջոցին մեր կողքի վրանից աղմուկ բարձրացավ:
 Երկու հայ վիճում էին մի էշի համար: Մեկը ասում էր թե
 ի՛նքը ավելի շուտ է վարձել, մյուսը պնդում էր թե ի՛նքն է
 վարձել և նույնիսկ կանխավճար տվել: Էշը չէին կարողա-
 նում բաժանել: Էշի գինը մի ոսկի չէր լինում, հայերը երկու
 ոսկի երկու օրվա ճանապարհի համար վարձք էին տալիս,

այն էլ ձեռքից ձեռք հափշտակում էին: Այս կռվին վերջ տվեց ոստիկանապետը վիճողներից մեկին սպանելով: Նա այժմ ժպտում էր, որ վեճը դադարեցրեց: Իր «սխրագործության» համար գովվում էր մոտը կանգնած շավուշին:

— Տե՛ս, ինչպես անմիջապես լուծեցի սրանց վեճը:

Նույն գիշերն իսկ օրվա դեպքերից խրատված, հայրս ու մորեղբայրս գաղտնի՝ շրջակա գյուղերը գնացին և 5 ոսկով հաջողել էին մի սայլ վարձել մինչև Իսլահիե երկու օրվա ճանապարհ: Հաջորդ օրը մենք ճամփա ելանք: Մինչ այդ ոստիկանապետը ավելի էր կատաղել, ոստիկանները ավելի գազանություններ էին գործում: Դժողքը երկնքից իջել էր երկիր, անպատմելի էր հայերի տառապանքն ու նրանց տեսած սարսափները թուրք բորենիներից:

Օսմանիեի դաշտից դիտում էի Տավրոսի վրայով անցնող օձագալար ճանապարհը, որ գազաթից մինչև ստորոտը մրջուների նման լիքն էր ժողովրդով:

Երբ Տավրոսի կատարն էինք բարձրանում, հայրս սրտի մորմոքով ապաց.

— Ափսո՛ս մեր լավ ժողովրդին, ափսո՛ս մեր անցյալի հերոսական քաջություններին... Միթե չէի՞նք կարող ապրատամբվել...

Այդ վայրերում ապրող Սվեդիո հայերը ըմբոստացել և 40 օրվա դիմադրությունից հետո ազատվել էին այն միջոցով, որ հայրս ցույց էր տալիս մեզ:

Մինչև Տավրոսի կատարը բարձրանալը կեսօրից ավելի տևեց: Հետո իջանք ցած, ուր Թաղթաքեռիցում էր: Այդ գիշերը այդտեղ էինք մնալու և առավոտյան մեր ճամփան պետք էր շարունակեինք: Յուրտ էր, դողդողում էինք: Արդեն ձմեռ էր և ձյունակատար լեռներից իջնում էին սառ քամիներ: Վրանի տակ վատ էր: Բավարար չափով ծածկոց, ինքնապաշտպանության միջոցների չունեինք: Այդ գիշեր ցրտից չկարողացանք քնել:

Հաջորդ առավոտ արդեն պատրաստվում էինք մեկնելու: Մի հարբած ոստիկան հարձակվեց տատիս վրա: Զարկեց գլխին և տատիս կարմիր արյունը դեմքը ներկելով հոսեց

ցած: Այս դեպքի պատճառն այն էր, որ մեր վրանի լարած տեղը ուրիշ մի հայ եղել էր, որ հարբած ոստիկանին խոստացել էր մի ժամացույց նվեր տալ: Նա մեկնել էր առանց իր խոստումը կատարելու: Մենք նույն վայրում վրան էինք լարել առանց դիտենալու, ոստիկանը իր նվերի ուշացման համար վրեժ էր լուծում մեզանից: Ես ու ինձ հասակակից երկու մորեղբայրներս — 10—15 տարեկան — սկսեցինք քար թափել ոստիկանի վրա: Մենք հուզումից լալիս էինք և անդադար քարկոծում: Մեր աչքի առաջ ո՛չ մի վտանգ չէր երևում, ո՛չ մի հաշիվ չէինք անում: Մեր մանկական հոգիների մեջ վերածնել էր ըմբոստության զգացումը և մենք պատժում էինք չարագործին: Ոստիկանը փախցրինք: Բայց մեծ մորեղբայրս կռահելով անխուսափելի վտանգը, ինքը գնացել էր ոստիկանատուն, բացատրել էր մեր երեխայական «խենթությունը», երկու ոսկի դրել ոստիկանապետի ափը ու խոստացել անմիջապես ճամփա ելնել: Մեր մեկնումից հետո, լսեցինք, որ մի քանի ոստիկաններ եկել մեզ էին հարցրել, փնտրել ու հայհոյանքներով հեռացել:

Նույն օրը երեկոյան հասել էինք Իսլահիե: Մի՛շտ նույն ահավոր պատկերը, մի՛շտ նույն ահավոր բազմությունը, հացի ու ջրի նո՛ւյն տագնապն և հետզհետե աղքատացող, ցնցոտիապատ ժողովրդի թշվառ վիճակը: Այստեղ Զոհրաբը մի խրճիթի պատի վրա գրել էր.

«Զո՛րհաբն էլ այստեղից անցավ»:

Իսլահիեում մեկը մյուսի հետևից մահացան մեր 80-ամյա պապն ու տատը: Նրանք մեր առաջին զոհերն էին: Թաղեցինք իրար կողքի: Նրանք մի բարձի վրա ապրել էին և մի բարձի վրա էլ ննջեցին հավետ: Այսպես մեր ճանապարհը միշտ շարունակում էինք ամեն օր նորանոր հոգսերի, տառապանքների, մղձավանջների ենթարկվելով: Քանի մեր ուղին մոտենում էր անապատին, այնքան անտանելի և անպատում էր դառնում մեր կյանքը: Թուրքերը առանց հանգիստ տալու մեզ, անընդհատ քշում էին առաջ: Ոչ մի շահ, եկամուտ չունեինք. իսկ սրա փոխարեն ամեն օր կաշառք էինք տալիս, փոխադրության համար շափազանց սուղ

գնով միջոցներ էինք ստեղծում, սննդի համար անհաշիվ ծախսեր էինք անում և այս բոլորից հետո հաճախ կողոպտվում: Ո՞ր մեծահարուստը կարող էր դիմանալ, ի՞նչ գումար պետք էր ունենալ, որ անսպառ լիներ: Ու ինձ ցույց տվին մի հայ մարդ, որ մուրացկանների անծայր շարքում նստել, գետին էր նայում ամոթից, և ուրիշների պես լալով, աղաչելով, ձեռք երկարելով, վիզ ծռելով մի պատառ հաց չէր խնդրում, բայց պարզ երևում էր, որ սոված էր. նրա դեմքի դժգունությունն ու աչքերի նվաղումը մատնում էին այդ: Այդ մարդու համար ինձ ասացին, որ նա Ադանայի ամենահարուստ հայն էր:

Իմ հիշողության մեջ Քաթման, Ազեզը, Բաբը անջնջելի կմնան, բայց ավելի ահավոր ու աննկարագրելի էր հայերի վիճակը Միջագետքի անապատում, Մեսքենե, Դիպսի, Աբուհարար, Համամ, Ռակկա, Սապկա և վերջապես Դերզոր: Սրանք պարզ ու անիմաստ անուններ չեն և միայն այս վայրերում եղած թուրքահայ գաղթականները կարող են հասկանալ ու ըմբռնել այս անունների ամբողջ դարհուրանքն ու օղբերգությունը...

Անապատ...

Վերը այրող երկինք, որ կրակ է մաղում ցած, իսկ վաթը՝ միապաղաղ, անսահման ավազածով: Ո՛չ ծառ, ո՛չ ծաղիկ, ո՛չ գյուղ, ո՛չ քաղաք, ո՛չ աղբյուր և ո՛չ նույնիսկ հասարակ պատ, որի կարծր քաշել եմ ես ավելի քան երեք տարի վրանի տակ և մեծ ցանկությունս սպասել ա՛յն երջանիկ օրվան, որ մի հեղ թիկունքս կտամ ամուր պատին և մեջքս կուղղեմ:

Անապատի դժոխային տաքն ու կուրացուցիչ փոշին հավելյալ շարիք էին մեզ համար: Մեր աչքերը արյան կարմիր շճերի էին վերածվում և դիշերը աչք խփել չէինք կարողանում: Այրվում, վառվում էր մեր կոպերը և ցավից վրաններից դուրս գալով մեր դեմքը ծածկած մեր ափով, շրջում ու շալիս էինք ժամերով ու ժամերով: Այս աչքերի ցավից հարցուրարվոր հայեր կուրացան:

Անապատի մեջ սնունդը բոլորովին անհետացել էր: Նախ

փող ունեցողներ համարյա չէին մնացել ու բոլորը սնվում էին խոտերով, արմատներով և նույնիսկ ձիու աղբի միջից հավաքած դարու հատիկներով: Իմ մեծ մորեղբայրը, Պարույր Տոնիկյան, որ Կ. Պոլսի «Հայրիկյան» վարժարանն էր ավարտել, այդ տեսարաններից հուսահատվում, սահմրուկում է, և ուղեղի ցավից մի քանի օրվա մեջ մեռնում: Երբ թշվառների բազմությունը տեսնում էր, որ արաբ թափառական խաշնարած էնեղե ցեղն էր գալիս իր հազարավոր ոչխարներով, ուղտերով. կամ մորեխների բանակներ էին անցնում միլիոններով ու միլիոններով և արևը խափանում, բոլորի սիրտը սուգն էր պատում, որ հասարակ խոտից էլ պիտի զրկվեն:

Այսպես սնունդի պակասից կմախքացած ժողովուրդը հեշտությամբ զոհ էր գնում զանազան հիվանդությունների. համաճարակների: Ոչ դեղ գոյություն ունեւ, ոչ բժիշկ: Մեռնողների թիվն այնքան շատ էր, որ չէր կարելի առանձին առանձին թաղել: Փորում էին վիթխարի փոսեր և մոտավորապես 3—4 հարյուրը միասին թաղում:

Միջատները թռչում էին մեր վրայից, գարշելի էր:

Տիկին Զարուհին մեր քաղաքի ամենամաքուր կանանցից մեկն էր: Նրա մաքրասիրությունը առակի կարգն էր անցել: Այս կինը վերջին անգամ մեզ հանդիպեց Մեսքենեում: Ես տեսա նրան, և՛ զարմացա, և՛ զայրացա կյանքի մեզ հանդեպ իր ծոցում պահած տխուր անականկալների համար:

Տիկին Զարուհին կիսամերկ, փաթաթվել էր կեղտոտ քուրջերի մեջ: Միջատների թիվն անհամար էր: Նրա սև ու գանգուր մազերը անիծներից ճերմակել էին: Կարծես ծերացել էր նա, աչքերի սև թարթիչները նույնպես չէին երևում: Միջատները ծծել, ցամաքեցրել էին նրա արյունը, նա կավիճի նման ճերմակել էր:

— Քաղցած մնացի, — ասաց նա մորս, — Մաննիկ, տես վիճակս, դոնե դու ինձ ճանաչում ես, ի՞նչ օրի ընկա, իբրև աշխարհի ամենաաղտոտ կինը ոջիլների մեջ պիտի մեռնեմ, երբ այնքան բծախնդիր մաքրասեր էի. ուժ էլ չունեմ որ նստեմ, մաքրեմ ինքս ինձ:

Նա մեռել էր մի քանի օր հետո: Իսկ նրա որդի Զավենը, ընկել էր արաբների ձեռքը և նա մինչև օրս էլ հավանաբար ապրում է, ուրիշ հազարավոր հայ աղջիկների ու տղաների հետ արաբական վրանների տակ, մի դուցե այժմ շիմանալով իր ազգությունն ու անցյալը:

Անապատում ամբողջովին զոհվեցին շատ ու շատ ընտանիքներ և իսպառ փակվեցին բազմաճյուղ տոհմեր: Իմ ազգականներից շատերը բռնորովին ջնջվեցին: Մայրիկիս մորաքրոջ ընտանիքից, որ բաղկացած էր 9 հոգուց, 8-ը մահացան և միայն մեկը փրկվեց՝ Գրիգոր Բողոջյանը, որ մեզ միացավ և դարձավ մեր ընտանիքի մեկ անդամը: Գրիգորի ծնողը աղքատ մշակ էր և հողագործությամբ էր պարապում: 7 զավակներին նա հաղիվհաղ պահում էր շարաշար աշխատանքով: Մի բարի, հեղահամբույր մարդ, որ բացի օգուտից ո՛չ մի վնաս չէր տվել ո՛չ ոքի: Սրան տեղահանել էին թուրքերը և նա աղքատ լինելով շատ քիչ էր տոկացել մահացուցիչ պայմաններին: Ժողովրդի մեծ մասը սրա նման հողագործներ լինելով, զուրկ նյութական կարողութուններից, պիտի ջնջվեր ու անհետ կորչեր:

Միջագետքի անապատում մեզանից զոհ գնացին քույրս՝ Հռիփսիմեն, եղբայրս՝ Մուշեղը, հորաքույրս ու հորեղբայրս: Այս վերջին երկուսը ճանապարհի վրա մեռյալ թողինք, ուտիկանները շթույլատրեցին, որ մի ափ հող նետեք նրանց վրա:— Զաքքալար յիսին, գյավուր լար, օնլար դա ալլահըն քուլու դըր:

(Թո՛ղ շնագայլերն ուտեն, ա՛նհավատներ, նրանք էլ աստծո ստեղծածներն են): Ա՛հ ճանապարհների վրա ընկած, միայն մեր հազարավոր զոհերը, ո՞վ գիտե նրանց թիվը, ո՞վ գիտե նրանց շիրմավայրը:

Պապիս ընտանիքից մահացան 5 հոգի, ինքը պապիկս ուղարկվեց Տեր-Զորի ջարդին և անհետ կորավ: Այսպես մեր միացյալ երեք ընտանիքը, որ քաղաքից դուրս գալու ժամա-

նակ ունեցել էր 24 անդամ, այժմ արդեն համրում էր 6 հոգի—18-ը զոհվել էին...

ՄԻ ՔԱՆԻ ԴՐՎԱԳՆԵՐ

Հայերի քաշած տառապանքներն ու նրանց տեսած մահացումի ձևերը հատորների նյութ են կազմում: Նրա՛նք, որ կարողացել են փրկվել թուրքական դժոզքից, մի-մի անդիր պատմություն են և բազմաթիվ զարհուրելի հուշերի հավաքածո: Չի կարելի այդպիսի մարդկանց լսել առանց խորապես հուզվելու, առանց ցավի և առանց ըմբոստացուցիչ ցասումի: Այս գլխի տակ կհիշենք մի տասնյակ դժբախտներ թուրքահայերի մահվան ճանապարհից և այն կարծիքի ենք, որ դրանք հազիվ մի փոքրիկ գաղափար կտան այն ծով պատմության մասին, որ կոչվում է հայերի տառապանքը թուրքական լծի տակ:

Հայ գրականության կարկառուն դեմքերից մեկը, իմ քաղաքացի Արտաշես Հարությունյանը, որ հեղինակն է «Լքված քնար», «Երկունք» և «Նոր քնար» բանաստեղծական հատորների, որն առաջինը դրեց ու նախատեսեց վաղվան գրականության (գավառական, ժողովրդական գրականության) անհրաժեշտության ու ծաղկումի մասին, մի մարդ, որ կյանքում իր ոտի տակ մրջուռն չէր տրորել, մի մարդ, որի գրած ֆրանսերեն հոդվածները զարմանք ու հիացմունք էին պատճառում ֆրանսիացի խմբագիրներին, թե ինչպես մի հայ այդքան կատարյալ, այդքան անսխալական կարող է դրել ֆրանսերեն դժվարին լեզուն, թե ինչ խոր հմտությամբ տիրապետում է նրան (և Արտաշես Հարությունյանը ինքնաշխատությամբ էր զարդացել, ուսել ֆրանսերեն լեզուն) սրան, Կ. Պոլսում, մյուս մտավորականների հետ բռնում են և ուղարկում Իզմիդ: Այդ քաղաքից դեպի Դերբենդ կայարանը գնալու ճանապարհին, այնքան խոշտանգում, այնքան բրածեծ են անում, որ ոտերի եղունգներից աղյուռն է կաթկաթում և այսպես մեռնում է:

Հայ բանաստեղծներից ուրիշ 4 հոգու, այդ թվում Վա-

րուժանին ու Սիամանթոյին մերկացնում, կապում են դեմ-
հանդիման մի-մի ծառի, որ իրար տեսնեն և հետո սկսում
են դանդաղ-դանդաղ նրանց մսերը քերթել: Ես լսել եմ
նաև մի այլ պատմություն այս մասին: Ռ. Սևակը աքսորի
ճանապարհին բժշկում է մի թուրք ավազակի մահամերձ
աղջկան: Թրքոհին սիրահարվում է թուխ ու առնագեղ Սևա-
կի վրա: Աղջկա հայրը առաջարկում է Սևակին, իր միակ
դուստրը բժշկել և՛ սիրո ախտից, ամուսնանալ նրա հետ:
Բայց Սևակը մերժում է այս առաջարկը: Զայրացած թուրքը
Ռ. Սևակի հետ նաև Վարուժանին ու Սիամանթոյին սպանում
է աքսորի ճանապարհին:

Զոհրաբի սպանիչը հետո հպարտությամբ պարծեցել
էր թե Զոհրաբի գանգը (մի լուսավոր գանգ, որից շատ էին
օգտվում իրենք՝ թուրքերը) մի մեծ քարով ջարդել է և ուղե-
ղը դուրս թափել: Ուրիշներին շիկացած երկաթներով դադել
և այսպես անօրինակ տանջանքներով մահացրել էին հայ
գեղեցիկ դպրության վարպետներին:

— — — —

Հոգևորականները ավելի մեծ շարշարանքների և անար-
գանքների առարկա էին եղել: Հոգևորականներից մի քանի-
սին պայտել են ու հրամայել, որ քայլեն: Ուրիշներին եկե-
ղեցիների մեջ, խորանի առաջ մորթել են (դե՛հ քեշի՛շ, թող
ասվածդ քեզ օգնի), մի քանիսի եղունգները աքցանով
քաշել, հետո միրուքը քարյուղով օծել ու հրդեհել են:

Կոմիտաս վարդապետը, հայ ժողովրդի մեծագույն գեմ-
քերից մեկը, որ հայ ժողովրդական երգերի հանճարեղ վար-
պետ մշակողն ու տարածողն է, աքսորից վերադառնում է
խելագարված: Նա իր աչքերով տեսած ահավոր պատկերնե-
րից ազդված, դառնում է կենդանի նահատակ: Նրա ուղեղը
միշտ անբնականոն վիճակի մեջ մնաց և 15 տարվա ապար-
դյուն ու շարշարալից մի կյանք քաշ տալուց հետո մահա-
ցավ Փարիզում և փոխադրվեց իր ժողովրդի ծոցը—Սովետա-
կան Հայաստան:

— — — —

Թուրք կառավարության զորակոչին, իբրև պետության հպատակ քաղաքացիներ ենթարկվել էին հայերը ևս, և ծառայում էին «թուրքական հայրենիքին»: Հայ զինվորներից շատերը թողել էին իրանց ընտանիքը երեսի վրա, և օրինազանց չլինելու համար շտապել էին զորանոց: Սակայն նրանց ընտանիքները—կին, երեխա կամ ծերունի ծնող—ո՛չ մի պաշտպանություն և օժանդակություն չէին ստանում պետության կողմից, ինչ որ դա ընդունված միջազգային օրենք է, այլ ընդհակառակը, նո՛ւյն այդ պետության դադտնի հրամանով տեղահանվում ու բնաջնջվում էին: Ի վերջո հայ զինվորներն էլ զինաթափվում ու զանազան վայրերի մեջ համախմբում ու կոտորվում էին: Միայն Սեբաստիո շրջանում ջարդվում են շուրջ 100 հազար հայ զինվորներ:

Մեր մահվան ճանապարհը անցնում էր Ինթիլի կայարանից: Այստեղ թուրքերը մոտավորապես 6 հազար հայ բանվորներ, 6 ամիս անընդհատ, մի պատառ չոր հացով աշխատեցնում են՝ փապուղին կարգի դնում, ճանապարհներ սարքում, զորանոցներ ու մթերանոցներ կառուցում և աշխատանքների ավարտումից հետո, իբրև «թուրքական վարձատրություն ու շնորհակալություն» բոլոր աշխատավորներին գնդակահարում:

Անապատում «սերսերի» կոչվում էին բոլոր ա՛յն երիտասարդները, որոնք միայնակ էին մնացել: Նրանց ընտանիքի բոլոր անդամները մեռել էին ճանապարհի ընթացքում և իրենք էլ, թեև կիսամեռ, որպես ուրվական, կմախքացած ստվերներ, բայց և այնպես դեռ շարժվում էին: Թուրքերը սրանց անվերջ քշում էին Տեր-Ջոր, որ այնտեղ կոտորեն: «Սերսերիների» ոսկրացած մարմինը ծածկված էր ամենախեղճ, պատառ-պատառ եղած ցնցոտիներով: Նրանց վրա միջատներ էին հոսում: Ոչի՛նչ, քացարձակ ոչի՛նչ շունեին: Գիշերում էին բացօթյա և ջուրը խմում ամփով: Այս երիտասարդներից մեկը, որ ծնոտի վրա նորաբույս փոքրիկ

Մորուս ուներ, անկարող ճանապարհ գնալու (ներառանքը
 ուռել, հաստացել էին), մտել էր գետնափոր մի փուռի մեջ
 այն հույսով որ, գուցե, մի օր կկարողանա հանգստանալ:
 Սակայն թուրք ոստիկանները գտել էին նրա հետքը և ստի-
 պում էին փուռից դուրս գալ: Խեղճ երիտասարդը երեխայի
 նման արտասվում, ուռած ոտքերը ցույց էր տալիս, գո՛ւթ
 աղերսում, պաղատո՞ւմ, բայց թուրքերի քար սիրտը չէր
 փափկանում, ու մնում էին անդրդվելի: Ոստիկանները երբ
 համոզվեցին, որ պիտի չկարողանան երիտասարդին դուրս
 հանել, շցանկանալով մի «աղտոտ գլավուրի համար գնդակ
 փչացնել», գնացին չոր ճիպոտներ հավաքեցին ու բերին
 լցրին փուռի առաջ: Հայ երիտասարդը երևի չէր խորհում,
 որ կարող են իրեն վառե՞լ: Նա դեռ աղերսում էր, իսկ ոս-
 տիկաններից մեկը ճիպոտներին կրակ տվեց և բոցերի մեջ
 այրեցին մարդուն:

— — — —

Համամում, որ Եփրատի եզերք, անապատի մեջ մի քա-
 նի տնից բաղկացած կայան է, ես հաճախ գնում էի դեպի
 եզերքը ձուկ որսալու: Մի օր կարթս նետել, որսի էի սպա-
 սում. մեկ էլ տեսնեմ իմ լարի մոտով անցավ մի փոքրիկ
 երեխայի դիակ: Ինձ համար պարզ էր, որ նա նետվել էր:
 Միտքս խռովեց, մի մա՞յր էր նետել անշուշտ իր փոքրիկ
 երեխային: Գետափում է՛լ շուղեցի մնալ ու սրտահույզ վե-
 րադառնում էի վրան: Այնտեղ, գետի եզրին նստած հեծկըլ-
 տում էր մի կմախքացած կին: Արցունք շուներ, որ թափի,
 ցամաքել էր արտասուքն անգամ: Զեռքը ոսկրացած ծունկին
 էր զարկում ու ափսոսում.

— Ինչո՞ւ եք լալիս, քո՛ւյրիկ, — հարցրի ես կարեկցու-
 թյամբ:

— Ո՛նց չամ, իմ ախպերս, իմ երեխաս ինձ թողեց, գե-
 տը գնաց...

Նա խելագարվել էր...

— Բայց ես ի՞նչ եմ կանգնել դեռ, — ասաց նա հան-
 ցարժ, — ես ինչի՞ եմ ապրում: Երեխաս գնացել է, ես այստեղ

Ի՞նչ գործ ունեւմ. մայրն իր երեխային մենակ շախտի թողնի,
լավ չի՛, լավ չի՛...

Ասաց, և նա ինքն իրեն նետեց Եփրատի ալիքների մեջ:

— — — —

Քիլիսը, Հալեպին մոտիկ մի գյուղաքաղաք է: Այդտեղի
քաղաքապետը տարիներ առաջ պաշտոնավարել էր Մալդա-
րայում և շատ լավ ծանոթ էր հորս: Հայրս նրան շատ էր
օգտակար եղել ամեն տեսակետով (ձրի կահ-կարասի էր շի-
նել, մեղր ու պտուղ ուղարկել նրա տունը և այլ կարգի
նվերներ): Այս պատճառով նա մեզ ազատել, տարել էր Քի-
լիս, բայց այնտեղի թուրք քաղաքացիների բողոքի վրա
ստիպվեց մեզ հեռացնել, միայն մեզ մի խորհուրդ տվեց, որ
աշխատենք Տեր-Ջոր շղնալ: Մենք անբախտորեն դարձյալ
վերադարձանք Ադեդ: Այդ կողմերը (Հալեպի շրջան) ձմեռը
միայն անձրև է գալիս: Ի՞նչ պիտի լիներ վրանաբնակ գաղ-
թականների վիճակը, եթե ձյուն-ձմեռ լիներ:

Մենք անձրևի տակ ճամփորդել, այնպես էինք թրջվել,
որ մեր զգեստներից ջուր էր քամվում: Հայկական անհար-
մար վրանների անձրևի տակ կքեր, ոմանք ծանրացել, ցիցե-
րը թուլացել, փլել էին: Կենդանության ո՛չ մի նշույլ չէր
երևում: Ես մի քանի վրանների լաթերը բարձրացրի և տեսա,
որ ներքևի անձերը բոլորն էլ աչքաբաց մեռել էին: Նրանց
տակով ջուրը հոսում էր: Մի քանի այլ վրաններից մահա-
մերձի տկար տնքոցները դեռ լսվում էին:

Ոստիկանները մեզ ստիպեցին, որ ջրի ու ցեխի մեջ
վրան լարենք: Ծարահատ համակերպեցինք: Մի քիչ հեռվից
օգնության սրտակեղեք աղաղակ էր լսվում: Գնացի ձայնի
ուղղությամբ: Մի հայ երիտասարդ, երևի ուշագնաց էր եղել
և նրան մեռած համարելով, հազիվ մի մատնաչափ հողի
տակ հապճեպով թաղել էին: Անձրևի կաթիլներից, զովից աշ-
քը բացել էր և իրեն գերեզմանում թաղված տեսել, նա իր
գերեզմանից աղաղակում էր.

— Օգնեցե՛ք, մի բաժակ ջո՛ւր տվեք ինձ, մի բաժակ ջո՛ւր, — թախանձում էր. — սիրտս վառվո՛ւմ է, այրվո՛ւմ է:

Եվ պապական շրթներին ընկած անձրևի կաթիլներն էր ծծում, լիզում: Ես մի բաժակ ջուր տարա նրան: Նա արագ կերպով խմեց, պարպեց բաժակը:

Ընդհատ կերպով պատմում էր ինձ՝ իր ընտանիքից. զարմանում էր թե ո՞ւր են դնացել իր սիրելիները, ինչո՞ւ է թաղված ինքը և շէր հասկանում ի՞նչ էր պատահել իրեն:

Նրա ձայնը նվաղում էր: Նրա ծարավը մահամերձի վերջին պապակն էր: Նա մեռավ իմ աչքերի առաջ և ես գլխահակ ու ճնշված հոգով թողի հեռացա:

— — — —

Բաբը (Հալեպից մի քիչ արևելք) իմ դպրոցականի մտածողությունը որակել է «մեռելների ոստան»: Այստեղ, մի շաբաթվա ընթացքում, խամրեցին իմ ծաղկազեղ քույրը, իմ անմոռանալի եղբայրը և բարի տատիկը, որ իր շատ սիրած երկու թոռնիկներին իր թևերի տակ առած ննջում է մինչև այսօր:

Հիշում եմ, երբ ես և հայրս միասին թաղում էինք եղբորս, հայրս զսպված հուզումով ասաց ինձ.

— Ասա՛ Օնիկ, ասա՛. «Մամի՛կ, քո սիրելի թոռնիկներդ քեզ ենք հանձնում, լա՛վ նայիր նրանց»:

Ես փղձկեցի ու լաց եղա:

Բաբում, արդարև մեռնողների թիվն անհաշվելի էր: Ամեն օր մեռնում էին հազարներով. փորվում էին խորունկ ու մեծ փոսեր և մեջը նետվում մի քանի հարյուր դիակ:

Մի օր թափառում էի մի փոսի շուրջը: Մեկ էլ նոր հասած դիակառքի միջից մեռելների հետ գետին նետեցին մի հյուժված, հիվանդ մարդ: Նրա սև միրուքը մեծացել էր, դեմքը՝ ճերմակել, աչքերը մարմրում էին: Հիվանդը ճգնում էր իր բոլոր սպառած ուժերը հավաքել, որ կարողանա մի քիչ ավելի բարձր խոսել, գոռալ, որ մի գուցե լսեն իրեն.

— Ալլահ աշկնա, — պաղատում էր նա, — դահա բեն օլմե-
միշըմ, սաղ սաղ գեոնմեին բենի, ինսաֆ էյլեյին...

— (Աստուծո՛ւ սիրուն, դեռ չեմ մեռել, ողջ-ողջ մի՛ թա-
ղեք ինձ, մի քիչ դուժ ունեցեք):

— Եթե այս րոպեին չես մեռած, դյավուր, — սաստեց
նրան թուրք ոստիկանը, — մի քիչ հետո մեռնելու ես, հալ
չունես, նո՛ւյնն է, մի քիչ առաջ, մի քիչ հետո:

Եվ հրամայեց թաղել մեռելների հետ:

Ես սարսափած փախչում, հեռանում էի, բայց բավական
հեռվից դեռ լսվում էր իմ դժբախտ ազգակցի խռովյա-
ծայնը, որ գալիս էր վարը փոսից, մեռելների կողքից, որ
դեռ մի քիչ կարեկցությո՛ւն, մարդասիրությո՛ւն էր հայ-
ցում:

Նա ո՛չ առաջին և ո՛չ էլ վերջին կենդանի թաղվածն էր:

— — — —

Դիպսիում մի գարշելի ոստիկանապետ գաղթական հա-
յերի գլխին պատուհաս էր դարձել: Բոլորն ահաբեկվում էին
նրանից: Անսպառ նյութ է միայն նրա շինգիդխանյան բար-
բարոսությունների շարքը: Նա շատ էր տգեղ: Երեսի մորթը
ծակոտ էր մաղի նման, աչքի մեկը շիլ, բեղը անախորժ ու
անճոռնիորեն վար կախված, որ ծածկում էր բերանը: Այս
զգվելի մարդը աչք էր դրել մի հայ ընտանիքի՝ 18-ամյա
վարդագեղ աղջկա՝ Սիրանուշի վրա: Այդ էր պատճառը, որ
ամեն օր առաքումի ժամանակ նրանց վրանի մոտ մի քիչ մեղ-
մացնում էր իր գազանությունները և հրամայում ոստիկան-
ներին, որ Սիրանուշենց ձեռք չտան, հանգի՛ստ թողնեն
նրանց ընտանիքը:

Մի օր սակայն ոստիկանապետը կանչում է Սիրանուշի
հորը և հայտնում իր միտքը:

Հայրը մերժում է:

— Բայց, — ասում է ոստիկանապետը, — ես կարող եմ
բռնի կերպով էլ վերցնել ձեր աղջկան և ոչ ոք չի արգե-
լում ինձ այդ բանը. բայց ես ուզում եմ մարդավարի՛ շարժ-

վել, սիրտ չկոտրե՛լ: Եթե Սիրանուշը իմ կինը դառնա, դուք
լի կփրկվեք, կգնաք տուն:

Մարդը տխուր վերադառնում է, և հարց է դնում ընտա-
նիքի անդամների առաջ, որ շուտով հեռանան Դիպսուց,
փախչեն այդ անիծված վայրից:

Սիրանուշը սակայն մտածում է, մտածում է, և ամեն
բան հաշվի առնելուց հետո հայտնում է ծնողներին, որ հա-
մաձայն է այդ հրեշի կինը լինելու. բավ է, որ իրենից փոքր
եղբայրն ու քույրը փրկվեն, բավ է, որ իր սիրելի ծնողներն
ազատվեն. վերջը նա գիտի ի՛նչ միջոցով պետք է մաքրի իր
պատիվը:

Սիրանուշը դառնում է ոստիկանապետի կինը: Նորա-
բաց և անուշահոտ վարդը ընկնում է գարշահոտ աղբանոցի
գիրկը: Սիրանուշի ընտանիքի անդամները մի օր էլ կառք
նստեցին, մենք այդ տեսանք, և երկու ոստիկանների ընկե-
րակցությամբ, արտասովորից աչքերով նրանք «տո՛ւն» գնա-
ցին: Այդ վերադարձը «երջանկությո՛ւն, մե՛ծ բախտավորու-
թյուն» համարվեց մնացողների կողմից:

Սակայն, շուտով լսեցինք, որ ոստիկանները իրենց պե-
տից նախապես ստացած հրամանի համաձայն Սիրանուշի
ընտանիքը Դիպսուց մի քանի ժամ հեռավորության վրա, ա-
մայի անապատում սպանել էին: Ոստիկանապետն այդպես
էք ջարժվել, որպեսզի անուշությամբ, Սիրանուշի կամքով
տիրանա նրան, խաբել էր թե՛ աղջկան, թե՛ նրա ծնողնե-
րին:

Սիրանուշը մի ամիս սպասելուց հետո, երբ տեսնում
է, որ ընտանիքից լուր չկա, երբ լսում է եղեռնագործության
պատմությունը, մի գիշեր իր հարազատների վրեժը լուծում,
իր պատիվը մաքրում է, սպանելով հրեշին և ապա ինքն էլ
անձնասպան է լինում...

Է՛լ չենք թվում այստեղ ա՛յն հազարավոր հայ աղջիկ-
ներին, որոնք իրենց պատիվը անաղարտ պահելու համար,
իրենք իրենց Եփրատի ջրերի մեջ խեղդեցին...

Չենք ցանկանում ավելի երկարել այսօրինակ դեպքերի շարքը, չենք ուզում է՛լ նկարագրել 10—12 տարեկան անշափահաս հայ աղջնակների հրեշային բռնաբարությունները, նրանց աղեքարշ աղաղակներն ու նրանց ծնողների խեղագարությունը. չենք նկարագրում գեղեցիկ մի հայ կնոջ այն պատմածը, որի համաձայն թուրքերը քսան հայ կանանց, իրենց ամուսինների առաջ անպատվում են, հետո կանանց առաջ սպանում ամուսիններին, հետո իրենց հրամայում են, որ յուրաքանչյուրը իր ամուսնի երկու ոտքերի մեջ մտնի՝ իբրև կառաքաշ ձի՝ ամուսնու ոտները իր կողերին բարձրացրած, իրանն ու գլուխը գետնի վրա, գրաստի նման քաշի մինչև մոտակա փոսը: Այսքանը գրում ենք հայ նոր սերնդին ծանոթացնելու ա՛յն, ինչ որ տեսան ու ապրեցին իրենց հայրերը թուրքիայում, թուրքերի լծի տակ: Գրում ենք պատմության համար:

ԴԵՐ-ՉՈՐ

Նրանք, որ թեև ընտանիքի անդամներից մեծ մասը կորցրած, տոկացել, դիմացել ու դժոխային անապատը կիսով կտրել, հասել էին Դեր-Չոր (Նփրատի ամին մի նախնական հետամնաց գյուղ), այնտեղ նրանց ա՛յլ ճակատագիր էր սպասում:

Թուրքերը հաշվել էին, որ իրենց ստեղծած մահացու պայմանների տակ հայերը անպայման կջնջվեն: Զի՛շտ է, հայերը իրենց թվի մեծ մասը կորցրել էին, բայց մնացողներ եղել, հասել էին Դեր-Չոր: Առաջին քարավանները Դեր-Չորից մեկնել արդեն իսկ կանգնել էին Բաղդադում կամ Թուրքիո հարավային սահմանի վերջին կետ՝ Բասրայում: Կերևի թուրքերը հաշվել էին, որ այս ձևով փրկվող հայեր պիտի լինեն, իսկ այս հաճելի չէր նրանց. ուստի հրամայել էին Դեր-Չորից մի քիչ վար, ջարդե՛լ հետզհետե հասնող բոլոր քարավաններին և չթույլատրե՛լ նրանց անցքը Բաղդադ:

Այդպես էլ գործում էին: Չարդի աշխատանքներում

Թուրք ոստիկաններին օգնում էին մի ոհմակ շեշեններ ու ա-
րաբներ: Հասնող քարավանները կոտորվում, մահացվում են
Դեր-Ջորից հարավ, շրջապատված զինյալ ուժերով: Դեր-
Ջորի սարսափների գուժը հասել էր արդեն ավելի վեր գտն-
վող հայ բեկորներին և ոչ ոք չէր ցանկանում առաջ գնալ.
ամեն ճիգ, ամեն զոհողություն կատարում էինք, որ մի
կերպ մեր տեղերը մնանք: Դեր-Ջորի անունը փշաքաղում
էր յուրաքանչյուր հայի սիրտ: Դեր-Ջորը հայոց պատմու-
թյան մեջ կմնա՝ իբրև հայոց ազգային նահատակության,
որպես հարյո՜ւր հազարավոր հայերի սպանդանոց ու դերեզ-
մանոց:

Մի անգամ Համամից մեզ ուղղում էին տանել Դեր-Ջոր:
Մեր իրեղենները ոստիկանների խարազանների տակ ստիպ-
ված բարձել էինք ուղտի վրա, բայց հանձն առինք շունենալ
ոչ մի բան, մնալ սոսկ մեր վրայի զգեստներով, բայց դեպի
Դեր-Ջոր չգնալ: Թույլ տվեցինք, որ ուղտերը մեկնեն, մեր
իրեղենները գնան, կորչեն, բայց մենք ազատվենք. սա
կյանքի ու մահվան պայքարն էր: Ու փախանք, թաքնվեցինք
Եփրատի ափերի մոտ, հետո փող վճարելով մնացինք Համա-
մում:

Այս դեպքից հետո հայրս Համամում կառուցվող հսկա
զորանոցի շինության մեջ էր մտել որպես ճարտարագետ:
Վտանգը առժամանակ հեռացել էր: Մյուս կողմից ամեն շա-
բաթ կաշառք էինք տալիս կույր մյուսերին, որ մեզ հան-
գիստ թողնե: Մի անգամ Պոլսից մեր ազգանունների միջո-
ցով զրկված փողը ուշացավ, կույր մյուսերը նույն շաբաթն
իր իրավունքը ժամանակին չէր ստացել, այս հապաղումից
նա գայրացած, ձերբակալել տվեց պապիկիս և ուղարկեց
Դեր-Ջոր: Գնաց 60-ամյա սիրելի պապիկս և հազար հազա-
րավորների հետ նահատակվեց Դեր-Ջորի ջարդում:

Բայց կոտորածներից մի հայ մարդ ազատվել, փախել
եկել էր Համամ ու մի գիշեր մեր դրացի վրանում նա պատ-
մում էր քստմենելի դեպքեր:

Պատմում էր, որ իրենց քարավանը կլինեն 5 հազար հո-
ւրի: Դեր-Ջորից մի քիչ վար, անասլատի մեջ շրջապատեցին

իրենց, ապա հրամայեցին, որ ամեն իրեղեն մի վայրում
թողնեն ու հեռանան։ Զոկեցին գեղեցիկ աղջիկներին, ան-
շուշտ մի քանի օր խրախճանքներ սարքելու և նորից սպա-
նելու նպատակով։ Մի քանի տասնյակ հնգամյա լավ տղա-
ներ վերցրին արաբները ու մնացյալը սկսեցին սուրով, նի-
զակներով, տապարներով, փայտագնդերով կոտորել։ Փամ-
փուշտը խնայել էին, փող արժեր նա, գործածել էին միայն
անհրաժեշտ դեպքում՝ երբ մեկը գծից դուրս փախչելու փորձ
էր անում։

— «Ես,—ասում էր ականատեսը,—իբր թե սպանված ըն-
կա. մեռյալների արյունով դեմքս ներկեցի ու մի քանի անշըն-
չացած դիակներ քաշեցի իմ վրա։ Ծածկվում էի, միայն արյու-
նոտած գլուխս դուրս էի գցել, որպեսզի կարողանամ մի քիչ
շունչ առնել։ Եվ երբեմն աչքերս կիսաբաց դիտում էի ու
հասկանում, որ թուրքերը ձիերը քշում են գետինը փռված
դոհերի վրայով, ողջ մնացողներին, մահամերձներին կամ վի-
րավորներին տրորելու, վերջնականապես մահացնելու ցան-
կությամբ։ Սա մի տեսակ մահվան կալ էր։ Նորածին երեխա-
ները նիզակների վրա առնում, օդի մեջ նետում և խաղեր
էին անում։ Մի անգամ մի քիչ հեռվից լսեցի ահավոր ճիչեր։
Կանայք էին։ Նրանք խելահեղ ճշում, լալիս էին ու աղեր-
սում։ Իմ ականջը լարել էի այդ ուղղությամբ և ինձ համար
շուտով պարզ եղավ, որ թուրքերը հավաքել էին քարավանի
մեջ գտնվող հղի այդ կանանց և այժմ նրանց փորի կազմ-
վածքից, գուշակություններ էին անում.—տղա՞, թե՞ աղջիկ-
և ապա կնոջ փորը ճեղքում, ստուգելու համար թե ո՞վ էր
շահել խաղը, ո՞վ էր տարվել։ Ափսո՛ս, ասեց պատմողը ա-
տամները սեղմելով, հազար ափսո՛ս, որ միայն մի անգամ,
միայն մի անգամ զեյթունցի մամիկներ քաշել են վրանների
ձողերը, ջարդել են մի քանի թշնամու գլուխ և այնպես մե-
ռել։ Ուրիշ ի՞նչ կարող են անել անդեն, ուժասպառ եղած,
քաղցից սմբած մարդիկ մինչև ատամները զինված ոհմակ-
ների դեմ։

Թեև անապատի մեջ աշխարհից կտրված, բայց երբեմն
Եփրատի վրայով լաստերով կամ նավով ճամփորդող թուրք

կամ գերմանացի զինվորներից հասկանում էինք, որ պատե-
րազմը Նրրյակ զինակցութեան համար վատ էր գնում: Ճա-
կատների առաջխաղացումը կանգ էր առել. նույնիսկ այժմ
անգլիացիներն ու ֆրանսիացիները հակահարձակման էին ան-
ցել: Իտալիան բաժանվել էր Գերմանիայից և միացել Նրրյակ
Համաձայնութեան: Մենք արդեն իսկ նախազգուժ, գուշա-
կում էինք գերմանացիների ու թուրքերի պարտութունը:
Մեր համբերութեան ամբողջ մնացորդովը ցանկանում էինք
մի քիչ էլ դիմանալ, այն մեծ հույսով, որ գուցե շուտով մի
լույս կծագե մեզ համար, գուցե հեռու չէ մեր փրկութեան
օրը:

Մի անգամ Նփրատի վրայով փոքրիկ նավով մի խումբ
գերմանացիներ վերադառնում էին Զարաբուլուզ: Գերմանա-
ցի զինվորները հայ սովյալներին հացի շորացած փոքրիկ
կտորներ էին նետում ու զվարճանում՝ դիտելով թե ինչպե՞ս
քաղցած մարդիկ իրար վրա ընկնում, իրար ձեռքից խլում,
կռվում, ագահաբար ուտում են այդ փշրանքները: Նրանցից
մի զինվոր, գերմանախոս մի հայ երիտասարդի հայտնել էր,
թե Բաղդադի ճակատում պարտութուն կա և առհասարակ
նահանջում են իրենք:

Այս հուսադրիչ ու մխիթարական լուրը մենք հուզումով
ու խանդավառութեամբ դիմավորեցինք: Բոլորի սրտի մեջ
հույսն ու հավատը բոցավառվեց: Ամենքի հետ ես էլ շատ
աւրախ էի, որ անապատի դժոխային տաքից փրկվելու եմ:
Այնտեղի ջերմութունը ոչ միայն աչքերիս էր վնասում, այլ
ինձ թուլացնում, հիվանդացնում: Ես տառապում էի այդ
կրակ-տանջարանի մեջ: Կոշիկ չկար: Արաքները սովորած են
իրենց կյանքի ամբողջ ընթացքում ոտնաման շգործածել.
նրանք սակայն միջավայրի հարադատ բնիկներն էին, իսկ
ինձ համար բոբիկ քայլել անհնար էր: Գետինը կրակ էր.
ձուն ավազի մեջ եփում էր, կարելի չէր մերկ ոտքով գնալ:
Ես հիշում եմ մի դեպք: Երբ առաջին անգամ իմ կոշիկները
հնացան, հարկադրվեցի մեր վրանից բոբիկ գնալ մինչև Նփ-
րատ՝ ջուր բերելու համար: Ավազը սղար ասեղների նման
ծակոտում էր ոտս, իսկ խիճերը կայծեր էին դարձել: Ես

տագնապահար վազում էի, վազում էի որքան որ կարողա-
նում էի դիմանալ, հետո սափորը ուսիցս ցած գցում, կոնա-
կի վրա պառկում, ոտներս վեր, օդի մեջ բարձրացած, որ
նրանք մի քիչ գետնի կրակից կտրվեն. այդ միջոցին էլ սա-
կայն, թիկունքս էր աչրվում: Վերջապես մի քիչ հանգստա-
նալուց ու շունչ քաշելուց հետո նույն ձևով շարունակում
էի իմ ճանապարհը. մինչև որ վրան վերադարձա ոտներիս
տակն աչրվել էր և մի քանի օր չկարողացա ման գալ:

Անապատ... անիծվե՛ս դո՛ւ...

Իմ ուրախությունը ցնորք չէր: Իմ առողջ բնազդը ինձ
չէր խաբել: Մի օր Զարաբլուզից մի թուրք հազարապետ
եկավ Համամ ու հորս որպես վարպետ ատաղձագործ ար-
ձանագրեց ցանկի մեջ: Նա հրամայել էր, որ շուտով պատ-
րաստվենք: Ընտանիքով փոխադրվելու էինք Զարաբլուզ:
Այնտեղ մեծ էր ատաղձագործի կարիքը ու շատ-շատ զին-
վորական գործեր թողնվել էին երեսի վրա: Թուրքերը անհա-
շիվ կերպով կոտորել էին հայերին և այժմ արհեստավոր
ձեռքեր էին փնտրում:

Մենք համոզվեցինք, որ ստույգ մահից ազատվում ենք,
մանավանդ ուրախանում էինք, որ Դեր-Զորի մղձավանջից
փրկվելու ենք, իսկ մյուս կողմից մղկտում, որ հազար հա-
զարավոր հայեր այնտեղ գնացին ու նահատակվեցին:

Դեր-Զորից մենք շուտով փախչելու, հեռանալու էինք:

Դեր-Զոր...

Ես գլուխս խոնարհում եմ՝ հազարավոր նահատակներ
հիշատակի առաջ...

Դեր-Զոր...

Ցասումով նղովո՛ւմ եմ ես քեզ:

ՀԱԼԵՊԻ ԶԱՐԴԸ

Համամից մի քանի օրվա տաժանելի ճամփորդությունից
հետո մենք հասանք Զարաբլուզ, որ մի փոքրիկ գյուղակ է
Եփրատի աջ եզերքի վրա հիմնված, ուր գտնվում է հին
պատմական Գարգեմիշը, գետացիների երբեմնի մայրաքա-

դաքը, որ պեղումների միջոցով երևան է հանվել և վերին աստիճանի հետաքրքրական է իր արձաններով ու արձանագրություններով, որոնք պատմում են հին բարքերի ու կարգերի մասին և նոր լույս սփռում մի հին դարաշրջանի անցքերի վրա:

Զարաբլուզից անցնում է Բաղդադի միակ երկաթուղին: Այստեղ գետի վրա ձգված է մի մեծ կամուրջ: Զինվորական փոխադրությունների, շարժումների և մթերանոցների պատճառով այս գյուղակը դարձել է եռուն ու կարևոր հանգույց: Ատաղձագործի աշխատանքներն անսպառ էին: Հայրս ղինվորական փոխադրությունների համար անվերջ սնդուկներ էր շինում՝ օրական մի դայինով (300 գրամանոց սև ու հողխառն հացով): Մենք տնեցիներս ոչինչ չէինք ստանում, բայց միանգամայն չէինք դժգոհում. ընդհակառակը՝ հազար փառք էինք տալիս մեր նոր կյանքի, մեր նոր վիճակի համար: Ես շոգեկառքերի մեջ ծխախոտ, ձու և այլ կարգի բաներ էի ծախում և ընտանիքի ապրուստն ապահովում:

Զարաբլուզում գերմանական կայազոր կար: Անթել հեռագրի բարձրաբերձ ձողը գիշեր-ցերեկ կրկնում էր միատեսակ ձայնով: Մի վեց ամիս անցել էր, երբ մի առավոտ նկատեցինք, որ գերմանացիները գիշերով հեռացել են. (հայրս անվերջ կրկնում էր «գերմանացիները ցերեկը կգան, գիշերը սուսիկ-փուսիկ կմեկնեն»), այս նշանակում էր, որ ճակատը բոլորովին խորտակվել էր և նրանք փախչում էին: Ավելի ուշ մենք լսեցինք, որ սուրյական ճակատը Արարայի կետից քանդվել էր և այդ ճակատամարտում հայ կամավորական զորագունդը (որ կազմել էին դաշնակիցները իրենց ձեռքում գտնվող զանազան հայաշատ դադութների հայ երիտասարդներից) հերոսական մեծ խոյանքներով ստիպել, հարկադրել էր գերմանացիներին ու թուրքերին, իրենց ամրացված դիրքերը թողնել ու փախչել: Արարայի ճակատի քայքայումը ճակատագրական էր եղել Թուրքիայի համար և ազդել էր Մերձավոր Արևելքի բոլոր ռազմագծերի վրա, ի վերջո պարտադրելով թուրքերին առանց պայմանի անձնատուր լինել:

Արարայի ճակատամարտում հերոսավայել մահով ընկած հայ կամավորների և դաշնակից զինվորների համար, նո՛ւյն վայրում, մի քանի տարի հետո հուշարձան բարձրացվեց և անգլիացի, ֆրանսիացի զորավարներ հիացմունքով խոսեցին հայկական զորամասի անմոռանալի քաջագործությունների և նրանց կատարած պատմական մեծ հաղթանակի մասին:

Այսպես ուրեմն, մի առավոտ մենք ականատես էինք եղել, որ գերմանացիները փախել են: Իսկ թուրք զինվորների թիվը բոլորովին նվազել էր և մի քանի ոստիկաններ հազիվ էին մնացել: Լուրերը, ինչպես լինում են առհասարակ բոլոր պատերազմների ընթացքում, ճշմարտությունից շատ հեռացել, անբնական, առասպելական ձև էին ստացել: Յուրաքանչյուր մարդ մի բան էր ասում և սուտն ու ճիշտը դժվար էր որոշել: Լուրերի բաբելոնի միջից պարզ երևում էր, որ պատերազմը վերջանում է, խաղաղությունը հեռու չէ:

Եվ արդարև Բաղդադի կողմից (Ռեսուլայնի գծով) անգլիացիներին ծառայող հնդիկ զորագնդեր շոգեկառք նրստած առաջանում էին: Է՛լ ճակատ, է՛լ դիրք, է՛լ կռիվ չէր մնացել: Թումբերը խորտակվել էին և բանակաները ջրի պես վարար հոսում էին առաջ: Ջարաբլուզում ես տեսա հնդիկ զորամասեր, որոնք գնում էին Հալեպ:

Թուրքիան, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան պարտվել էին և դաշնակիցները գրավել էին Պոլիսն ու գրեթե ամբողջ Թուրքիան: Հայերը թե՛ լալիս և թե՛ ցնծում էին: Գերմանիան ու Թուրքիան արհամարհել էին ամեն սրբություն, նրանց ձեռքը արյունոտ էր, խիղճը մեղավոր, սիրտը պղտոր. իսկ այսպիսի մարդիկ կամ ազգեր չե՛ն կարող հաղթել: Հաղթությունը նրա՛ն է, որ գաղափարականորեն, մարդկորեն ավելի բարձր է կանգնած (ինչ պերճախոս օրինակ, որ այս երկրորդ պատերազմում էլ գերմանացիները ջարդեցին խաղաղ և անմեղ միլիոնավոր հրեա քաղաքացիներ և նորի՛ց իրենց ձեռքերը թաթախեցին մարդկային արյան մեջ: Նրանք նորի՛ց անիրավ և անարդար եղան բազմաթիվ ազգերի

նկատմամբ և դարձյա՛լ կյանքի ու պատմութեան պատժիչ օրենքով՝ շարաշար պատուհասվեցին)։

Դաշնակիցների կողմից հրաման եղավ, որ տեղահանված հայերի ողջ մնացած բեկորները ամեն կողմից հավաքվեն Հալեպ, այնտեղից իրենց քաղաքները վերադառնալու համար։

Հայ գաղթականներին, անգլիացիները հատկացրել էին Հալեպի բարձրութեան վրա գտնվող երկհարկանի վիթխարի դորանոցը։ Այս շենքի մեջ ասեղ գցելու տեղ չէր մնացել։ Անապատներից վերադարձած հազարավոր հայեր լցվել էին այդտեղ և քաղաքի մեծ խաներում տեղավորվել։ Թուրքահայերի ամբողջ մնարոցդը հավաքվել էր Հալեպ։

Մի քանի հայ ընտանիքների հետ մենք 5 սենյականոց մի տուն վարձեցինք Հալեպում, գոնէ մինչև մեր վերադարձը խաղաղ ու հանգիստ ապրելու նպատակով։ Այդ տան մեջ բոլորս 32 հոգի էինք։ Մեր տունը գտնվում էր Կազանջլար բաշի կոչված փողոցում, մի փողոց, որ հետո իմացանք, թե ավազակաբարո արկածախնդիր արաբների որջն էր։

Անապատներից գրեթե ամեն օր Հալեպ հասնում էին հայ մասուկներ, ջարդ ու փշուր եղած ընտանիքներ։ Որբերի թիվը շա՛տ մեծ էր. մի քանի տարեկանից մինչև 15—20 տարեկան պատանիներ խեղճացել էին, կորցնելով իրենց թանկագին ծնողներին։ Մարդու սիրտը մորմաքվում էր նրանց դժգույն, ահաբեկված, տխուր դեմքերը դիտելիս։ Նրանցից շատերի դեմքի վրա արաբները դրել էին իրենց կապույտ կնիքը, իրենց սովորութեան համաձայն, ասեղներով նշաններ էին հյուսել։ Այդ որբերը, որոնցից շատերը ո՛չ անուն, ո՛չ ազգանուն, ո՛չ ծնող, ո՛չ ծննդավայր էին հիշում՝ բազմանդամ, շեն ու բարեկեցիկ ընտանիքների գուրգուրված զավակներ էին եղել երեկ, բայց այսօր մենակ մնացել, անտեր ու անպաշտպան, մի պատառ չոր հացն ուրիշի՛ց էին սպասում։ Այսպիսի ազգային մեծ ողբերգություն շատ քիչ ժողովուրդներ են տեսել ու ապրել։

Օրերն անցնում էին և Հալեպ հավաքված հայերը պատրաստվում էին մեկնելու։ Պատերազմի հետևանքով խան-

դարձած հաղորդակցությունը և բնականոն կյանքը վերսկսվել, կանոնավորվել էր:

Հալեպի մեջ մեծ էր թիվը այն թուրք ոստիկանների և սպաների, որոնք արաբական նորակազմ պետության մեջ էին մտել և ղեկավարի պաշտոններ գրավել: Մի երեկո մուսուլմանների թմբուկը զարկում ու ժողովրդին հաղորդում էր, որ հաջորդ օրը, ուրբաթ, բոլոր արաբները պարտավոր են հավաքվել Ջումա բազարը (Հալեպի հինավուրց բերդի տակ մեծ պազար) իրենց կարծիքը հայտնելու՝ անգլիական, թե՛ ֆրանսիական հոգատարություն են նախընտրում: Սա, ինչպես երևում էր, անգլիական դրդում էր: Պատերազմից առաջ ընդունված պայմանների և գծված քարտեզի համաձայն, Սիրիան թողնվելու էր Ֆրանսիային, բայց անգլիական ահավոր ախորժակն ու անկուշտ աչքը ցանկանում էր Սիրիան էլ կուլ տալ և դրա համար իր դիվալին մատով խառնակում էր արաբների միտքը:

Ուրեմն, հաջորդ օրը Հալեպի պատմական բերդի տակ միտինգ էր կազմակերպվելու: Ես շատ էի հետաքրքրվում այդ ժողովի արդյունքով: Գրիգոր եղբայրս արդեն առավոտը վաղ վեր կացել, գնացել էր Ջումա բազար: Ես էլ պատրաստվում էի, բայց մայրս չէր համաձայնվում: Նա մի առողջ բնազդով դեմս կանգնել էր և չէր կամենում ինձ թողնել:

— Մի քիչ կաց տեսնենք ի՞նչ է լինելու. ինձ թվում է, որ այսօր վատ բաներ կպատահեն. այդ ժողովից կոխվ դուրս կգա. մի՛ գնար, սպասի՛ր, մի քիչ սպասի՛ր, տեսնենք, ի՞նչ կլինի:

Սակայն ես վիճում էի մորս հետ և աշխատում համոզել նրան, որ ինձ ազատ թողնե: Մեկ էլ, ճի՛շտ այդ միջոցին լսվեց հրացանի պայթյուններ:

— Ա՛յ, լսեցի՞ր, — վրա բերեց մայրս անմիջապես, — լսեցի՞ր, ահա՛ սկսվեց, ես քեզ չէի՞ ասում. էլի՛ թուրքերն են, աչքերնի՛ն կուրանա, էլի՛ նրանց գործն է, մնացած հայերս էլ այստեղ պիտի կոտորեն, վերջացնեն: Դե՛, այժմ տե՛ղդ նստիր, դուրս գնալու ժամանակ չէ՛:

Ես ոչինչ չպատասխանեցի, քարացել կանգնել էի և ա-

կանջ էի դնում դրսի խուլ աղմուկին: Հրացանների հետ և զնդացիրներն ավելի արագ էին գործում այժմ: Փողոցում խռովքն ու իրարանցումը մեծ էր: Մարդիկ վազում, փախչում էին, վախի ճիշեր, օգնության աղաղակներ, դազանային ոռնոցներ էին լսվում: Մեր տնեցիները հուզվել, դժգունել, ահաբեկվել էին: Մի տուն լիքը հայ, մի կաթիլ, ընկեր էինք արաբական տների ծովի մեջ: Մեր վերջը լավ չէր երևում, այդ զգում էինք բոլորս: Հայրս արդեն մտահոգվել էր. — «Արյան ծովերից անցանք, — ասում էր նա սրտաբեկ, — տե՛ս բախտը, ամի ելնելու ժամանակ դրեթե հողի վրա, կարծես պիտի կորչենք»: Նա ինձ հրամայեց, որ փողոցի դռան հետև կանգնեմ, և երբ իմ Գրիգոր եղբայրը դուռը թակե անմիջապես բաց անեմ: Միանգամայն հանձնարարեց հետևել փողոցի անցուդարձերին և կարևոր դեպքերը հաղորդել իրեն: Ես կանգնել էի դռան ետև և բանալիի ծակից դուրս էի նայում:

Հրազենների և զնդացիրների բազմահազար պայթյունները պատերազմի տպավորություն էին թողնում, կարծես առաջին գծի վրա լինեի: Հասկանալի էր, որ ջաբղը առաջ էր դնում, հայեր ընկնում էին. էլի՛՜ զոհեր, էլի՛՛ արյուն:

Մի կես ժամից հետո մեր տան հանդիպակաց մայթից անցնում էր հեալով ու տնքալով կողոպտված և արյունլվամի հայ մարդ: Նրա վրա թողել էին միայն ճերմակ վարտիքը, որ կարմրել էր գլխից հոսած արյունով: Դեմքը ալյանդակվել էր և երկյուղ էի զգում ես նրա վրա նայելիս: Չէր կարելի չգթալ նրան: Ես ո՛չ մի վտանգ հաշվի չառա այդ րոպեին, դուռը բացեցի և կամաց ձայնով ասացի իմ դժբախտ ազգակցին.

— Ե՛ղբայր, այստեղ հայի տուն է, արի՛ մեզ մոտ, շո՛ւտ արի, կփրկվե՛ս, մենք քեզ կօգնենք, մի՛ գնա ավելի առաջ, լավ չէ՛, արի՛ մեզ մոտ:

Նա պատին հենվելով, ինձ դարձավ և շնորհակալ ձայնով պատասխանեց.

— Դուռը փակի՛ր, ազնիվ տղա, դուռը փակի՛ր, գալիս են շները, ես արդեն մեռել եմ, ինձնից մարդ դուրս չի գա,

իմ բանը վերջացել է, չե՛մ ցանկանում ձեզ էլ վտանգել, դուռը փակի՛ր և նե՛րս քաշվիր, և եթե դուք փրկվեցիք ու ապրեցիք, մի՛ մոռացեք մի օր մեր արյան հատուցումը պահանջելու:

Ես մինչև այսօր հիշում եմ և, այնքան ժամանակ ուշ չո՛ւնչ ունեմ բերանումս, պիտի հիշեմ այդ վեհանձն, այդ բարեհոգի հային, որ այնքա՛ն գերմարդկային հոգով խոսեց ու վերաբերվեց ինձ հետ և մեր բնակարանի ամբողջ հայերին շվտանգելու համար՝ գիտակցորեն զոհեց իր կյանքը, որովհետև հազիվ 20 քայլ այն կողմ, նա սպանվեց իր ետևից հասած մի խումբ ոճրագործների կողմից և ես լսեցի նրա վերջին հոնդյունները: Այս եղերական դեպքից հետո մեր դուռը թակեց իմ Գրիգոր եղբայրը. անմիջապես բացեցի: Նա ներս մտավ թե չէ, փողոցի ծայրից անթիվ փամփուշտներ արձակվեցին նրա վրա, բայց նա փրկվեց հորս կանխամտածության և իմ արագաշարժության շնորհիվ:

Բոլոր տնեցիք եղբորս գլխին հավաքվել, շրջապատել էինք նրան և լուր էին ուզում լսել: Իսկ նա ասելիք մխիթարական ոչինչ չուներ: Պատմում էր, որ կոտորածը սկսել էր հենց Ջումա բազարից: Թուրքական գործակալները, որպեսզի ջարդի առիթ ստեղծեն, նախ սկսել էին կողոպտել, խոշտանգել հայերին, որ այս վերջինները դիմադրեն, ընդդիմառան ու կռիվ սկսվե: Գրիգոր եղբորս վերջին խոսքն այն էր, որ պիտի մեռնենք, պիտի մեռնենք, որովհետև հայությունից կտրված առանձին մի տուն ենք ընկել և մեզ պաշտպանող չլինիր. — «բայց այնպե՛ս մեռնենք, — ասում էր նա, — որ գոնե մի քանի թշնամու գլուխ ջարդենք»:

Նա անմիջապես մեր սենյակը մտավ, սնդուկը բացեց, Ջարաբլուզից դնած կարադաղը (հնօրյա ատրճանակի մի տեսակ) դուրս հանեց և սկսեց մաքրել, փամփուշտները փորձել: Մեր այդ ատրճանակն ուներ ընդամենը 15 փամփուշտ, 32 հայերի ճակատագիրը կախվել էր այդ հնամյա կարադաղից.

— Մաքրենք, պատրաստենք, հարկավոր կլինի, — ասաց

Գրիգոր եղբայրս,—գոնե այս անգամ դառան պես շնորհ-
վենք:

Այդ բոպեին արագ-արագ շուռը թակեցին: Մենք սրբ-
տառորոփ-շվարած վաղուժ էինք դեռ ու դեն և չգիտենք ո՞ւր
թաքնվենք: Գրիգոր եղբայրս գնաց և ստուգելուց հետո դու-
ռը բացեց: Չորս հայ մարդիկ էին, նրանցից մեկը ծանոթ լի-
նելով մեր տանը, իր ընկերները առաջնորդել է մեզ մոտ
իրենց կյանքը փրկելու նպատակով: Նրանք էլ պատմում էին,
որ փողոցում հանդիպած հային նախ կողոպտում, ապա
սպանում են, թե իրենք էլ հալածվում էին մի ավազա-
կախմբից և հազիվ կարողացան մեր տունն ապաստանել:
Նրանցից երեքը անասլատից վերադարձած հայեր էին, իսկ
մեկը տակավին թուրքական հին ու աղտոտ զինվորական հա-
մազգեստով, նոր, մի քանի օր առաջ էր եկել Հալեպ ու չորս
տարվա բաժանումից և անստուգույթունից հետո, անակնկալ
կերպով գտել էր իր ընտանիքին այնտեղ: Նա պատկանում
էր այն սակավաթիվ հայ զինվորների շարքին, որոնք հատ
ու կենտ փրկվել էին ընդհանուր ոչնչացումից: Երեք ընկեր-
ները բռնի համոզել էին այդ զինվորին, տնից վերցրել նրան,
որ գնան Զումա բազարը քաղաքացիական զգեստներ գնելու:
Ճանապարհին բռնվել էին ջարդի ու եկել մեզ մոտ: Նրանց
բոլորի ընտանիքները զորանոցումն էին:

Մի քիչ անց մեր դուռը կրկին թակվեց, բայց այս
անգամ այնպե՞ս էին թակում, կարծես վճռել էին խորտա-
կել: Ես մի պահ ենթադրեցի թե շուտով կքանդեն դուռը ու
ներս կխուժեն: Շվարած, շփոթված բարձրացա տանիք և
պատի տակ շիտակ կանգնել էի՝ շունչս բռնած, կարծում էի,
որ այդտեղ ապահով է ու կփրկվեմ: Վարը բակում մայրս
ինձ էր փնտրում ու կանչում: Ես վերը լսում էի, բայց ձայն
չէի տալիս, չէի շարժվում: Մայրս սկսեց արտասվել. իմ սիր-
տը նոր կարեկցեց և տանիքից իջա ցած: Բոլորը մտել էին
կիսագետնահարկ մահանը: Մայրս ինձ էլ թելադրեց, որ
այնտեղ գնամ:

Թուրքական գործակալները չէին կարողացել խորտակել
մեր դուռը, բայց մեր դրացի արաբները «բարիացական»

քեն» իրենց դռները բաց արել, թելադրել էին իրենց տանիք-
ներից մեր տանիքն անցնել և դուռը ներսից բանալ: Այդպես
էլ եղավ: Այնտեղ, ուր ես ընդամենը 5 վայրկյան առաջ կանգ-
նել էի և կարծում էի, թե կփրկվեմ, ապահով եմ, հենց այդ-
տեղից էլ թուրքերն իջան ցած և շուտով մեր բակը լցվեց
քաղաքացի և ոստիկան շարագործներով: Նրանց առաջին
գործը մեր իրեղենների կողոպուտն էր: Դա բավական ժա-
մանակ խլեց: Մենք ոչինչ չէինք վերցրել մեր ինչքերից:
Նույնիսկ շտապել էինք առանց ոտնամանի մտնել մառան:
Ավազակները ձեռքից-ձեռք խլում էին ավարը, կռվում իրար
հետ, վիճում և դալմադալ բարձրացնում: Մեր 5 սենյակ-
ները պարպելուց հետո, սկսեցին մեզ որոնել: Մառանը եր-
կու լուսամուտների ուներ բակի վրա: Այժմ թալանչիները
ցանկանում էին այդ լուսամուտներով ներս մտնել և մեզ
կոտորել, իսկ Գրիգոր եղբայրս կարադաղը քաշել, ցույց էր
տալիս, որ զգուշ լինեն, կկրակի: Թուրք գործակալները
վախենում էին և ուրիշ միջոցներ ստեղծում մեզ ջնջելու:

Այդ օրը մեր տնեցիներից մեկը առավոտը վեր կացել,
լվացքի էր սկսել, նրա օջախի կրակները, փայտի կտոր-
տանքները, տաշեղները միասին ներս շարտեցին մեզ ողջ-
ողջ վառելու նպատակով: Բայց կրակը չբոցավառվեց, միայն
ծխաց ու ծխով լցրեց մառանի փոքրիկ մթնոլորտը: Իրար
չէինք տեսնում, ծուխը խեղդում էր մեզ, մեր կոկորդներն
այրվում էին: Մառանում իրար վրա սեղմվել էինք 35 հո-
գի: Լուսամուտների դեմ չէր կարելի կանգնել, դրսից ուղիղ
կրակում էին մեզ վրա, ծվարել էինք միայն պատուհանների
և անկյունի միջև գտնվող նեղ ու անբավարար միջոցում:
Մինչև այսօր ես դարմանում եմ, թե ինչպե՛ս մենք այդքա՛ն
հոգի, ա՛յնքան փոքր վայրի մեջ սեղմվեցինք: Միայն այս
դիտեմ, որ մառանի օդը քիչ էր գալիս՝ կրակի ծուխը, ար-
ձակված հրազենների մուխը, վառողի անախորժ հոտը, ան-
շընչելի էին դարձրել օդը: Ես նստել էի մի կնոջ վրա, իմ
վրա էլ նստել էին ուրիշներ և ես միայն քիթս դուրս էի
հանել մի քիչ օդ ներշնչելու նպատակով:

Մի հանդուգն թուրք արաբական ոստիկանի տարազ հա-

գած (մենք դրա թուրք լինելը հասկացանք իր լեզվից, որովհետև նա արաբերենից ավելի սահուն, շատ լավ թուրքերեն էր խոսում) մի ձեռքում սուր, մյուսով ատրճանակ բռնած ուզում էր ներս մտնել։ Վտանգված էինք զգում մենք մեզի։ Նա նույն ինքն մահն էր, որ գալիս էր։ Ժողովուրդը խելահեղ ճշում և օգնություն էր աղաղակում։ Այդ ճակատագրական րոպեին Գրիգոր եղբայրս իր հրազենը քաշել էր, ցույց էր տալիս, բայց թուրքը կարևորություն չէր դարձնում։ Երբ նա մի քայլ ևս ներս դրեց իր ոտը լուսամուտից և պատրասվում էր մառան իջնել, հանկարծ իմ Գրիգոր եղբոր հրացանը ահավոր աղմուկով պայթեց։ Թուրքը ընկավ պատուհանի մեջ։ Նա զարնվել էր ուղիղ ճակատից։ Այս մահը կատաղեցրեց դրսի ամբոխին։ Կարկուտի նման զենք էին արձակում մեր վրա։ Մենք ներսը մահվան սարսափն էինք ապրում։ Մի այլ ոստիկան սպանյալի դիակը պատուհանից քաշեց դուրս, բակը և ուզում էր ինքը մտնել։ Այդ միջոցին մեզանից մի կին շփոթված մեկ պատուհանից մյուսն անցնելու ժամանակ սպանվեց, ընկավ և մեռավ անմիջապես։ Հայրս, որ մառանի դուռն էր պաշտպանում, դրսից արձակված փամփուռաներից ծանր վիրավորվել էր։ Նոր ոստիկանը, որ վճռական ներս էր ուզում մտնել, եղբորս գնդակից վիրավորվեց և ընկերները նրան էլ դուրս քշեցին։ Այսպես 4 ժամվա դիմադրությունից հետո, որ մեզ համար մի տարվա չափ երկար էր թվացել, վերջապես անգլիական զորքերը օգնության հասան և մենք այս անգամ էլ փրկվեցինք ստույգ մահից։

Երբ մառանից դուրս էինք գալիս, բակի մեջ սպանված տեսանք այն հայ զինվորին, որ նոր էր իր ընտանիքը գտել, և անշուշտ 4 տարվա բաժանումի կարոտը դեռ սրտում, նահատակվել էր շարագործների գնդակով։ Ինչպես երևում էր նա շվարել, մտել էր սենյակում դիզված անկողինների տակ։ Կողոպուտի ժամանակ նրան երևան էին հանել թուրքերը ու շարշարալից սպանել, որովհետև մենք պարզ տեսնում էինք, որ նրա երեսը մի քանի տեղից թրով ճեղքվել էր և ականջի մեկը չկար։ Նրա ընտանիքը և երեխան իմացել էին դժբախտությունը և եկել մեր տունը, այնպես էին լալիս, այնպես

սրտահուշող երգում, այնպե՛ս խոսում, որ քա՛ր լինելը կճայ-
թե՛ր:

Այսպես մենք մի հին ղենքով 15 փամփուշտով, 4 ժամ
դիմադրելուց հետո ազատվել էինք 34 հոգի: Մեզանից զոհ-
վել էին միայն 2 և վիրավորվել էր հայրս: Իսկ թշնամուց
ընկեր էր մեկ անձ և վիրավորվել՝ 3 հոգի: Զենքով փրկել
էինք մեր կյանքն ու պատիվը:

Հայրս հիվանդանոց գնալու ճանապարհին տեսնում է,
որ խուլ ու ամաչի փողոցներից, կառքերի մեջ լցրած, փո-
խադրում են հայերի արյունլվա դիակներ: Այդ կառքերը
գնում էին քաղաքից դուրս, թուրք գործակալների խորհրդ-
ով, այնտեղ գաղտնի թաղվելու համար: Պատահեցին և այլ
դեպքեր, արաբներից ոմանք իրենց սպանած հայի դիակը մի
քանի օր սպասեցնելուց հետո, իբրև իրենց հարազատ մեռե-
լին լալով թաղեցին: Ուրիշները իրենց պատերի կամ պար-
տեզների մեջ անհետ կորցրին հայ նահատակների նշխար-
ները: Հալեալի ջարդին ևս մի քանի հարյուր հայեր զոհվե-
ցին, երբ անգլիական 40 հազարանոց մի բանակ էր գտնվում
Հալեալի շուրջը և կարելի էր առանց մի զոհի առաջն առնել
և ցրել արյունարբու խուժանին: Անգլիացիները նույնիսկ
անտարբեր գտնվեցին հանցավորները պատժելու գործում,
միայն մի քանի հոգի կախեցին և այսքանով էլ փակվեց
խնդիրը: Առհասարակ մի առեղծվածային դեպք էր Հալեալի
ջարդը անգլիացիների ներկայության:

Կոտորածի ժամանակ հայերից անմիջապես մի մարմին
գնացել էր հայտնելու ջարդի մասին և խնդրելու անգլիա-
ցիներից անմիջական և անհապաղ օգնություն: Անգլիացի
հրամանատարը սակայն, նախ «չէր հավատացել» ջարդի
պատմությանը.

— Ինչպե՛ս կարելի է խաղաղ բնակիչներին առանց
պատճառի կոտորել, ինչո՞ւ պետք է այդպես վարվեն, ինչ-
պե՛ս կլինի այդ:

Հետո ժամացույցը նայել ու պատասխանել էր.

— Դե՛ լավ, այժմ իմ զինվորները պատրաստվում են

նախաճաշելու, նախաճաշից հետո անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնենք:

Մինչև որ անգլիացի զինվորներն իրենց նախաճաշը վերջացրին ու գործի դիմեցին, արդեն հարյուրավոր անմեղ հայ զոհեր, դիտապաստ ընկել, նահատակվել էին:

Երբ ես բժիշկ Ալթունյանի հիվանդանոցը գնացի հորս տեսնելու, հիվանդանոցի հսկա շենքը լիքն էր վիրավորներով: Հիվանդանոցում մահճակալ չէր մնացել և հայրս ու նրա հետ տասնյակ վիրավորներ պառկել էին տախտակամածի վրա: Ուրիշ հիվանդանոցներում էլ վիրավորներ շատ կային, դրանցից շատերը մահացան հիվանդանոցներում՝ իրենց ստացած ծանր վերքերի հետևանքով:

Մենք մի քանի ամիս հարկադրաբար մնացինք Հալեպում հորս վերքի պատճառով:

Ցասումով և ընդվզումով հարցնում էի ես ինձ — միթե՞ մեր ցավերի, մեր վշտերի ու տանջանքներին վերջը գալու չէ. միթե՞ անվախճան է հայի դժբախտության և արյան ճանապարհը:

ՎԵՐԱԴԱՐՁ

Հորս վերքն ապաքինվել էր: Մենք 1919-ի աշնանը Հալեպից վերադառնում էինք Կ. Պոլիս: Մեր գնացքին կապել էին մի շքեղ վագոն, որի մեջ նստած ճամփորդում էր անգլիացի բարձրաստիճան մի զինվորական: Միլլի (քեմալական) շարժումը նոր էր սկսել այդ օրերին, բայց արդեն թուրք պարտիզաններ անցել էին գործի:

Նրանք տեղեկություն ստացած լինելով անգլիացու մասին և առհասարակ արտահայտելու համար իրենց դժգոհությունը ծվատված թուրքիո քաղաքական տխուր վիճակի նկատմամբ, Սաքարիա գետի կամուրջներից մեկի տակ զետեղել էին մի ումբ, գնացքը օդը հանելու նպատակով: Կես գիշերին անց հանկարծ շոգեկառքը կանգնեց: Երկաթուղու պաշտոնյաները, վառ լապտերները ձեռքերին վազում էին դեպի ետ: Ես վար իջա: Մի քիչ հեռվից ջրի խոխոջն էր

լսվում, մի ցուրտ քամի սուլում և փախչում էր արագ: Գնացքը կանգնել էր բարձր լեռների մեջ, ոչ կայարան էր երևում և ո՛չ լույս: Հարցրի մի պաշտոնյայի, թե ինչո՞ւ է շոգեկառքը կանգ առել, ինչո՞ւ են իրենք իրար անցել:

— Խեղճ տղա, — պատասխանեց նա իմ անգիտության երանի տալով, — մի 5 վայրկյան առաջ բոլորս մեռած պիտի լինեինք: Կամուրջը մեր անցնելուց անմիջապես հետո ուժեղ խորտակվեց, գնացքի վերջին վագոնը կանգնել է աղետից հազիվ 5 մետր հեռու: Չեթեները (պարտիզանները) գործում են, մեր այստեղ կանգ առնելը վտանգավոր է:

Լուսանալուց հետո յուրաքանչյուր կամուրջի առաջ կանգ էր առնում մեր գնացքը, 5 վայրկյան սպասում և ապա անցնում: Երբեմն անգլիացի հրամանատարը ինքն անձամբ վագոնից ցած էր իջնում, քննում էր կամուրջի տակը և ապա շարունակում էինք մեր ճանապարհը: Մենք Կ. Պոլիս հասանք ու այնտեղ մնացինք մի երկու շաբաթ: Թուրքերի մայրաքաղաքը դաշնակից ուժերի կողմից գրավվել էր, ճամփաների վրա հսկում էին անգլիական, ֆրանսիական, իտալական զինվորներ: Ծովի վրա շարքով խարսխել էին ռազմանավեր: Մենք Կ. Պոլսից մեկնեցինք ու նախ հասանք Ռոդոստո և ապա Մալգարա: Ամենախոր հուզումով մեր տանից ներս մտանք ու լալիս էինք մեր վշտից: Տան ամեն մի անկյունը հիշատակներով լի էր, իսկ մեր սիրելիներից 4 հոգի թողել էինք անապատում. չէր կարելի շտխրել, չէր կարելի նրանց շոգեկոչել ու չցավել:

Մեզ տեղահանելուց հետո, մեր տունը տվել էին մի թուրք ընտանիքի: Թուրքը համարյա 4 տարի բնակվել և քար ու քանդ էր արել տունը, մի քանի դուռ հանել վառել էր, տախտակամածները տեղ-տեղ քանդել, պատերի ծեփը թափել, ապակիների մի մասը կոտրել և այդ վիճակում թողել, սենյակների անկյունը աղբ հավաքել: Անմաքրությունից տունը հոտում էր: Վարը պարտեզի մոտ լվացարանի շենքը կիսով քանդվել էր: Պտղատու ծառերի մեծ մասը կտրտվել, վառվել. պարտեզը անխնամ ու խոպան լքվել. վարդի թփերից ոչ մի հատ չէր մնացել, պարտեզի քարե պատը փլել էր:

Մեր տան մեջ բնակող այս թուրք ընտանիքը իբրև շնորհակալության նշան, ավերակի էր վերածել մեր սեփական օջախը: Հայրս սկսեց իր բռնյճը նորոգել և երկու ամսից ավելի աշխատեց, որ մի քիչ կարգի բերի: Տունը լիքը թողել էինք, բայց վերադարձին դատարկ ու կիսավեր դտանք:

Մեր քաղաքացիներից շատերի տան դուռը իսպառ փակվել էր: Մեկնող 800 ընտանիքներից հազիվ 70 ընտանիք վերադարձել էր բզկտված, հարազատներին կորցրած: Անցնում էինք ամայացած և անկենդան փողոցներով և հիշում, որ դեռ 4 տարի առաջ այդ փողոցներից կյանքն էր հորդում, երեխաների ուրախ ձայներն էր լսվում, կանայք և աշխատում և երգում էին, իսկ այժմ գերեզմանային լռություն էր տիրում և անցորդի սիրտը ճմլվում էր:

Հայրս նորից գործ սկսեց: Մի աշխատանոց վարձեց և իր արհեստով էր զբաղվում՝ ձգտելով կամաց-կամաց իր քայքայված տնտեսությունը վերականգնել: Այս երրորդ անգամն էր, որ նա 6 տարվա ընթացքում նոր արհեստանոց էր բաց անում, նոր գործիքներ շինում կամ գնում, նոր դրամագլուխ ձարում և սկզբից գործի ձեռնարկում: Մեզ նման նրանք, որ վերադարձել էին անապատից և փրկվել զուլումից, դրանք էլ կիսամարդեր էին դարձել: Մեր բոլորի առողջությունը խանգարվել էր ու մենք տիրացել էինք դանազան հիվանդությունների, ստեղծված վատ պայմանների հետևանքով: Հայրս գիշերները քնի մեջ աղաղակում էր, թուրքերը իրեն քնի մեջ հալածում էին:

Հիշենք մի քանի փաստեր, որ համոզեցուցիչ լինի: Բաղեշի, Մուշի և Սասնի շրջանում ապրում էին 150 հազար հայեր, դրանցից աղատվեցին հազիվ 10 հազար հոգի այն էլ ոչ թե թուրքերի գթասրտության հետևանքով, այլ նրանց ժամանակին հեռացած, փախած լինելով:

Բաղեշում ապրող 12 հազար հոգուց փրկվեց միմիայն 300 կին ու երեխա՝ իբրև հարձ ծառա: Տրաքիզոնում ապրում էին շուրջ 15 հազար հայեր, փրկվեցին միայն 2 ընտանիք և մի տասնյակ թաքնված կանայք: Տրաքիզոնի ջար-

դերի կազմակերպիչները հանդիսացան երեք հոգի. մի թուրք՝ Նահիլի բեյ, Տրաբիզոնի իթթահատի նախագահը և երկու գերմանացի՝ Շտանգեր թնդանոթաձիգ սպա և Շուլենբերգ՝ Թիֆլիսի նախկին գերման հյուպատոս: Կարինի 18000 հայերից փրկվեցին 120 անձ, կին և երեխա, միայն 6 այր: Իսկ Կարինի շրջակա հայաբնակ գյուղերի ժողովուրդը գրեթե անմիջապես բնաջնջվեց:

Նույն դեպքերը կրկնվեցին Երզնկայի, Սեբաստիայի, Փոքր Ասիայի, Կիլիկիայի և անգամ եվրոպական Թուրքիայի հայերի նկատմամբ:

Այսպես ամայացել էր ամբողջ Թուրքահայաստանը: Քաղաքները դատարկվել էին իրենց շինարար ձեռքից, գյուղերը բոլորովին փշացել: Հրդեհը մոխիրի էր վերածել հայկական հազարավոր շեն տներ, վերադարձող հայ բեկորները ենթակա էին ոչնչացման: Ոչ մի բան չէր մնացել իրենց երեկվա հարստությունից՝ բացի տան շոր պատերը, դրանք էլ կիսաքանդ: Ահավոր էր վերադարձողների վիճակը: Սակայն շարքաշ հայ ժողովուրդը կորած սիրելիների սուգն ու մոմուռը սրտում, սկսել էր խաղաղ աշխատանքի նվիրվել և նա գոհ պիտի լիներ, եթե այսուհետև նոր աղետներ իրեն անհանգիստ չանեին: Մահվան ճանապարհից վերադարձած հայերի մեջ գտնվում էին թուրքերի հարեմներից (կանանոցներից) և արաբների վրաններից ազատված հայ աղջիկներ ու կանայք: Նրանք բռնաբարվել էին թշնամու կողմից ու հարկադրաբար ծառայել նրանց: Շատերը երեխաների մայր էին դարձել այնտեղ, բայց երբ փրկության ժամը հնչել էր, նրանք վերադարձել էին իրենց ժողովրդի գիրկը:

Որբերի բանակից անկախ, մեծ էր լվկված այս աղջիկների թիվը:

Ամերիկահայ երիտասարդները հաշվելով, որ նրանք անարդ թշնամու զոհերն են և ոչ մի տարբերություն չկա պատերազմում կռվի մեջ վերք ստացած կամ մի անդամը կորցրած հաշմանդամ զինվորի և սրանց միջև, հաշվելով որ նրանք անպատվվել էին բռնորեն, իրենց ազգային գաղափարի համար, գալիս էին հեռավոր Ամերիկայից Պոլիս, առանց

քծախնդրության իբրև ջարդերի աղատված մասունքների,
ջուրում էին մի աղջիկ, օրինավոր կերպով ամուսնանում,
վերադառնում Ամերիկա, ընտանիք կազմում և ամեն ճիգ
թափում, որ տանջված հայուհին երջանիկ լինի:

Վերադարձին մենք շատանք այն հին կյանքը, որ թողել
էինք տեղահանվելուց առաջ:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչ որ էլ լինի, մի քանի շրջաններում թուրքահայերի
ցույց տված հերոսական դիմադրությունները, թշնամու դեմ
նրանց վարած հերոսական կռիվները, մեր տեղահա-
նության արյունոտ պատմության մեջ մխիթարական էջերն
են կազմում ու պարտավոր ենք ասել, որ դրանք հպարտա-
ցուցիչ են բոլոր հայերի համար:

Եթե մարդ այդ կյանքի ու մահվան գուպարների ան-
նպաստ պայմաններին և անբավարար միջոցներին է ծանո-
թանում, երբ մարդ առարկայորեն մոտենում և անաչառոր-
են վերլուծում է դեպքերը, չի՞ կարող հիացմունքով չլցվել
դեպի մեր փոքրիկ ու հերոսական ժողովուրդը և չի՞ կարող
չընդունել հայի պատվով մեռնելու բարձր գիտակցականու-
թյունը: Որքա՞ն ամոթալի կլիներ, եթե հայը միայն լուռու-
մունք, կրավորական կերպով մորթվեր և ո՛չ մի ինքնապաշտ-
պանություն ցույց չտար: Այսօր մենք հպարտանքով ու հար-
գանքով հիշում ենք Վանն ու Շապին Կարահիսարը, Սվեդիան
ու Եդեսիան, Հաջն ու Զեյթունը, որոնք փրկեցին ամբողջ
հայության պատիվն ու արձանագրվեցին մեր պատմության
մեջ որպես խիզախ քաջության հոյակապ էջեր:

Կյանքը նրա՛ն է պատկանում, ո՛վ մահից չի վախենում:
Իսկ հայն իր պատմության ամբողջ ընթացքում մահվան հեռ
է պայքարել և շատ հեղ արհամարհելով նրան, հաղթականո-
րեն առաջ է անցել: Վանն ու շրջանի մի շարք գյուղերը
կազմակերպվել, որոշել էին դիմադրել թուրքերի ոճրային
ծրադիրներին: Երբ նրանց մի քանի աչքառու մարդկանց
խարդախությամբ կձերբակալեն ու գաղտնի կսպանեն,

մշուսները է՛լ հերթի չեն սպասում, այլ կբարձրացնեն ըմբոստութեան դրոշը: Կանխապես պատրաստված ծրագրի համաձայն կանցնեն դործի, իրենց մոտ գտնված հրացանները կբաժանեն վարժ մարդկանց, խմբեր կստեղծեն, մի քանի անհրաժեշտ դիրքեր ու փողոցներ կգրավեն: Ուտելիք, պաշար մի տեղ կհավաքեն նորմայով բաժանելու, որպեսզի մի օր ավելի տոկան ու դիմադրեն: Մի արհեստանոց զինագործարանի կվերածեն, ուր կնորոգեն հին զենքեր, կլցնեն պարապ փամփուշտներ, կշինեն սուրեր, և նույնիսկ ինքնահնար ուսմբեր կպատրաստեն: Կստեղծեն ղեկավար մարմին, կապ զանազան խմբերի միջև և դործը կվարեն զինվորական կարգ ու սարքով:

Թուրքերը տեսնելով հայերի այս կեցվածքը կհարձակվեն հայ թաղամասերի վրա՝ իրենց սովորութեան համաձայն կոտորելու խաղաղ ազգաբնակչությունը: Բայց այս անգամ նրանք կհանդիպեն ուժեղ ընդդիմության և զոհեր տալով կնահանջեն: Հայերը կգրավեն ռազմական ավար, մի քանի փոքր թնդանոթ և իրենց դիրքերը ավելի կամրացնեն: Թուրքերը նոր ուժերով կրկին կհարձակվեն՝ էլի անհաջող: Հայերը կգրավեն թուրքական զորանոցը, գերիներ կվերցնեն բազմաթիվ զենքերի հետ և թուրքերի մեջ սարսափ կստեղծեն: Արդեն թուրքը սովոր էր անզեն ու անպաշտպան կանայք ու երեխաներ կոտորելու, իսկ երբ նա գտնվում էր զինյալ ուժերի առաջ՝ խեղճանում, փախչում էր:

Վանա հայերի դիմադրությունը խորտակելու գործը կստանձնի մի գերման սպա: Նա մի մուշ գիշեր թնդանոթները շարել կտա և կհրամայի անխնա ուժակոծել: Հետո կհրամայի զինվորներին առաջ շարժվել: Բայց հայերը քնած չեն, նրանք հսկում են արթուն, երբ թուրք զինվորները մերձենում են հայերի դիրքերին, անօրինակ կրակոցի տակ ընկնում, սպանվում են: Գերման սպան հայտարարում է «Այգախիսի դիմադրություն չէի սպասում»: Եվ երկու օր վերջ գրված խառակ հեռանում է Վանից:

Վանը մի քանի ամիս դիմադրում է մինչև ուսական բանակները գրավում են այդ վայրերը, կովոդ Վանա հայու-

Բյուռնը փրկվում է շնորհիվ իր դիմադրութեան և ավելի քան 100.000 հայեր ապաստանում են Երևանի շրջանում:

Շաբին Կարահիսարը նույնպես ըմբոստացել էր: Այս քաղաքի հայերը հարձակվել էին բերդի վրա և գրավել թուրքերից: Ամբողջ հայութիւնը բերդի մեջ ապաստանել էր: Թուրքերը բերդը գրավելու նպատակով հարձակվել էին, բայց չարաչար պարտված ու զոհեր տալով նահանջել: Քանի-քանի անգամ նրանք փորձել են բերդը գրավել, բայց հայ քաջերի գնդակների տարափի տակ միշտ փախել զոհեր տալով: Շաբին Կարահիսարի հայերը դիմադրել էին մինչև իրենց վերջին փամփուշտը ու մի պատառ հացի սպառումը: Նրանք պաշարված լինելով ո՛չ մի օգնութիւն չէին ստացել դրսից, այդ պատճառով ստիպվել էին դիմադրութիւնը դադարեցնել: Թուրքերը նախ վախով, դողով մոտենում են բերդին, բայց երբ նրանք ստուգում են, որ հայերի մոտ դիմադրութեան ո՛չ մի միջոց չի մնացել, խուժում են անարգել բերդից՝ ներս ուղարկեցած մնում: Հայերի մեծ մասն արդեն անձնապաշտ էր եղել, մի մասը բերդի պարիսպներից վար էր նետել իրեն: Շաբին Կարահիսարը կարող էր երկար ժամանակ դիմադրել ու դիմադրել, եթե նա բերդում սննդի ու ռազմամթերքի պաշար ունենար: Նա ընկավ հերոսի մահով, ինչպես ռազմաճակատի վրա մինչև վերջին փամփուշտն արձակող հերոս զինվորը:

Սվեդիո (Ալեքսանդրեոսի շրջան, Կիլիկիա) հայերն էլ նույնպես ապաստամբեցին ու բարձրացան Մուսա դաղը (Մովսեսի լեռ), որ գտնվում է Միջերկրական ծովի ափին: Սրանք էլ կռվեցին թուրքական կանոնավոր բանակի դեմ և 40 օրվա հերոսական կռիվներից հաղթական դուրս եկան: Սվեդիո հայերը Մուսա դաղի վրա իրենց անբավարար ու խեղճ միջոցներով հիացումի արժանի դիմադրութիւն են ցույց տվել: Նրանց ղենքը միանգամայն բարոյական էր, անխորտակելի ոգին, հզոր կամքը և ի հարկին մեռնելու քաջութիւնը: Այստեղ էլ փոքրիկ խմբեր գործում են, որոնք գրավել էին լեռան կարևոր ռազմակետերը, խրամներ էին փորել ու գործի չծվել՝ պառավներից մինչև տասնամյա

տղաքը: Ամենքը աշխատում էին թեթևացնել մարտիկներին
գործը: Այստեղ կիներն անգամ հրացանը ձեռին կանգնել
էին իրենց հանձնված դիրքերի վրա ու կռվում էին քաջու-
թյամբ: Այստեղ էլ դինադործարանը աշխատում էր օգտա-
կար հանդիսանալ պայքարին իր նորահնար զենքերով ու
պայթուցիկներով:

Թշնամին բազմաթիվ անգամներ հարձակվում է լեռը
գրավելու և ըմբոստները ոչնչացնելու նպատակով, հարձակ-
վում է 15.000 հոգուց բաղկացած խառնիճադանձ բանակով,
բայց հազիվ մի քիչ բարձրացած ստիպված թավալվելու
փախչում է ցած, որովհետև ոչ միայն հայ քաջերի զնդակ-
ներն էին գործում, այլև պատանիների վերևից ներքև գցած
խոշոր քարերը:

Մուսա դադի հայերը լավ էին իմանում, որ ծովի վրա
ման են գալիս ֆրանսիական զրահավորներ: Մի անգամ
նրանք տեսնում են նավի ծուխը ծովի վրա ու քաջ լուզորդի
միջոցով լուր հասցնում և օգնություն խնդրում: Ֆրանսիական
զրահանավի միջոցով փրկվում են նրանք, թվով շուրջ 4 հա-
զար հոգի, 40 օր խիզախորեն դիմադրելուց հետո:

Այս հերոսական դեպքի վիպասան Ֆրանց Վերֆելը երկ-
հատոր ընդարձակ մի վեպ գրեց, որ մեծ ընդունելություն
գտավ, և մի քանի լեզուներով թարգմանվեց: Ամերիկայում
կինոյի վերածեցին վեպը, սակայն թուրքական դեսպանը քա-
ղաքական հարց բարձրացրեց, բողոքեց Միացյալ Նահանգ-
ների կառավարության, թուրք դեսպանը հազարավոր ոսկի-
ներ ծախսեց և ի վերջո հաջողեց կինոյի ցուցադրությունը
արգելել Ամերիկայում:

Սվեդիո հայերը պատերազմից հետո վերադարձել էին
իրենց արժվեքույնը և այնտեղ ապրում էին՝ նվիրված իրենց
խաղաղ աշխատանքին, հողագործության: Սվեդիան Սիրիայի
սահմանների մեջ էր մտել: Թուրքերը այս հայերից վրձ
լուծելու համար Սվեդիան ուղում էին Թուրքիային կցել, այն
նկատելով Թուրքիայի մի «սանջակը», անբաժանելի մասը:
(Երևի նրանց ունեցած 800 հազար քառակուսի կիլոմետր
հողը քիչ ու անբավարար էր գալիս 12 միլիոն թրքության):

Անգլիայի ստիպումով Ֆրանսիան համաձայնեց, և երբ աշդ հողամասը հանձնվելու էր Թուրքիային, այնտեղի հայ բնակչությունն իր մեռելների ոսկորներն անգամ հողից հանելով՝ գաղթեց Սիրիա։ Հազիվ մնացին մի քանի ընտանիք՝ Թուրքերի անուշ խոսքերից խաբված։ Այդ հայերից մեկը, անունով Սարգիս, Թուրքերի մտած օրն իսկ իր արտի մեջ աշխատելու ժամանակ սպանվեց։

Ամենասրտահույզը սակայն Նդեսիայի (Ուրֆա) հայերի դիմադրությունն է և Յոթնեղբայրյան ընտանիքի անօրինակ քաջագործությունները։ Այստեղ պայքարը լինում է ավելի խիստ և ավելի հերոսական։ Հայերը շատ լավ են գիտակցում, որ պիտի կոտորվեն, նրանք համոզված են, որ ո՛չ մի օգնություն չի կարելի հուսալ արտաքին աշխարհից։ Հենց գաղափարական ու մարդկային վեհանձնությունը մահն արհամարհելու մեջ է։ Նրանք էլ ընդվզում են Թուրքական ոճրային ծրագրների դեմ և ցանկանում են դյուզապետքար մեռնել։ Դիմադրում են հարձակվող Թուրք հորդաներին, դահեր պատճառում և նահանջ պարտադրում նրանց։ Թույլ չեն տալիս, որ Թուրքերը հայկական թաղերին մոտենան, քանի՜ քանի՜ անգամ գրկընդխառն կռիվներ են տեղի ունենում։ Յոթնեղբայրյան հերոսը, իբրև նոր սասունցի Դավիթ, մեկը մյուսի հետևից գետին է զարկում թշնամիներին և կռվում կատաղի թափով։ Յոթնեղբայրյան դյուզազներ վերջին փամփուշտը արձակում է, որ մի թշնամի է՛լ ավելի ընկնի։ Սա հայերի ընդունած սովորության հակառակ էր, որովհետև վերջին փամփուշտը պահվում էր իր անձի համար։ Յոթնեղբայրյան Մկրտիչը ինքն իրեն թունավորում է և մահանում։ Իսկ մի ուրիշ հերոս նստում է մի տակառի մեջ և իրեն բարձրից ցած է դցում, վարը Թուրքերի մոտ։ Երբ թշնամիները գալիս են տակառի մոտ, նա դուրս է խոյանում, դաշույնով հարձակվում Թուրքերի վրա, մի քանի հոգի ևս սպանում և ապա բազմաթիվ դիմվորներով պաշարված՝ ընկնում ասպետորեն։ Իսկ ուրիշներ իրենց վերջին փամփուշտով անձնամպան են լինում։

Նդեսիո մեջ, հայերի դիմադրության միջոցները սպառ-

ալելուց հետո միայն, թուրքերը խուժում են հայերի
թաղամասս և մոլեգնորեն կոտորում մնացողներին։ Այստեղ
պիտի ավելացնել, որ թուրքերը շկարենալով ընկճել Եդեսիո
մի ափ կտրիճներին, վերջին բոպին դիմում են գերմանա-
ցիների օգնության։ Բարբարոս գերմանացիները գալիս են
թուրքերի պակաս թողածը լրացնում, նրանք վեց թնդանոթ-
ներով ոմբակոծում են հայկական թաղամասը, քանդում և
ավերում...

Այս հերոսական դիմադրությունների ամենից հատ-
կանշական կողմն այն է, որ թուրքերը հակառակ իրենց ան-
սահման միջոցներին և անհամեմատ գերակշիռ թվին, չեն
կարողացել ո՛չ մի ըմբոստություն իրենց ուժով ընկճել,
նվաճել. այլ նրանք ամեն մի հարձակման զոհեր տալով
խայտառակաբար նահանջել են, սպասելով, որ հայերի դի-
մադրության միջոցները սպառվեն և միայն ա՛յն ժամանակ
ցույց տան իրենց «հերոսությունը»։

Նմանօրինակ դիմադրություններ տեղի ունեցել են ու-
րիշ վայրերում էլ՝ Հաջըն, Զեյթուն և այլն։ Այս բոլորը ա-
պացույց են, որ հայ ժողովուրդը դիտե՛ ի հարկին զենքը
ձեռին կռվել ու մեռնել, դիտե՛ իր կյանքն ու պատիվը անար-
գանքից փրկել։

Մեր ձախորդությունների պատասխանատվությունը մեծ
մասամբ ծանրանում է դաշնակցության կուսակցության
վրա, որ անդունդ էր առաջնորդում մեր բազմաշարժառ. մաս-
սաներին։ Նա հույսը դրել էր Արևմուտքի վրա, Հայաստանից
հաղարավոր կիլոմետր հեռու գտնվող ադմեսամիտ դիվա-
նագետների վրա, հաշվի չէր առնում մեր երկրի մեծ դրա-
ցին, եղբայրական ուս ժողովուրդը, և վստահելով արև-
մուտքի նենգ պետությունների տված խոստումներին՝ ար-
կածախնդրություններ էր կազմակերպում, Բանկ Օտտոմանի
նման անհեռատես ցույցեր, որոնց հետևանքը լինում էր ոչ
մի օգուտ, բացի հաղարավոր անմեղ հայերի կոտորումից։
Եվ խաբված ժողովուրդը նույն այդ Բանկ Օտտոմանի դեպ-
քի առթիվ սգավոր սրտով երգում էր.

Կհուսային վերջին պահում
Թե կու գա անգլիացին,
Հույսեր, հույսեր, անվերջ հույսեր
Այրուհիս երազներ...

Քաղաքական ցուցամուկութունը մղեց արկածախնդրութունների և նա պատճառ դարձավ մի շարք ազգային աղետների: Անգամ Ռուսաստանի Հոկտեմբերյան Մեծ Ռևոլուցիայից հետո, նրանք շարունակեցին դործիք ու խաղալիք լինել Անտանտի ձեռքում և մեր երկրում ազգամիջյան թշնամութուններ, պատերազմներ առաջացնել, առատորեն թափելով հայ ժողովրդի արյունը, պատճառ դառնալով սովի, ավերվածության և համաճարակների: Եվ երբ ազատարար Կարմիր Բանակն էր գալիս Հայաստանը փրկելու այդ կործանարար դրությունից, նրանք դիմեցին թուրքերի օժանդակությանը, թուրքերի օգնությունը խնդրեցին Հայաստանին ազատութուն բերող Կարմիր Բանակի դեմ կռվելու համար: Դաշնակցութունը մինչև այսօր, որպեսզի հայ դադթականների հայրենիք վերադարձին արգելք լինի, տեղոր է կազմակերպում ներգաղթի հանձնախմբերում աշխատող առաջադեմ մտավորականների դեմ, պրովակացիաներ է սարքում, մրտքեր է պղտորում, որ հայ ժողովուրդը չվերադառնա իր Սովետական ազատ հայրենիքը:

Մեր նյութի սահմանները թույլ չեն տալիս մանրամասն զբաղվելու այս կուսակցության անթիվ հանցագործութուններով, մենք միայն ցանկանում ենք շեշտել այն պատասխանատվութունը, որ ընկնում է նրա վզին՝ թուրքահայերի կոտորածների ու տեղահանության կապակցությամբ:

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Թուրքահայերի տեղահանության հետևանքով մեր կրած վնասներն ու կորուստներն անհաշվելի են: 1915-ի եղեռնը անօրինակ է համամարդկային պատմության մեջ

իր ձևով ու ծավալով: Հիշում եմ մի ցանկ, որ ցույց էր տալիս մեր կորուստները: Այդ թվերի համաձայն հայերը Թուրքիայում կորցրել էին հազարավոր դպրոցներ, եկեղեցիներ ու վանքեր: Քանդվել, վառվել կամ ամայացել էին հայաբնակ 800 գյուղ, 70 քաղաքներից դատարկվել ու բնաջրնջրվել էին հայ բնակիչները: Մարդկային կարուստը հաշվված էր շուրջ մեկ միլիոն անձ: Մեր ժողովրդի մոտավորապես կեսը նահատակվել էր: Այս, մեզ նման փոքրիկ ժողովրդի համար շանթահարիչ աղետ էր, որ դարմանելու համար տասնյակ տարիներ էին հարկավոր:

1915-ի եղեռնում ամեն մի հայ իր զոհն ունի: Չկա մի տուն, որ կարենա ասել, թե ինքը անմասն է մնացել: Նույնիսկ այն փոքրիկ բացառություներ, որ մի կերպ հաջողել էր իր տնից չբաժանվել, դրանք էլ մերձավոր ազգականներ կորցրել են և նրանց սիրտն էլ է վառվում հարազատ սիրելիների անհետացումով: Իսկ այն հայերը, որոնք Թուրքիայից հեռու այլ երկրներ լինելով ո՛չ զոհ են տվել, ո՛չ էլ տառապել, նրանք էլ ցավ են զգում իրենց ազգի ընդհանուր նահատակների համար: Դահձապետ Թալեաթը ժամանակին ասել էր արդեն. — «Եթե մեզ հաջողվեց հայերին ամբողջապես չեզոքացնել (հասկանալ ջարդել) լա՛վ, եթե չհաջողվեց՝ այնպես անենք, որ նրանք առնվազն 50 տարի հետ գնան»: Եվ հայերը տնտեսապես, մշակույթի ասպարեզում քայքայվել ու մեծամեծ վնասների էին ենթարկվել: Հայերի թողած անշարժ հարստությունն ու առհասարակ նրանց ինչքերը, որոնք ամբողջապես կորան մեզ համար, թուրքական կառավարությունը որպես «լքյալ գույք» գրավեց. դրանց արժողությունը հասնում է 30 միլիարդ ուրբլու:

Կարող է ամեն մարդ պատկերել, թե որքա՞ն ծաղկյալ, որքա՞ն բարգավաճ կլինեիր հայկական կյանքն այսօր, եթե մեր ժողովուրդը չարաչար կոտորված չլիներ:

Այս անհատուցանելի, խելապտույտ սլառձառով կորուստների պատասխանատուները անթիվ և անհամար են: Հայոց սպանդին մասնակցել են թուրք նախարարներից սկսած մին-

շե ամենահետին ոստիկանը: Այսպես թուրքական կառավարության 9 նախարարներ համաձայն էին եղել հայերի տեղահանության և ջարդերի ծրագրներին՝ գլխավորությամբ ներքին գործերի նախարար Թալեաթի և գլխավորական նախարար՝ էնվերի: Նաև՝ մի տասնյակ վալիներ (մարզային կառավարիչներ), մի հարյուրյակ մութասարիֆներ (շրջանային քաղաքների պետեր), մի քանի հարյուր քայմագամներ (քաղաքների և գյուղաքաղաքների պետեր), մի հազարյակ մյուդիրներ (ավանների և գյուղերի պետեր), բարձրաստիճան ոստիկանապետներ և պաշտոնակատարներ և այլն, գործադրել էին տրված հրամանը, իրենց կողմից ճոխացնելով տանջանքի ու բարբարոսության ձևերը: Թուրքիայի ոստիկանությունը, բայց մանավանդ թեշքիլաթը մախսուսիե (թուրքերի գաղտնի ոստիկանությունը) կազմակերպության հարյուր հազար անդամները իրենց ձեռքը ներկել էին հայերի անմեղ արյան մեջ: Թուրքական կառավարության մեղսակից ու գործակից էին դարձել գերմանացիների կայսրը Վիլհելմ Բ-րդը, Գերմանիայի Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմն ու Թուրքիայում գտնվող գերմանական բանակների վերին հրամանատար գոր. ֆոն Դեր Զոլցն ու զորավար ֆոն Զանդերսը: Նրանք ցանկացել էին ոչնչացնել մեր փոքրիկ անպաշտպան ժողովուրդ, որ դարե՛ր շարունակ ծառայել էր ընդհանուր մարդկութեան մշակույթին և իր մասնակցությունն էր բերել աշխարհի քաղաքակրթության:

Անգլիացիները թուրք շարագործներին բռնել և արգելափակել էին Մալթա կղզում: Բայց թուրք խորամանկ առաջնորդները առողջական վիճակ պատճառաբանելով, նույնիսկ ոմանք սուտ խենթ ձևանալով, բոլորն էլ ողջ առողջ դուրս եկան Մալթայից և ազատվեցին: Նրանցից շատերը Թուրքիայի հանրապետական կառավարության մեջ բարձր պաշտոններ թիրացան իբրև վարձատրություն հայկական ջարդերի, և մինչև օրս նրանք, որ դեռ ապրում են, ի պատվի են:

Անգլիացիները ուղղակի և անուղղակի կերպով մի՛շտ օգնել են թուրքերին և մինչև այսօր էլ օգնում են, թե ու

թիկունք հանդիսանում նրանց. օգնում են «դեմոկրատիզմի ջատագով» և «քաղաքակրթության պաշտպան» մեծ պետությունները, սեղմում են թուրքերի արյունոտ ձեռքը, օժանդակում են՝ միլիոններով ստերլինգ և դոլար հատկացնելով, դինո՛ւմ նրան, որպեսզի շարագործը վաղը նորի՛ց սպանի, նորի՛ց ավերի: Իսկ հայերի մեկ միլիոն զոհերի հանդեպ սառն անտարբերություն ցուցաբերող այս «ջենտլմենտ» «կուլտուրականները», Կ. Պոլիսը գրավելուց հետո, բարբարոսություն էին համարում և տուգանում ա՛յն քաղաքացիներին, որոնք հավը ոտից բռնած, գլխիվայր տանում էին յոուն... քիչ հետո մորթելու համար...

ԿՐԿԻՆ ԳԱՂԹ

Նախքան պատերազմի վերջանալը կանաչ սեղանի շուրջ Թուրքիան բաժանվել էր դաշնակիցների միջև. միշտ այդպես է լինում քանի դեռ թնդանոթն է որոտում՝ բայց կռիվը դադարելուց հետո դավերն ու անհամաձայնությունները սկսվում: Թուրքերը թեև պարտվել ու Թուրքիան գրավվել էր, բայց այժմ դաշնակիցները վիճում էին ու չէին կարողանում որսը բաժանել: Թուրքական հարցը, իր դիվային մատով անվերջ խառնակում, կնճռի, գորդյան հանգույցի էր վերածում մասնավորապես Անգլիան:

Քեմալական շարժումը օրեցօր տարածվում էր և թուրք բանակը դեպի արևմուտք առաջանում: Անապատներից նոր վերադարձած հայերի սիրտը նորից դո՛ղ էր ընկել: Նրանք անհանգստանում, մտահոգվում էին: Դեռ մի քանի տարի առաջ էր, որ վերադարձել էին մահվան ճանկերից ազատված, այժմ կրկին թուրքն էր գալիս, ստույգ մահն էր մոտենում: Հայերը է՛լ վստահություն չունեին թուրքերի վրա: Ակամա ամեն բան թողնում և Փոքր Ասիայի գյուղերից ու քաղաքներից խուժում էին դեպի Մարմարա ծովի ափերը և Իզմիր, այստեղից Թրակիա ելնելու, Բուլղարիա անցնելու. Հունաստան դնալու նպատակով: Նրանք նախընտրում էին այս երկրները, որովհետև Թուրքիայի մոտիկ սահմանակից լինելով կարելի էր կյանքերն ավելի շուտ փրկել:

Այս փախուստի ժամանակ, երկու տարուց ի վեր սըմ-
քած, պապանձված թուրքերը նորից սիրտ առած, նորից «հե-
րոս» դարձած, զինյալ խմբերով կտրում էին խեղճ ու ան-
պաշտպան հայերի ճանապարհը, կողոպտում նրանց և ապա
ւրածում: Մի քանի քաղաքների մեջ նորից ջարդեր էին կա-
տարվել: Բալքեսերում առաջին խմբով փախչող հայերը ա-
ղատվել էին, իսկ մնացողները կոտորվել: Ինձ ծանոթ Հա-
րություն Դանիելյանը, որ նույն քաղաքի բնակիչ էր և նրան
ճանաչում էի անապատից, առաջին խմբով կինն ու երկու
երեխաները զրկում է, որ ինքը մնա մի սալ ճարի, մի քիչ
անհրաժեշտ իրեղեններ վերցնի և այնպես հեռանա սեփա-
կան տնից: Թուրքերը սակայն քաղաքը պաշարում են և
թույլ չեն տալիս, որ հայերը մեկնեն. հետո բոլորին կոտո-
րում են: Հ. Դանիելյանն էլ ընկնում է թուրքերի սրի տակ, որ
նոր էր աղատվել այնքա՛ն վտանգներից ու շարշարանքներից:

Սակայն, հայերի համար ամենածանր հարվածն այն էր,
որ Իզմիրի առաջ կամ Մարմարայի վրա կանգնած անգլիա-
կան, ամերիկյան, իտալական և ֆրանսիական նավերն ու
զրահավորները ծովեզերք խոնված հայ անապաշտպան ժո-
ղովրդին չէին ցանկանում օգնել և նրանց վտանգված կյանքը
փրկել: Հաջողում էին աղատվել միայն նրա՛նք, որ կարո-
ղանում էին նյութական մեծ վճարումով պատահական մի
նավ նստել, առա՛նց մի բան վերցնելու իրանց սակավ ինչ-
քերից: Նավապետը հրամայում էր հայ գաղթականին ամեն
բան թողնել և միմիայն իր հոգին աղատել: Հայ աշխատա-
վոր և անգեն ժողովրդի համար ստեղծվել էր իսկական մի
Դյունկերգ, ետևից թուրքն էր գալիս, իսկ առջևը ծովն էր:
Վերահաս վտանգը սարսափի էր մատնել ժողովրդին և նրա
հուսահատական աղաղակները ծովի վրա կանգնած նավերը
չէին ուղղում լսել: Եվ հայերը զայրույթով նզովում էին
նրանց տերերին և ցանկանում, որ գոնե մի անգամ նրանք
էլ ընկնեն հայերի դրության մեջ և հասկանան դժբախտների
վիճակը:

Իզմիրի ծովափը մնացած հայ երիտասարդներից ոմանք լողալով, հեիհե հասնում էին մինչև նավերը, բայց նավի վրա հանգիստ կանգնած մարդիկ չէին խղճում ծովի մեջ օգնություն աղերսողներին և թողնում էին, որ նորից ետ դառնան, կամ հողնած ծովամուշն լինեն: Հայ գաղթականներից ոմանք ինձ պատմել են, որ հայ երիտասարդները փրկության ուրիշ ելք չունենալով փորձում էին խարիսխի շղթայի վրայով մագլցել ու վեր բարձրանալ և անգլիացիները նավի վրայից կրակում էին այդ խեղճերի վրա, կամ եռացրած ջուր թափում: Հայոց մոտավոր անցյալի պատմությունը, բարբարոս թուրքերի անօրինակ անգթությունների հետ, արձանագրե՛լ է և՛ «մարդասեր» եվրոպացու վատթարագուշն այս արարքն ու վերաբերմունքը:

Ի վերջո թուրքերը գալիս, հասնում են ծովափ և ո՛վ որ մնացել է այնտեղ կոտորում են:

Այսպես, Փոքր Ասիայից փախչող հայ գաղթականներով լցվել էր Ռոդոստոն ու Մալգարան: Այս խառնաշփոթության ժամանակ ամեն բան էժանացել էր, բացի սննդեղենի նյութերից: Ծախում էին մարդիկ ամեն բան, որ ընկնում էր ձեռնիրին, ծախում էին առանց սակարկության, մեռյալ գներով:

1922 թվի հոկտեմբերի սկզբին մեր քաղաքի շուկայում կանգնեց ամերիկյան մի շքեղ ինքնաշարժ: Մեջը նստել էին ամերիկացի և անգլիացի մի քանի սպաներ: Նրանք ցանկանում էին անգլիախոս մարդ իրենց ներկայացնել: Մենք բարձրագուշն կարգի երեք դպրոցական ընկերներ գտնվում էինք այդ պահին ինքնաշարժի մոտ: Մեր աղճատ անգլիերենով խոսեցինք և հասկացանք, որ այդ սպաները ազնի՛վ պարտականություն են վերցրել իրենց վրա և անձնվի՛րաբար ման են գալիս, հավաստում, որ այդ հողերը վեհանձնո՛րեն թուրքերին են հանձնվելու, հետևաբար, նրանք, որ չե՛ն ցանկանում թուրքերի իշխանության տակ մնալ, կարող են անմիջապես, քանի դեռ ուշ չէ, հեռանալ այլ երկրներ:

Հայրս շանթահարվեց, երբ ես նրան խոսեցի այս մասին: Մեր ձեռքում մի մանեթ չէր մնացել, նորից հարկ էր

դադլթել և նորից հարկ էր ամեն բան թողնել: Նա ուզում էր իր արհեստանոցի ապրանքները ծախել, բայց զնորդ չկար: Հայրս առաջարկել էր իր արհեստակից թուրք Հասանին, այս վերջինը պատասխանել էր առանց ամաչելու.

— Ի՞նչ կարիք կա որ փող վճարեմ, երբ վաղը բոլորը թողնելու և այնպես փախչելու ես:

Գրիգոր եղբայրս ահագին ծխախոտ էր մշակել, շատ ու շատ ծխասեր արել, պարտքերի տակ ընկել, մինչև որ 1000 կիլոգրամ ծխախոտ բերել էր տուն ու լցրել ամեն կողմ: Ծխախոտի կիլոգրամը մի տարի առաջ ծախվել էր 120 դուրուշի, բայց նա այժմ պատրաստ էր 20 դուրուշի տալ, նույնիսկ 10 տվողին չէր մերժի, բայց առնող չկար: Այսպես ամեն հայի տուն ու խանութ կրկին լիքն էր: Մի քանի օր հետամտեցինք, որ մի սալ ճարենք, չկարողացանք: Իրարանցումն սկսել էր, փորձառությունը ստիպում էր արագ շարժվել: Երրորդ անգամը լինելով թողինք ամեն բան, մի էշի վրա (այս էշը ծառայում էր Գրիգոր եղբորս ծխախոտի գործին) բարձեցինք երկու ծրար ճերմակեղեն, մայրս գրկեց իմ փոքրիկ կիսամյա քույրս, ևս շալակեցի գրգռիս ծրարը, հայրս մի կապոց վերցրեց և վերջին մի հայացք ձգելով մեր հայրենական տան վրա, կրկին հեռացանք:

Ի՞նչ դառն ճակատագիր, խորհում ու ձայնակցում էինք հորս հետ: Քանի որ կյանքի ալեկոծ ծովը մեզ Բուլղարիա էր նետելու, գաղթական էր դարձնելու, ինչո՞ւ դեռ 10 տարի առաջ, երբ տակավին ո՛չ մի դոհ չէինք տվել, երբ ո՛չ մի սեղ չէինք կորցրել, երբ մեր սրտերում ո՛չ սուգն էր նստել, ո՛չ վերք էր բացվել, երբ ամեն դյուրություն տալիս էր մեզ զորավար Գենևը, ինչո՞ւ այն ժամանակ չհամաձայնվեցինք ու չգնացինք Բուլղարիա: Հայրս քայլում էր դեպի մահը գնացող մի մարդու նման:

Բայց ո՞վ կարող էր կռահել ու հասկանալ կյանքի ապագա անակնկալները:

Բ. Մ Ա Ս

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ԹՇՆԱՄՈՒ ԶԴԱԴԱՐՈՂ ԴԱՎԵՐԸ

Տխուր էր պատկերը: Անծայրածիր ճանապարհը լիքն էր սալներով, գրաստներով և ոտով քայլող մարդկանցով: Հայերի հետ մեր շրջանի ամբողջ հույները գաղթում էին դեպի իրենց հայրենիքը, չցանկանալով թուրքերի իշխանության տակ ապրել: Բազմաթիվ գյուղեր դադարկվում էին իրենց բնակիչներից: Մարդիկ թողնում էին տուն ու տեղ, կրկին թողնում էին տարիների հոգնության ու վաստակի արդյունքներ և հեռանում: Մենք ճամփորդում էինք Կեշանի խճուղիով: Թեև այս ճանապարհը երկարացնում էր մեր ուղին, բայց ուրիշ ճամփաների վրա թուրքական ավազակախմբեր էին գործում, և սպանություններ կատարվում: Մենք ուրիշ հնարավորություն չունեինք: Առաջին օրը ուշ գիշերին հասանք Կեշանի առաջ և բաց դաշտում, կծկված, գետնի վրա քնեցինք: Հաջորդ օրը ճանապարհը էլի խճուղված էր հարյուրավոր նորանոր սալներով: Շատ դանդաղ էր շարժվում մեր քարավանը դեպի Ուզունկետիրի, մի օրվա ճանապարհը հասանք երեք օրից: Ուզունկետիրի կամուրջի առաջ այնքան շատ էր սալերի թիվը, այնքան մեծ խճողումը, որ մարդ հուսահատվում էր, թե ե՞րբ կկարողանա անցնել: Մարդկանց հոգու մեջ սարսափն էր ընկել և յուրաքանչյուր անձ ցանկանում էր մի րոպե առաջ անցնել կամուրջը: Տեղի էր ունենում կռիվ, սալերն իրար էին զարկվում, քանդվում, մի օր առաջ մարդիկ իրար էին սպանել: Մի ամբողջ օր հերթի սպասելուց հետո, մութ գիշերին անցկացանք կամուրջից:

վեց օր հեիհե ճանապարհորդելուց հետո, մի էշով, 1922 թվի հոկտեմբերի 22-ին, հողնած ու տխուր, երբ գիշերը վաղուց իջել էր արդեն, մեր քարավանը հասավ բուլղարական Սվիլենգրադ սահմանամերձ քաղաքը: Սոֆիան, Պլովդիվը և ուրիշ մեծ ու կենտրոն քաղաքներ խճողվել էին հազարավոր հայ գաղթականներով: Ստեղծվել էր բնակարանի տաղնապ: Հայրս բարվոք համարեց Սվիլենգրադում մնալ մի որոշ ժամանակ:

Մենք այլևս փրկվել էինք թուրքական դժոխքից, է՛լ մեր կյանքը ապահով էր: Բուլղար հյուրասեր ժողովուրդը սիրով ընդունել, ասպնջակություն էր տվել հալածյալ հայ գաղթականներին, որոնց թիվը շուրջ 30.000 էր:

Սակայն գտնվեցին ավելի «քաղաքակիրթ» երկրներ, որոնք իրենց խղճմտանքի ու սրտի հետ, ամուր փակեցին իրենց սահմանները և հայ գաղթականներով լիքը շոգենավեր, Միջերկրական ծովում, ափից-ափ, մուրացկան մարդկանց պես ման եկան, ողորմության պես մի ափ հող, մի խեղճ անկյուն խնդրեցին, որ կարողանան իրենց բազմաշարշար գլուխը դնել, թեկուղ մի շոր քարի վրա, բայց մերժվեցին: Այսպես, օրեր ծովի վրա թափառելուց հետո, երբ այլևս սպառվել էր նրանց հացի ու ջրի պաշարը, վերջապես կարողացան ափ ելնել: Իսկ Թուրքիայում միայն գավառներում մնացել էին շուրջ 20.000 հայեր, այն պատճառով, որ նրանք ժամանակին չէին կարողացել փախչել, փոխադրության միջոցների չգոյության պատճառով: Նրանք, այժմ պետք է համարել բռնորեն ձուլված և կորսված: 10 տարի առաջ Բուլղարիայում ինձ հանդիպեց Թուրքիայի ներքին գավառներից փախած մի հայ երիտասարդ, Հարություն անունով, որ հայերեն չէր իմանում, խոսում էր թուրքերեն, նա պատմում էր գավառներում ապրող հայ ժողովրդի անփառունակ վիճակի մասին, նա պատմում էր իրենց ընտանիքի մասին: Երկու քույրերը բռնի թուրքերը խլել, և ամուսնացել էին նրանց հետ: Հայերեն խոսելը համարվում էր ոճիր և արգելվել էր: Իրենց ընտանիքը այսպես քայքայվել, իրենք համարյա թուրքացել էին: Այս մռայլ փաստը խղճահարու-

Յյուշն էր պատճառել Հարությունին, նա մահը աչք առնելով
փախել հասել էր Պոլիս, Պոլսից անցել էր Բուլղարիայի
Վատնա քաղաքը, միայն հայ լինելու, հայ ապրելու և հայ
մեռնելու ուխտով: Պոլսի հայությունը մեծ մասամբ շգաղ-
թեց: Նրանք հաշվել էին, որ օտար դիվանագետների, դես-
պանների աչքի առաջ թուրքերը չեն համարձակվի ջարդեր
կամ կոդոպուտներ կազմակերպել: Իհարկե նրանք որոշ շա-
փով սխալվեցին:

Հայերի բնաջնջումից և մնացող հայերի փախուստից
հետո, ընչաքաղց և արյունածարավ թուրք հետադիմական
տարրերը, որոնք դարեր շարունակ սովորել էին որպես մա-
կաբույծ ապրել, ուրիշի արյունը ծծել, այս անգամ սկսեցին
Դերսիմի շրջանը ապրող քրդերին կոտորել: Հերթը եկել էր
Նրանց. նրանց, որ մի ժամանակ թուրքերի հետ միացած
կոտորում էին անմեղ հայերին: Թուրքերը հայերի հանդեպ
գործ դրված բռնություններն ու համիշտակությունները փոր-
ձեցին քրդերի վրա: Անշուշտ սուլթանների հատուկ հեռագի-
րը, որ մի ժամանակ խմբագրվում էր հայերի մասին, այժմ
նորից հաղորդվեց և այս անգամ քրդերի համար, Պոլսի փո-
խարեն, Անկարայում նստած հանրապետության նախագա-
հին.

— Ասայաշը բեր քեմալ դըր:

(Անգորրությունը կատարյալ է):

Սակայն, երբ թուրքական բանակը «հերոսությամբ» կո-
տորում էր փոքրաթիվ քուրդ դերսիմցիներին, այստեղ փա-
կագծի մեջ հարմար է հիշել նրա զավեշտաողբերգական մի
ռազմափորձը:

Աթաթյուրքը դեռ կենդանի էր: Բացի Թուրքիայի ավա-
դանուց հրավիրվել էին նաև օտար դեսպաններն ու նրանց
զինվորական կցորդները դիտելու համար Իզմիրի շուրջ կա-
տարվելիք թուրքական բանակի ռազմափորձերը: Բոլորը հե-
տաքրքրությամբ սպասում էին, բայց թուրքական և «թշնամի»
բանակները չէին երևում: Որոշյալ ժամանակը վաղուց էր
անցել և փորձերը դեռ չէին սկսել: Աթաթյուրքը ամբիոնի
վրա կանգնած կատաղում էր: Վերջիվերջո երևան է գա-

լիս, որ երկու բանականները ժամանակին սկսել են ռազմա-
փորձերին, բայց նրանք փոխանակ որոշված վայրում, հան-
դիսականների առաջ, իրար դիմավորելու և փորձեր կատա-
րելու, առա՛նց իրար հանդիպելու, զնայել իրար թիկունք
էին հասել...

Աթաթյուրքը այս աննախընթացորեն ձախողած ռազմա-
փորձերի վարիչ զորավարին հրամայել էր անձնասպան լի-
նել: Զորավարը կատարել էր իր պետի հրամանը, բայց նա
իր արյամբ իսկ շկարողացավ սրբել ա՛յն, ինչ որ արձա-
նագրեց ռազմափորձերի պատմությունը:

Հունաստանի հայ գաղթականները հազիվ հաստատվել
էին իրենց նոր միջավայրում ու գործի ձեռնարկել, երբ Հու-
նաստանի երբեմնի պրեմյեր մինիստր Վենիզելլոսը (անգ-
լիական քաղաքականության հավատարիմ ծառան) Փոքր
Ասիայում հունական բանակի պարտությունից և Իզմիրի
հույների կոտորածից վերջ, Անկարա էր զնայել ու համբուր-
վել Թուրքիայի պրեմյեր մինիստր Իսմեթ Յուենենիի հետ:
Այս հանդիպումից ու վերադարձից հետո Հունաստան ա-
ստատանած հայ գաղթականների կեսը — մոտավորապես
30.000 հոգի ստիպված հեռացավ Հունաստանից՝ հանձն առ-
նելով գնալ մինչև հեռավոր Հարավային Ամերիկա՝ տնտեսա-
կան ճգնաժամ, զինվորության հարց և այլ պատճառներ
նկատի առնելով:

Բուլղար մի մինիստր դահլիճից դուրս գալուց հետո
իրեն ծանոթ մի հայի հայտնել էր, թե թուրքերը պահանջում
էին հարավային Բուլղարիայի, թուրքական սահմանի մոտ
բնակվող հայերին տեղահանել և դեպի հյուսիս քշել, եթե
անշուշտ Բուլղարիան ցանկանում է քաղաքական լավ հա-
րաբերություններ և բարեկամություն մշակել Թուրքիայի
հետ: Բուլղարական կառավարությունը սակայն մերժել էր
այդ առաջարկը: Երբ թուրքերի պրեմյեր մինիստր, այժմ նա-
խագահ, Իսմեթ Յուենենին Սոֆիա այցելեց, Մուշանովի հետ
տեսակցելու, անշուշտ թուրքերի պահանջով, այդ օրերին
հայեր ձերբակալվեցին և մի քանի օրով բանտարկվեցին
մինչև որ Իսմեթ Յուենենին վերադարձավ Թուրքիա:

Մենք արդեն մի ուրիշ էջում ասել ենք, թե հայերի համար դրված վեպն անգամ հալածվում էր, կինոն խափանվում: Փարիզում տպվող «Լառուս» մեծ բառագրքի խմբագրության դեմ թուրքերը բողոքել էին, թե ինչո՞ւ Փոքր Ասիայի քարտեզի վրա տպագրվում է Armenia բառը: Այս պարագան հաճելի չէր թուրքերին և նրանք «Լառուս»-ի մի տարվա համարում հաջողել էին ջնջել տալ այդ բառը անշուշտ մեծագումար ծախսեր անելով:

Թուրքիան, ա՛յն օրերին, որ արևելյան ուխտը կնքեց Իրանի հետ, ա՛յդ օրից Իրանում ապրող հայերի վիճակը վատթարացավ, հալածանքներ ու սեղմումներ սկսվեցին, նույնիսկ դպրոցներ փակվեցին (մի ժամանակ նույնը պատահեց և Հունաստանում): Այս բոլորի մեջ թուրքական դավադիր մատը կար:

Թուրքական ռադիոն ու մամուլը, հիտլերյան պատերազմի ժամանակաշրջանում անվերջ գրգռիչ ու վարկաբեկիչ լուրեր էր տարածում հայերի մասին, նպատակադրելով վտանգել, խռովել հայերի հանգիստն օտար երկրներում: Պատերազմի ընթացքում, որպեսզի Սիրիայի հոծ հայությունը կասկածելի դարձնեն և հալածանքների առիթ տան, ռադիոյով տարածում էին, թե Նրուսադեմի պատրիարքի նախագահությամբ հայերը ժողով են գումարած, հանձնախումբ են կազմած և կամավորական գոհարներ են պատրաստվում, որոնք պետք է կռվեն գերմանացիների հետ կողք-կողքի, արդեն իսկ մի քանի հազար կամավորներ պատրաստվում են մեկնելու և այլն: Իսկ գերմանական ազդեցության տակ ընկած երկրների մասին էլ ասում էին, թե հայերը անգլիացիների ծառայության մեջ լրտեսությամբ են զբաղվում: Կ. Պոլսում լույս տեսնող թուրք ռսանողության օրգանը «Բիրլիք» (Միասնություն) մի անգամ հայերի դեմ գործած իր ելույթում գրել էր. — «Շինեցե՛ք հայեր, գեղեցկացրե՛ք Նրեմանը, վաղը մենք կգանք պատրաստի կտիրանա՛նք նրան»:

Վիտինյան-Ջանիկյան ազգանունով մի հայ, Եգիպտոսից նստում է ռումինական մի շոգենավ և առևտրական նպատակներով մեկնում է Ռումինիա այնտեղ ապրող իր ազ-

գաղաններին տեսնելու մտքով: Շոգենավը կանգ է առնում Պոլիսի առաջ, «հառաջադեմ» թուրք հանրապետության «կրթյալ» ոստիկանները բարձրանում են շոգենավ և սկսում են հայ մարդուն փնտրել: Նավապետը բռնն և խիստ կերպով բողոքում է, միջազգային օրենքն է հիշեցնում, նավի ուսմինական հող լինելն է մատնանշում, բարկաճալթ գոռում է, բայց ո՛վ է լսում: Թուրք ոստիկանները շարունակում են իրենց խուզարկութունը և վերջապես գտնելով հային, հարձակվում են նրա վրա և տաժանելի մահով սպանում անպաշտպան մարդուն:

Սակայն, հակառակ թուրքական այս բոլոր գաղանություններին ու ջարդերին, հակառակ մեր տված անփոխարինելի զոհերին, հայության մեջ այսօր չի պակասում ոչ մի տեսակի մտավորական, ամեն ճշուղում մասնագիտացած, առաջադեմ ինտելիգենցիա, թե՛ հայրենիքում և թե՛ արտասահմանում:

ՄԵՐ ԿՅՍՆՔԸ

Մենք բնակվում էինք Սվիլենգրադում: Վարձել էինք մի հողահատակ սենյակ: Դժվար էր իհարկե մեծ տնից զրկվել հետո մի սենյակի մեջ ապրել, բայց կարիք էլ չկար, ո՛չ թե միայն հավելյալ ծախք չանելու համար, այլ նաև այն տեսակետով, որ մենք այժմ ո՛չ մի բան չունեինք: Մի սենյակն անգամ մնում էր չոր ու անզարդ, միայն դետինը փռել էինք մի փսիլաթ և անկյունում տեղավորել մի կապոց:

Հայրս թեև դժվարանում էր աշխատել, քանի որ Հալեպում ստացած վերքը նրա աջ ձեռքի շարժումները սահմանափակել էր՝ ջղերը վնասված լինելով, բայց քանի որ խորհում էր նա ամեն բանից զրկվել ենք, պե՛տք է աշխատենք, որ հոգանք մեր կարիքները: Ես նույնպես ատաղձագործությամբ էի պարապում: Շուտով հայրս տկարացավ, հիվանդացավ, չէր կարողանում դրժի գնալ: Անողորմ կյանքի հաշորդական հարվածները քայքայել էին այդ զգայուն մարդու առողջութունը: Տան ծախսերի հոգան ամբողջությամբ ծան-

րացել էր իմ թարմ ուսերի վրա: Ես ստիպվել էի մի քիչ ավելի շահելու մասին մտածել: Ատաղձագործի արհեստանոցում նվազ էին վճարում. ուստի ես սկսեցի շինարարության մեջ աշխատել: Նորաշեն մի տան առաջ կիր էի շաղախում և հետո դուլերով տանում վարպետի մոտ, կամ բարձրացող պատերի վրա շալակով աղյուս էի կրում: Այս գործի համար լավ էին վճարում, բայց մի ամսվա մեջ ես անձանաչելի էի դարձել. արևից սևացել, շատ նիհարել էի, խնչպես մայրս էր ասում, «կաշի-ոսկոր» էի մնացել:

— Դպրոց ավարտեցիր, մեր մտքում ի՞նչ ծրագրեր ունեինք, դու այսօր բռնակի՛ր դարձար: Վա՛խ, տղաս, վա՛խ, պատճառ դարձողի օ՛ջախը քանդվի:

Ու մայրս հորդաբուխ արցունքներով լալիս էր: Հայրս ինձ նայում և ներքնապես լուռ հյուծվում էր: Յիր ու ցան էինք եղել: Մեր ազգականներից մեկն անցել էր Հունաստան, մյուսը՝ Ֆրանսիա, և մեկ ուրիշը՝ մինչև Հարավային Ամերիկա: Նահապետական կյանքի սովորած մեր ընտանիքը Սվիլենդրադում տառապում էր մենակությունից, ազգականների կարոտով, հին օրերի վերհիշումով:

Այդ օրերին հայկական մամուլը սյունյակներով «փնտրտուք» էր տպագրում: Այս հայահատուկ երևույթը սկսել էր 1917 թվից ու շարունակվում էր: Այդ փնտրտուքները պատմում էին մեր ազգային ողբերգության մասին, պատմում էին ահավոր բաներ, խոսում էին արար աշխարհին, որ կինը իր ամուսնուն է փնտրում, որդին՝ իր ծնողին, քույրը՝ իր եղբոր, երիտասարդը իր նշանածին: Փոթորկի շփոթեցուցիչ ժամին ամեն բան խառնվել էր իրար, նույն ընտանիքի անդամներ, սիրելիներ կորցրել էին մեկը մյուսին և ընկել տարբեր երկրներ:

Ես աշխատում էի, բայց հաճախ արդար կերպով չէին վարձատրում: Ուղում էին ինձ իրավազրկել: Բողոքե՛լ, նույնիսկ խնդրե՛լ հնար չէր. գործից արձակում էին: Ամեն ոք ուղում էր խեղճ գաղթականին շահագործել: Ես հարկադրվեցի ծնողքս ու փոքրիկ քույրս Սվիլենդրադում թողնել գնալ Խասկովո, ուր, ասում էին թե՛ ավելի շատ աշխա-

տանք կա և ավելի լավ են վարձատրում: Ես այնտեղ մտել էի ատաղձագործական մի ֆաբրիկա: Գիշերները քնում էի աշխատանոցի տաշեղների վրա՝ անտեր ու անտուն մարդունման: Չափազանց խնայողությամբ էի ապրում, համարյա չոր հացով, որպեսզի մի կռակել ավելի ուղարկեմ իմ ծնողին: Մի քանի ամիս հետո ընտանիքս էլ փոխադրվեց: Աշխատում էի և վաստակում մեր հացը: Մի տարի հետո դործի նվազման պատճառով առաջին հերթին ինձ արձակեցին: Ես ման եկա մի ուրիշ դործի ետևից, բայց ոչ մի տեղ չկարողացա աշխատանք գտնել: Պլովդիվում բարեկամներ ունենալով հարկադրվեցինք մեկնել այդ քաղաքը: Այս անգամ ինձ հաջողվեց Թյուրքոնջյանի ծխախոտի գործարանում տեղավորվել, որպես հասարակ բանվոր: Վճարումն անբավարար էր, մի ծանոթի միջոցով սկսեցի աշխատել գլանակ պատրաստող մեքենայի վրա, շուտով դարձա վարիչ, իմ քով աշխատում էին երկու բուլղար աղջիկներ: Ծխախոտի փոշին այնտեղ բարձրանում էր որպես դեղին ամպ: Օդը շնչել անկարելի էր, այդ փոշին թուշն էր, քանդում էր բանվորի թոքերը և առողջությունը: Սակայն և այնպես ես ստիպվեցի երկու տարի աշխատել այնտեղ, ընտանեկան բազմաթիվ հոգսերը ինձ ստիպում էին այդ: Այս հոգսերը կարծեք բավարար չինեին, ես սիրահարվել էի իմ մոտ աշխատող բուլղար աղջիկներից Թողորկայի վրա. նուշիսկ մտածում էի ամուսնանալ. այնտեղ աշխատող իմ ընկեր Ավետիսը ճանապարհ էր բաց արել, ամուսնացել էր Նիկոլինկայի հետ: Հայրս, բայց մանավանդ մայրս, այնքան ընդդիմացան իմ այս մտադրության համար, որ ես ստիպվեցի հետաձգել իմ ծրագիրը. մայրս ասում էր.

— Եթե այդպիսի անպատիվ բան անես, ես չեմ ների քեզ, գնա՛ ուր ուղղում ես այնտեղ ապրիր, իսկ մեզ թո՛ղ, հոգ չէ, մենք թո՛ղ սովամահ լինենք:

Տառապանքն ու սերը մարդուն բանաստեղծ են դարձնում: Այդ ժամանակներին ես գրում էի ոտանավորներ: Իմ գրություններն ուշադրություն էին գրավել: Մի օր բարեկամներս ինձ առաջարկեցին ուսուցիչ լինել Պլովդիվի աղ-

գային վարժարանում: Այդ պաշտոնը դյուր եկավ ինձ, ես խորհում էի, որ շատ ժամանակ և հնարավորություն կունենամ իմ դրական ծրագիրները իրագործելու, կարդալու և դարգանալու: 1929-ի աշնան ես ուսուցիչ էի դարձել: Հայրս նախապես հայտնել էր իր կարծիքը և նա շատ չէր ցանկանում, որ ուսուցչությունը իմ կյանքի ընթացքում իբրև ասպարեզ ընդգրկեմ: «Ապագա շունի», — ասում էր նա, — «ուսուցիչը, մտավորականը չի կարող գնահատվել օտար այս հրկրներում, այս պայմաններում: Ծառա պետք է լինես հոգեբարձուների քմահաճույքներին և շատ անգամ ընկնես թշվառության և զրկանքների մեջ: Այդ վսեմ գործի պաշտոնյաներից ոմանք շատ անգամ անողնաշար սողուն են դառնում, որ մի կերպ կարողանան գործ գտնել, իսկ նրանք, որ պահում են իրենց հպարտությունն ու արժանիքը, շեն ենթարկվում հոգեբարձուների քմայքներին, մնում են անպաշտոն, հալածյալ ու սոված: Կավ է փողոցի մի անկյունում կռիկ ներկող լինես, քան ուսուցիչ, որ քեզ համար ասրուսաի ո՛չ մի հեռանկար չի ներկայացնում»:

— Հայր, — պատասխանեցի ես, — ուսուցիչ չեմ լինում վարդապետն երազներով, հանգիստ ասրելու ու քեֆ անելու համար. հենց իմ նպատակի մեծությունն այնտեղ է, որ ես այս աննպաստ պայմաններում հանձն եմ առնում հանուն մեր նոր սերնդի հայերի դաստիարակության, զոհե՛լ իմ կյանքն ու ասպարեզն:

— Բա՛ց դու մեր ընտանիքի մասին չես մտածում քնավ:

— Ես մտածում եմ մե՛կ մեր փոքրիկ ընտանիքի, և՛ թե մանավանդ մեր մեծ ընտանիքի մասին, ինձ պես խենթեր որ չլինեն մեր մեծ ընտանիքը կկորչի, կչքանա այս անհարազատ միջավայրերի մեջ:

Հայրս է՛լ չխոսեց: Ինձ թվաց, որ նա իր հայրական պարտականությունը կատարեց միայն, զգուշացրեց կամ ավելի ճիշտ ինձ ցույց տալով ճանապարհի փշերը, ինձ հոգեդինեց, նախապատրաստեց, որովհետև նա իր խոսքը վերջացրեց այսպես.

— Օրհնո՞ւմ եմ ես քո նոր ու պատվաբեր ճանապարհը, մաղթում եմ քեզ ուժ ու նվիրվածություն՝ մեր բազմաշար-շար ժողովրդին օգտակար լինելու համար. ապրե՛ս:

Հորս խորհուրդները անհիմն բաներ չէին սակայն: Նա լավ էր ճանաչում մեր կյանքը: Ես շուտով զգացի, թե որ-քա՞ն ճիշտ էր գնահատել նա մեր գաղթահայ իրականությու-նը: Տեսնում էի, որ «վարժապետը» մի ծաղրելի բան էր մե-շարք մարդկանց համար. ոմանք նույնիսկ ուսուցչին նայում էին մի մարդու, որ ուրիշ գործի անընդունակ կամ մի քիչ ծուլ լինելով, վարժապետ է դառնում: Ռոճիկս կանոնավոր չէի ստանում, աղքատ ծնողների կոպեկներից էր հավաքվե-լու: Սովորական բան էր 2—3 ամիս սպասել. հիշում եմ մինչև 5 ամիս փողի համար սպասելս. այս դեպքերում ես դիմում էի ծանոթների, բարեկամների ու փոխ վերցնում: Հակառակ այս նյութական ծանր վիճակին, սակայն, ես և բոլոր իմ պաշտոնակիցները չէինք թերանում մեր պարտա-կանությունների մեջ: Ուսումնական աշխատանքից դուրս ժողովրդի համար կազմակերպում էինք ազատ դասախոսու-թյուններ, գրական հանդեսներ, երեկույթներ, ներկայացում-ներ, համերգներ և այլն: Զմռան շրջանում, 4 ամիս, հայ ազգային կյանքը եռում էր, մշակույթի օջախը բոցավառվում էր և թույլ չէինք տալիս, որ նա հանգի օտարության մեջ: Այս բոլորից հետո ես դեռ ժամանակ էի գտնում բանաստեղ-ծություններ գրելու: Օտար երկրներում մեր բոլոր ուժերը լարել էինք, որովհետև միջավայրն ու վտանգը մեզ դարձրել էր աշխույժ, եռանդուն, գործունյա: Մեր ազգային դիմագի-ծը պահպանելու համար ո՛չ մի աշխատանքի առաջ, ո՛չ մի նյութական զոհողության առաջ կանգ չէինք առնում: Բացել էինք գրադարան-ընթերցարաններ գրեթե բոլոր հայաշատ վայրերում, նաև՝ ակումբներ. հրատարակվում էին հայկա-կան լրագրներ, կազմակերպվել էին մարզական, մշակույ-թային, հայրենակցական միություններ: Մալգարացիներն էլ իրենց «Մամիկոնյան» միությունն ունեին: 1932 թվին, երբ Մովսեսական Հայաստանի ներգաղթի լիազորը այցելեց Բու-դաբիա, «Մամիկոնյան» միությունը լիազորին հանձնեց

40.000 լևա ի նպաստ ներգաղթի ֆոնդի: Եւ 20 տարի առաջ, տակաւին 1928 թվին, դրել էի մեր միութեան քայլերգը.

«Մամիկոնյան» մեր միութեան,
Անդամներով իր աննկուն,
Թեև օտար աշխարհ պանդուխտ,
Ունի սակայն իր վսեմ ուխտ:
Եվ այդ ուխտը ուրիշ բան չէր եթե ոչ՝
Ու մեծ օր մը պիտի կերտեմ,
Նվիրական մեր ուխտը կա.
Հայրենիքնուս մեջ դրախտե
Մեր գյուղը հին «Նոր Մալգարա»:

Այս հավատը վա՛ռ, այս հույսը անխա՛խտ էր մեր հոգու մեջ: Մեր գաղթականութեան տխուր ու մռայլ օրերի միջից տեսնում էինք գալիք արևոտ, պայծառ արշալույսները: Սովետական Հայաստանը եղել էր մեզ համար ներշնչման ու կորովի անսպառ աղբյուր, Սովետական Հայաստանը մնում է՝ ի սփյուռս աշխարհի ցրված պանդուխտ հայութեան հո՛ւյսն ու ապաւ՛ենը, լուսատու փարոսը: Ժողովրդի մեծ մասը թեև տնտեսական ոչ բավարար վիճակում էր գտնվում, բայց շնորհիվ իր շարաշար աշխատանքին, շնորհիվ իր մաքուր արհեստագիտութեան և մասնագիտութեան սիրվել էր տեղացի ժողովրդի կողմից և ըստ հնարավորութեան քաջալերում էր ամեն մի ազգային ձեռնարկ:

1922 թվին իրենց կյանքը մազապուրծ ազատած և հազիվ տեղավորված խասկովայի հայ գաղթականները, 1923 թվին իրենց վերջին դարդեղենները ծախելով, ամուսնական մատանիները վաճառքի հանելով, իրենց սև հացից կտրելով, մտածում էին լո՛ւյսի մասին և հանգանակութեան ձեռնարկելով, կառուցում էին իրենց նոր դպրոցը: Սոֆիայում ավելի վերջ նույնպես կառուցվում էր, քառհարկանի մի ազգային տուն՝ առաջին հարկը վարձու խանութներ, երկրորդ հարկը դպրոց, իսկ շորրորդը այժմ նաև «Երևան» առաջադիմական միութեան կենտրոնական վարչութեան դահլիճ:

Մակայն, գյուղերում և փոքրիկ քաղաքներում ընկած հայերը ուսանում էին տակավ: Հոգսերը պակաս չէին: Բացի Սոֆիայից և Պլովդիվից մյուս հայաշատ 10 քաղաքներում չկային թերի միջնակարգ հայկական վարժարաններ, այլ միայն քառամյա նախակրթարաններ: Ֆաշիստ կառավարութ-
 թյունը չէր արտոնում փոքրամասնություններին նոր թերի միջնակարգ վարժարաններ բանալ: Այսպես ուսումնատենչ հայ ժողովրդի զավակները միայն կարող էին 4 տարի իրենց մայրենի լեզվով սովորել, հետո նրանք ստիպված գնում էին օտար վարժարաններ և զարգանում էին ուրիշ լեզուներով: Եթե հայերենը չմոռանային, համենայն դեպս շատ աղճատ կեր-
 պով էին խոսում օտար վարժարաններ ավարտող մեր նոր աշակերտները: Այս պարագան մեծ վիշտ էր պատճառում հայրենասեր ծնողներին: Երբեմն պատահում էր խառն ամուսնություններ, որոնք նույնպես դժգոհ էին թողնում ծնողներին: Հայկական ինքնուրույն բարքերն ու սովորու-
 թյունները աղոտանում, կորչում էին ազդվելով տեղական պայմաններից: Վարձու սենյակների մեջ բնակվող ժողովրդի վիճակը հաճախ անտանելի էր դառնում տանտերի հետ իրենց ունեցած վեճերով: Կային և մարդիկ, որոնք հալածում էին հայ աշխատավորներին և հեռացնում նրանց իրենց գործերից:

Հորս առողջությունը հետզհետե վատթարանում էր: Նա ֆիզիկապես կմախք էր դարձել, թեև հոգեպես ամուր էր միշտ: Նա առաջին գաղթականության ժամանակ էլ հուսա-
 դրում էր մեղապագայի լավ օրերի հույսով, իսկ այժմ, Բուլ-
 գարիայում, բնավ հավատը չէր կորցրել. — «Քանի Սովետա-
 կան Հայաստանը կանգուն է, — ասում էր նա հաճախ, — հայ գաղթականները չեն կորչի և մի օր կվերադառնան իրենց հայրենիքը: Եթե, — շարունակում էր նա հուզվածով, այս օտար հողերի մեջ ընկնեմ, իմ շիրիմից մի ամի հող տար և Հայաստանի հողի հետ խառնիր, այսքանն էլ հանգստություն կտա իմ տանջված ոսկորներին»:

Նա, անապատի մեջ կորցրած սիրելիների կսկիծը սըր-
 տում, երկար տարիներ շարշարվելուց հետո, հանգամ օտա-

րութեան մեջ՝ երբ շատ հեռու չէր ազատութեան ու փրկութեան արշալույսը. հանդամ հայրենիքի խոր կարոտը սրբատու՛մ: Հորս մահից հետո ես ստիպվեցի Պլովդիվից մեկնել Ռուսշուկ. դա՛րձյալ ուսուցչական պաշտոնով: Գաղութներում ամենից շատ տեղափոխվող ու թափառող ընտանիքը, այդ հայ ուսուցչի ընտանիքն է:

Հայ ժողովուրդը այսպես ապրում էր օտար երկրներում միշտ կարոտը քաշելով իր հայրենիքի, երբ թուրքական «վաքըթ» (ժամանակ) թերթի թղթակիցը, Թուրքահայաստանը ման էր դալիս և Մուշի կողմերից դրում էր իր թերթին մոտավորապես հետևյալը.

— «Տասնյակ կիլոմետրներ անցնում ես, ո՛չ մի մարդու, ո՛չ մի կենդանի շունչի չես հանդիպում: Ավերակների վրա բուերն են վայում և չորս կողմդ գայլերի ոհմակներն են ոռնում: Ամայությունից մարդ սարսափում է»:

Այո, հայ ժողովրդի պատմական հայրենիքում «տասնյակ կիլոմետրեր դնում, ոչ մի մարդու, ոչ մի կենդանի շունչի չէիք հանդիպում, ամայությունից սարսափում էիք», իսկ այդ ամայի երկրի իրական տերը, հայ ժողովուրդը, օտար երկրներում ընկած տառապում էր մի ահա հողի համար, չէր կարողանում մի խրճիթ կառուցել, իր մեռելը իր սեփական հողում թաղել:

ՎԵՐԱԴԱՐՉ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Գաղթահայ ժողովրդի մեծ մասը, եթե լավ չէր սերտել մեր ազգային պատմությունը, համենայն դեպս լա՛վ էր ճանաչում իր ապրած կյանքը: Նա պարզ տեսնում էր, որ յուրաքանչյուր անցնող օր, իր հետ մեր ժողովրդային հատկանշից տանում էր մի բան, և նոր սերունդը դժգույն, թույլ, տկար էր մեծանում: Կային իհարկե բազմաթիվ հայեր, որոնց շատ լավ ծանոթ էր, որ դարեր առաջ կեհաստանում, Հունդարիայում, Ռումինիայում և այլ երկրներում գաղթած հաղար հաղարամիոր հայերից ոչինչ չէր մնացել, նրանք ժամանակի ընթացքին տեղական ժողովուրդների հետ ձուլվել, անհետ կորել

էին: Պանդուխտ հայերը մեծ ուրախությամբ լսում և կարգում էին Սովետական Հայաստանի բոլոր բնագավառներում կատարած նվաճումների մասին: Բոլորի աչքերը հառել էր դեպի ծաղկող ու զարգացող հայրենիքը: Բոլորը համոզվել էին, որ միայն մեր երկիրը կարող է մեզ փրկել: Ժողովուրդը մեծ հույսով սպասում էր վերադարձի երջանիկ օրվան:

1939 թվին նոր պատերազմը սկսվեց: Հայ աղքատ ժողովրդի վիճակը ծանր էր: Մեր ողբերգությունը դարձյալ մնում էր եզակի և անհավասար: Հայ երիտասարդներ գնում էին բանակ, կռվում ու զոհվում էին օտարների հայրենիքին և նրանց շահերի համար: Սրանից ավելի ողբերգականը կար սակայն: Զանազան թշնամի ազգերի բանակներում կռվող հայ զինվորների հաճախ դեմ-դիմաց կանգնած, գուցե սպանում էին իրար: Միայն սովետական բանակում կռվող հայ մարտիկները մարտնչում էին իրենց մեծ հայրենիքի և իրենց բարեկամ ժողովուրդների շահերի համար: Իսկ մեզ մոտ պարզապես աննպատակ զոհվում էին:

Բուլղարիայի ֆաշիստ իշխանությունը, հակառակ ժողովրդի կամքին, հակվել էր գերմանական քաղաքական ուղղության: Բուլղարիայի վարիչներն ազդվելով գերմանական ռասիզմից, սկսել էին իրենց երկրում ապրող փոքրամասնություններին նեղել, հալածել, գործից զրկել, բանտարկել, աքսորել: Հրեաների տներն ու ինչքերը գրավում էին, խանութները փակում և զանազան շրջաններ ու գյուղեր աքսորում: Հայերին դեռևս այդ օրին չէին հասցրել, բայց բոլորս զգում էինք, որ հերթը գալիս է մեզ: Գործարաններից, բանվորների կրճատման դեպքում, առաջին առթիվ հայերին էին արձակում: Սկսել էին հայ խանութներից առևտուր շանել, սեփական շինարարություններում անգամ հայ վարպետներ չէին աշխատեցնում: Ազգային մոլեռանդությունը անմարդկային արարքների էր մղում բուլղար հետադեմ վարիչներին: Հայ գաղթական ժողովուրդը տառապում էր ապրուստի թանկությունից: Գերմանացիները Բուլղարիա մտել, չորացրել էին առատ երկիրը: Ամեն բան տանում էին Գերմանիա: Այն հայ կամ բուլղար քաղաքացին, որ ստեղծված վատ պայման-

ներից մի քիչ դժգոհում էր, այդպիսիներին զրպարտում, բանտարկում կամ աքսորում էին իբրև «պետութեան թըշնամի»:

Մի երեկո հայ խանութպան ընկեր Վարդանի հետ կանգնել խոսում էի փողոցում. մի «բրաննիկ» (ֆաշիստական երիտասարդական կազմակերպութեան անդամ) մոտեցավ մեզ.

— Այստեղ Բուլղարիա է, — ասաց խիստ ու արհամարհական շեշտով, — հարկ է, որ միայն բուլղարերեն խոսեք:

Ես իմ դայրույթը հազիվ զսպեցի և իմ խռովքը հոգուս մեջ պահած պատասխանեցի.

— Ես միանգամայն աշխարհագրութեան ուսուցիչ եմ, լավ եմ իմանում թե ո՛ւր եմ գտնվում, մենք ձեզի շասացինք թե այստեղ Հայաստան է, բայց լսեցեք, պետութիւնը մեզ արտոնել է սեփական դպրոց ունենալ և այնտեղ սովորեցնել մե՛ր մայրենի լեզուն. այժմ դուք ի՞նչ իրավունքով, ո՞ր օրենքով արգելում եք այդ:

— Այստեղ դպրոց չէ, — ձայնը բարձրացրեց նա, — լեզուդ քեզ քաշի, շա՛տ ես երես առել, մի քիչ էլ համբերիր, ձեզ հետ էլ մեր հաշիվը մաքրելու ենք:

— Նղե՛ք քաղաքավարի և մի քիչ հարգել սովորեք բուլղար քաղաքացու ազատութիւնն ու իրավունքը:

— Ինչպես տեսնում եմ, դու մի աղտոտ հայ ես, քեզ նման քաղաքացիներ մեզ հարկավոր չեն, դնացե՛ք ձեր երկիրը...

Ներսումս փոթորիկ պայթեց այդ բոպեին, գլուխս խառնըվում էր և ես դողում էի տարերային իմ ուժերի զսպումից, ուզում էի նետվել այդ լակոտի վրա ու ջարդել նրա քիթն ու մոռթը: Վարդանը զգաց այդ, քաշեց իմ թևից, իսկ ես հիշեցի, որ դեռ մի ամիս առաջ, մի բրաննիկ սպանել էր մի հրեայի: Կառավարութիւնը բրաննիկներին անսահման իրավունքներ էր տվել. նրանք ազատ կարող էին զենք կրել և «պետութեան պաշտպանութեան օրենք»-ով «վնասակար» մարդկանց ի հարկին սպանել, իսկ իրենք անպատիժ մնալ, կամ նույնիսկ վարձատրվե՛լ: Բուլղարիան անդունդն էին

տանում, շէր բաժնում, որ բազմահազար մարդիկ անգործ ու
կիսաքաղց թափառում էին, մյուս կողմից պետությունը
զանձում էր ծանր տուրքեր պատերազմական պատրաստու-
թյան համար: Իմ ծանոթ Սիմոն եղբոր երկու զավակը տա-
րել էին բանակ, կառավարությունը ոչ մի օժանդակություն
չանելուց զատ, Սիմոն եղբորն էլ դամի գործարանից առ-
ձակել էին իբրև ոչ-հպատակ, իբրև հայ: Այս պայմաննե-
րում հասկանալի էր, որ ամբողջ հայությունը մի վայրկյան
առաջ ցանկանար վերադառնալ դեպի հայրենիք: Բայց կոր-
ծանիշ պատերազմը շարունակվում էր: Վերջապես 1943 թվին
արդեն բոլոր թերահավատներն էլ համոզվել էին, որ հաղթող
պիտի հանդիսանա Սովետական հզոր Միությունը, դերմա-
նացիները պիտի ջարդվեն անպարտելի Կարմիր Բանակից:

1944 թվի սեպտեմբերի 9-ից Բուլղարիայում իշխում էր
արդեն «Հայրենական ճակատի» (Отечествен. фронт) դե-
մոկրատական կուսակցությունները: Կարմիր Բանակը հան-
դիսավոր կերպով մուտք էր գործել Բուլղարիա: Ժողովուրդը
անօրինակ խանդավառությամբ, ցույցերով ընդունել էր ա-
զատարար Կարմիր բանակայիններին, ժողովուրդը դինվորնե-
րին տանում էր տուն, քեֆ էր սարքում ու նվերներ բաշ-
խում: Շատերը ծաղկեփուռներով դիմավորել էին հերոս
ռազմիկներին և ուրախության արցունքներով փարվել-համ-
բուրվել նրանց հետ: Բազմաթիվ բուլղար մտավորականներ,
գործիչներ և նրանց հետ հառաջադիմական հայ երիտա-
սարդներ ազատվել էին բանտերից և աքսորավայրերից:
Բայց ամսո՞ւ շատերն էլ սպանվել և կորել էին անհետ, ա-
ռանց տեսնելու հաղթանակի օրը, որի համար ա՛յնքան հա-
մառորեն պայքարել էին:

Գաղթահայերը երբ դիմավորում էին որեէ հայ Կարմիր-
բանակայինի, հարազատ եղբոր պես տանում էին տուն և
հյուրասիրում նրան: Պանդուխտների անվերջ հարցերին
պատասխանում էին հայ ռազմիկները և հպարտությամբ
խոսում Հայաստանի աննախընթաց վերելքի մասին: Գաղ-
թականների սրտերը թռչում էին դեպի Սովետական Հայաս-
տան: Նրանց սերն ու կարոտը, այդ զրույցներից հետո,

հիացում առաջացրին և Սոֆիայի ռադիոյի տնօրինութիւնը «Կոմիտաս»-ից խնդրեց ռադիոյի առաջ երգել:

Ընկեր Սասիվաժատրյանը ժողովրդի բուն խնդրանքով, շրջում էր Բուլղարիայի գլխավոր քաղաքները և Հայաստանի կյանքի մասին զրուցներ էր անում: Հայրենաքաղձ ժողովուրդը ամենուրեք մի բան էր խնդրում նրանից.

— «Մեղ Հայաստան տարեք»...

Սովետական Հայաստանի ներկայացուցիչները Հայաստան վերադառնալուց հետո ձեռք մարմին էր ստանում ներգաղթի խնդիրը: Սովետական Միութեան կենտրոնական կառավարութիւնը գաղթահայերի համար պատմական մի մեծ որոշում էր առել: Հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ խաբւել, արհամարհւել և կոտորւել էր եվրոպական դիվանագիտութեան երեսից, ահա վասիկ իր ազգային փափազների իրականացումը գտնում էր Սովետական Միութեան շնորհիւ, ինչպես որ 25 տարի առաջ Հայաստանն ազատագրւել էր դարձյալ Սովետական Ռուսաստանի աջակցութեամբ: Որքա՞ն ուսանելի է, երբ մեծ Առաջնորդը գրում էր.

— «Տանջված ու բազմաշարժար, Անտանտի ու դաշնակների ողորմութեամբ սովի, քայքայման մատնված Հայաստանը բոլոր «բարեկամների» կողմից խաբւած այդ Հայաստանը, այժմ իր փրկութիւնը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր: Միմիայն սովետական իշխանութեան գաղափարը բերեց Հայաստանին խաղաղութիւն և ազգային վերածնունդի հնարավորութիւն: Կեցցե Սովետական Հայաստանը»:

Իսկ մեծ Ստալինի հավատարիմ գործակից ընկեր Ս. Միկոյանն իր մի ճառում ասել էր.

— «Սովետական Հայաստանը բոլոր մշուս ժողովուրդներից ամէլի պարտական է սովետական իշխանութեանը: Այդ իշխանութիւնը հայ ժողովրդին տվեց ոչ միայն ազատութիւն, այլ և խաղաղ գոյութիւն, որից այդ ժողովուրդն առաջներում զրկված էր»:

Ինչպես որ 1920 թվին ընկեր Ստալինն ասել էր. — «Պետք է ինչ քնով էլ լինի փրկել Հայաստանը, շուտով փրկել Հա-

«աստանը», ինձ թվում է, որ 1946 թվին էլ նա ասաց. Ի՞նչ գնով էլ լինի փրկել դադթական ու թշվառ հայերին, փրկե՛լ հայ պանդուխտներին և շուտով վերադարձնել նրանց Սովետական Հայաստան:

1946 թվի փետրվարից սկսվեց ներգաղթողների ցանկերի պատրաստությունը Բուլղարիայում: Սովետական Միության այդ որոշումը աշխարհի շորս ծայրերում ցրված հայության մեջ առաջացրեց աննկարագրելի խանդավառություն և անօրինակ ոգևորություն: Դարեր շարունակ իր պապերի հողից զրկված հայությունը վերադառնալու էր հայրենիք: Ամեն մի հայի շուրթերի վրա թրթռում էր մի սիրելի անուն՝ անտեր հայ դադթականների պաշտպան և հայր՝ Մեծ Ստալինի անունը: Հայ ժողովուրդը դանդաղ մահացումից դեպի կյանք էր գնալու. դա՛ էր ներգաղթի իմաստը:

Բուլղարիայի հայերը պատրաստվում էին լուծարքի ենթարկել իրենց խանութն ու տունը: Արդեն ներգաղթի հանձնախումբը ընկեր Օտարովի գլխավորությամբ հասել էր Սոֆիա: Ուրախության, հուզումի անմոռանալի օրեր էին: Այժմ ոչ ոք չէր խանդարում մեզ, «հայրենիքի ճակատի» կառավարությունը խտրություն չէր գնում իր քաղաքացիների միջև, բոլորն էլ ազատ էին, կյանքի բնականոն վիճակը վերականգնել էր, կատարվել էին ընկերային նշանակալի բարեփոխումներ: Մեծ թվով հայ ընկերներ պետության մեջ վարում էին պատասխանատու պաշտոններ: Նրանք բոլորն էլ հարգ ու համակրանք էին վայելում բուլղար ընկերների կողմից: Գ. Դիմիտրովի իմաստուն ղեկավարությամբ Բուլղարիան ծաղկում ու զարգանում էր աննախընթաց վերելքով:

Հուլիս ամսի սկզբներին ներգաղթողների անդրանիկ քարավանի մաս կազմող ընտանիքները դանազան քաղաքներից մեկնեցին Սև ծովի նավահանգիստ Վառնա քաղաքը: Մի քանի օրից ժամանեց մեզ փոխադրող շոգենավը: Վառնա եկել էին ներգաղթողների ազգականներն ու ճանապարհորդողներ: Քաղաքը ողողվել էր անհամար հայերով: Նավամատուցի վրա խոնված բազմությունից ասեղը դետին չէր

ընկնում: Ազգականներ, ընկերներ համբուրվում էին իրար հետ, հուզումից լալիս: Ժխոր էր, իրարանցում, խոսում էին, կանչում: Վերջապես ներգաղթողները բարձրացան շոգենավ: Հնչեց սովետական հիմներ, հետո հայկականը, հետո բուլղարականը: Ժողովուրդը աղաղակում էր. «Կեցցե՛ ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինը, կեցցե՛ Գեորգի Դիմիտրովը, կեցցե՛ Սովետական Միությանը, կեցցե՛ դեմոկրատական Բուլղարիան»:

Շոգենավը սուլեց երեք հեղ, ծխնելույզներից բարձրացավ սև ծուխ, խարխսիսը քաշվում էր վեր: Նավի և նավամատուցի վրայից հաղարավոր թաշկինակներ ծփում էին օդի մեջ: Անվերջ հնչում էին դանադան խոսքեր.

— Բա՛րի ճանապարհ:

— Տառոսը ձեզի՛:

— Գալ տարի մե՛նք էլ, մե՛նք էլ:

— Մի՛ մոռացեք, մեր կողմից էլ համբուրեցեք հայրենի հողը:

— Ողջո՛ւյն Մասիսին, ողջո՛ւյն Մասիսին:

— Մնաս բարո՛վ, Բուլղարիա՛, մնաս բարո՛վ, բուլղար ազնի՛վ ժողովուրդ:

Շոգենավի հետև ջուրը եռում, փրփրում էր և շոգենավը ջարժվում էր առաջ: Երգեր, բացականչություններ, նվագ իրար էին խառնվել: Չէր կարելի հստակ մի բան լսել և իմանալ: Այսպիսի հիշատակելի և անմոռանալի օր ոչ մի սերունդ չէր տեսել: Ճիշտ է, մենք շատ էինք տառապել, շա՛տ էինք զոհվել, զրկվել ու թշվառացել, բայց ճիշտ է նաև, որ տեսնում էինք ա՛յն, ինչ որ հայ բազմաթիվ սերունդներ երազել և իրենց աչքերը փակել էին առանց հասնելու այդ գեղեցիկ երազին:

Մեր ընտանիքը մահվան դարհուրելի ճանապարհից անցնելուց հետո, ահավասիկ մեկնում էր դեպի հայրենիք, մեկնում էր անթիվ ու սիրելի զոհեր թողած Թուրքիայում, թողած և օտար երկրներում, վերադառնում էր շարշարված դարիքի պես իր հարազատ մոր դիրկը, Սովետական Հայաստան: Որքա՛ն հարազատ, որքա՛ն անկեղծ են հնչում այժմ,

Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկեր Գրիգոր
Հարությունյանի հետևյալ տողերը.

— «Ամբողջ աշխարհը այսօր նորից ականատես եղավ
հայերի մասսայական տեղաշարժին, բայց պատմության մեջ
առաջին անգամ՝ հակառակ ուղղությամբ: Դեպի իրենց հայ-
րենիքը: Քարավանները շարժվեցին դեպի հայրենի ափերը,
քարավաններն ուրախ, երջանիկ մարդկանց, որոնք դալիս են
իրենց համար ավետյաց երկիր դարձած Սովետական Հայաս-
տանը: Գալիս Ստալինյան Մեծ Կոնստիտուցիայի հովանու-
տակ, օգտվելով սովետական քաղաքացու իրավունքներից,
իրենց արենակից եղբայրների հետ բաժանելու աշխատանքի
ուրախությունը սոցիալիզմի մեծ երկրում»:

Նավը ճեղքում էր կապույտ ծովի կուրծքը, մի ճերմակ
հետք էր թողնում իր հետև և հետզհետե հեռանում ափից:
Է՛լ մարդ չէր կարելի ճանաչել: Քաղաքը ծածկվում էր մի
կապույտ մշուշի մեջ: Մենք կապույտ երկնքի ու կապույտ
ծովի միջով սահում էինք: Ինձ թվում էր, որ շողենավը շատ
դանդաղ է գնում, ես ցանկանում էի, որ նա սուրա՛ր, թըռ-
չե՛ր տվելի՛ արագ և մի րոպե առաջ ինձ հասցնել Սովետա-
կան Հայաստան:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջապես դնացքը մտել է մեր սահմանից ներս և մենք անցնում ենք Սովետական Հայաստանի միջով: Բոլոր վադոններից ուրախության կանչեր, ուռաներ են բարձրանում, նվազի և երգի ձայներ են լսվում: Անսահման է ներդաշնակների ոգևորությունը: Դեռ առաջին կայարանից, Այրումից, ուր դնացքը հաղիվ մի պահ է կանգ առնում, հայրենակարոտ մարդիկ իջնում են ցած, ծունկի են դալիս և հուզումով, արցունքոտ աչքերով համբուրում հայրենի հողն ու դուցե իրենց պապերի աճյունն էլ միասին:

Ալավերդի կայարանում, ուր դնացքը ավելի է կանգ առնում, շատերն իջնում են ցած, մեկը մի ծառի է փարվում, յարոջ պես համբուրում, մյուսը՝ շոր քարն է առնում կրծքին սեղմում, մի ուրիշը՝ մի ծաղիկ է պոկում լամբակին դետեղում:

—Այս ի՞նչ ջուր է, ա՛ղբար,—ասում է հիացած, կայարանի կողմից վերադարձող թաց բերանը շորացնող մի երիտասարդ,—շերբե՛թ է, շերբե՛թ, պա՛ղ, կարծես մասնավոր սառի մեջ ես դրեր, ես Հայաստանի ջրի՛ն մեռնիմ, այս ի՛նչ ջուր է աղբա՛ր...

Շոգեկառքը սլանում է Դեբեդի եզերքով, լեռների միջով: Ժողովուրդը անհագուրդ դիտում է Հայաստանի բնությունը՝ լեռն ու ձորը, գյուղն ու քաղաքը, դաշտն ու կանաչը, խոտն ու թռչունը: Մեր աչքերը խորունկ, անհատակ ջրհորներ են

կարծես, և կո՛ւլ են տալիս, խմո՞ւմ են ամեն մի պատկեր, ամեն մի տեսարան և շե՛ն հագնենում, շե՛ն լցվում: Մեր աշ- քերի հետև դիզվում են հայրենական բնության առաջին պատկերները:

Անցել ենք Կիրովականն ու Համամլուն, հասել ենք Լե- նինական: Քեռի Հովսեփն աճապարում, իջնում է ցած. մո- տենում է մի սևաշյա, կրակոտ երիտասարդ զինվորի և նրան համբուրում: Հայ զինվորը դարմանում է, ժպտում է, դուցե ենթադրում է նա, որ ծերունին շփոթվել է, թյուրատեսու- թյան մեջ է ընկել, իր որդուն է նմանեցրել:

— Կյանքիս մեջ, առաջին անգամ հայ զինվոր կտեսնեմ կոր, տղաս,—հարում է քեռի Հովսեփը դողդոջուն ձայնով,— համբուրեցի քեզ, որովհետև հորդ տեղ մարդ եմ, զգացած երջանկութենես համբուրեցի քեզ, կհասկնա՞ս. հայ զին- վո՞ր... Հպա՛րտ եմ, տղաս, դո՛ւք ջախջախեցիք դերմանա- կան կործանիչ բանակաները, ապրի՛ք, ապրի՛ք, Սասունցի Դավիթին պես անպարտելի ըլլաք միշտ:

Հայ կարմիրբանակայինն զգացված մոտենում է քեռի Հովսեփին, հասկանում է, որ նա ներդադրողներից է, ուզում է համբուրել ծերունու աջը, շնորհակալություն հայտնել. և նրանք այս անգամ ավելի սրտանց փարվում են իրար: Մենք վազոնից ծափահարում ենք ուրախ, «ուռա՞» աղաղակում, այս սրտահույզ ողջագուրումը, հայկական երկու մեծ հատ- վածների՝ արևմտահայի և արևելահայի ողջավերումն է:

Լենինականից հետո երկաթուղին մոտենում է Ախուրյան գետին և քիչ հետո կանգ առնում Անի կայարանում:

— Ողջո՞ւյն Ա՛նի,—բխում է հանկարծ իմ հոգուց մի հարազատ ձայն,—ողջույն ո՞վ իմ պապերի շքեղ մայրաքա- ղաքը, քո ավերակներից անգամ ցոլում ու փայլում է մեր ժողովրդի հանձարը. ողջո՞ւյն քեզ, Ա՛նի:

Շոգեկառքը կանգ է առնում Էջմիածին կայարանը: Սուրբիկ մամիկը ինձ օրեր առաջ խոսել ու խնդրել է արդեն, որ զնացքը Էջմիածնի մոտենալու ժամանակ իրեն իմաց տամ. երբ նրան մատով ցույց եմ տալիս հեռուն տարածվող Էջմիածինը, Սուրբիկ մամիկը հուզումից բոլորովին դալկա-

նում ու խաչակնքում է և ինչ որ նրա դժգույն շուրթները մի աղոթք են մրմնջում ու աչքերը փայլում.

— Էջմիածին, ես քու սրբատաշ քարերը համբուրեմ, այդ օրին աչ արժանի ըլլամ և հետո մեռնիմ:

Իսկ ես մտովին էջմիածնից մի քիչ ևս բարձրանում եմ վեր և Քասախի ափով գնում եմ դեպի Օշական՝ Հայաստանի ամենանվիրական սրբավայրը: Կանգ եմ առնում Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի առաջ և խոնարհվում ակնածանքով, համբուրում հայ ժողովրդի առաջին ուսուցիչ Մեսրոպի շիրիմը.

— Ո՛վ դու Տարոն աշխարհի Հացեկ գյուղացի, շինական վարդանի որդի Մեսրոպ, — ժայթքում է ձայնը իմ հոգուց, — դու քո ժողովրդի ինքնապաշտպանության համար մի այնպիսի զենք տվեցիր, որ նա դարերի հետ կռվեց ու հաղթեց, որ նա մահվան դեմ կռվեց ու հաղթեց, և այսօր կանգնել է արի՛, և հեզնո՛ւմ է Տրումենի ջատագոված նորադյուռ, բայց կործանարար զենքը, ատոմային ռումբը: Իսկ քո տված հին զենքը մինչև օրս էլ ավելի՛ արդար է, ավելի՛ հզոր, ավելի հաղթող, քան նրա նորը:

Այսպես բոլոր պատմական դեպքերն ու դեմքերը կինոյի ժապավենի նման շարժվում և անցնում են իմ մտքով: Չէ՞ որ ես հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության ուսուցիչ եմ եղել: Ես այժմ գտնվում եմ Արարատյան դաշտում՝ կենտրոնը հայ մտքի և հոգևոր ստեղծագործության, կենտրոնը հայ հանճարների, հսկաների: Հայաստանը թանգարան է ու պանթեոն: Ի՛նչ կոիվներ, ի՛նչ հերոսական խոյանքներ տեսել են այս լեռները, որքա՛ն բանականեր բախվել են իրար և մեր կայծակնավազ այրուձին ի՛նչ սխրագործություններ է կատարել այս հողերի վրա:

Մեր աջ կողմը Մասիսն է. հայոց աշխարհի երկնամերձ հսկան, դարավոր վկան մեր ժողովրդի հաղթանակների ու պարտությունների, ուրախությունների ու վշտերի, անհետ կորած շար թշնամիների ու մեր նոր Սովետական Հայաստանի վերելքի: Դիտում ենք ու չենք հագեցնում, չենք բավաբարվում: Մասիսը որպես հզոր մագնիս բոլոր հայերի նայ-

վածքները քաշում է իրեն: Խոսակցության նյութը դառնում է Մասիսի շուրջը.

— Գիտե՞ք, — ասում է հանկարծ երիտասարդ ընկեր Կարոն, որ մինչ այդ լուռ ու խոհուն նայում էր Արարատին, — գիտե՞ք ես ի՞նչ շարշարանքներ եմ քաշել ֆաշիստների ձեռքից. բանտարկվել եմ, ծեծվել, հիվանդացել և ավելի քան 10 տարի տառապել նրանց ճիրաններում և իմ կյանքը լի է եղել ամեն վտանգներով՝ նույնիսկ գնդակահարության կարելիությամբ: Բայց եթե այսօր ողջ եմ մնացել, դիմացել այդ բոլոր դարհուրանքներին, պատճառն այն է, որ մենք բոլորս Մասիսի զավակներն ենք եղել, ընկերներ՝, այս անպարտելի լեռից մի մասնի՛կ ենք ունեցել մեր մեջ, ես հի՛մա հասկանում եմ մեր տոկունության և հաղթանակի գաղտնիքը: Մասի՛ս՝ այդ նշանակում է հայությո՛ւն, հայությո՛ւն. այդ նշանակում է Մասիս:

Այս խոսքերը ընկեր Կարոն այնպիսի վարակիչ մի եռանդով ու հավատով է արտահայտում, որ նրա շուրջ բոլորված հայերը ոգևորված ծափահարում են նրան, և «կեցցես, Կարո» աղաղակում:

Ներգաղթողները որոնող նայվածքով ուղում են տեսնել նաև Արաքսը, մա՛յր Արաքսը.

— «Մայր Արաքսի ափերով»...

Այո՛, մայր Արաքսի ափերով վերադառնում ենք հայրենիք: Մի քանի հոգի խոսում են ձախակողմը բարձրացող Արագածի մասին.

«Սև մութ ամպեր ճակտիդ դիզվան»...

— Չէ՛, — ասում է ընկեր Կարոն, — այդ սև ու մութ ամպերը վաղո՛ւց են ցրվել ու փարատել, այսօր պիտի ասենք ու երգենք.

Կարմիր աստղը ճակտիդ փայլեց,
Ա՛րև հագար, Ալազյազ:

Մոտենում ենք Երևանին, մեր մայրաքաղաք Երևանին։
Հեռվից տեսնում ենք Նոր Արաբկիրը, որ իշխում է Արա-
րատյան դաշտի վրա իր բարձր դիրքից, որի հետև Արայի լե-
ռան ֆոնն է, տեսնում ենք կանաչավետ Նորքը, Սարի թաղը։
Անցնում ենք Երևանի օդակայանի մոտով, անցնում ենք
Նորադավթի կանաչ այգիների կողքով ու գնացքը կանգնում
է կայարանում։ Ես կարդում եմ մի մեծ ցուցատախտակ, որի
վրա գրված է մեծատառ.

— «Բարի գալուստ արտասահմանից վերադարձող մեր
հարազատ եղբայրներին»։

Այս ջերմ, սրտաբուխ խոսքը հուզում է ներգաղթողնե-
րի սրտերը, այդ սիրալիր բառերը մեր պաշտելի ժողովուրդն
է ուղղած մեզ, մեր հարազատ սովետական կառավարու-
թյունն է, որ արտահայտում է իր սերն ու դուրգուրանքը։
Ծովածավալ բազմություն է կայարանում, մոտակա հրապա-
րակում և փողոցներում։ Մայր ժողովուրդը եկել է դիմա-
վորելու իր պանդուխտ զավակներին։ Ժխորի, իրարանցումի
միջից երբեմն լսվում է բացականչություններ.

— Բարո՛ւ եկաք, հազար բարո՛ւ։

— Մեր հոգին ձեզ մատա՛ղ, տանջվա՛ծ եղբայրներ։

— Բարո՛ւ տեսանք, սիրելի՛ ընկերներ։

— Եկանք ձեռք-ձեռքի աշխատելու։

— Թո՛ղ մեր հայրենիքը ավելի ծաղկի ու բարգավաճի։

— Կեցցե՛ Սովետական Հայաստանը։

— Կեցցե՛ մեր փրկիչ, իմաստուն ղեկավար, հա՛յր

Ստալինը։

Անձանոթ հայերը կայարանում հարազատների պես ող-
ջագուրվում են։ Ոմանք գտնում են իրենց հին ազգականնե-
րին ու բարեկամներին։ Ես հուզումով հանդիպում եմ մահ-
վան ճանապարհից ինձ ծանոթ և հրաշքով փրկված բարեհո-
գի Հայկ Փանոսյանին, որին տեսել էի սևահեր ու երիտա-
սարդ, իսկ այժմ գտնում եմ սպիտակամազ և ծերացած։
Աննկարագրելի է հայության երկու մեծ հատվածների այդ
դիմավորումը, որքա՛ն հույզ, որքա՛ն սեր, որքա՛ն ջերմու-
թյուն կա աչքերի մեջ։ Զարդարված ավտոները մեզ փո-

խաղրուժ են այն տները, որ նախապես մեզ համար պատ-
րաստվել են կառավարութեան կողմից: Նվազախումբը դեռ
հնչեցնում է զանազան ժողովրդական երգեր: Մենք իջնում
ենք Նոր Բութանիա: Գուռ-դրացի մեզ բարով եկաքի են դա-
լիս: Ի՞նչ բարի, ի՞նչ աղնիվ է մեր ժողովուրդը, բոլո՛րը
գուրգուրում են մեզ: Շինարար ու ժրաջան մեր ժողովուր-
դը բարեկեցիկ մի կյանք է վարում իր հայրենիքում, եթե
տակավին որոշ դժվարութեւոյններ կան, դրանք էլ ավերիչ
պատերազմի հետեւանքն են, այլապես Սովետական իշխա-
նութեւոյնը հարազատ հոր նման օժանդակում, օգնում է ժո-
ղովրդին ամեն մարդում: Ես տեսնում եմ հին Երևանի մնա-
ցորդները, տեսնում եմ և կարեկցութեամբ լցվում դեպի մեր
մոտավոր անցյալը: Տեսնում եմ և նո՛ր Երևանը, սքանչա-
նում և ուրախանում մեր նո՛ր մայրաքաղաքով: Առաջվա
միահարկ, ծուռ ու մուռ պատերով, անլույս խրճիթների փո-
խարեն այժմ բարձրանում են քառհարկանի, հինգհարկանի
արևոտ շէնքեր՝ շինված վարդապուշ տուֆից:

— Առաջ, — խոսում է ընկեր Լևոնը, որ իմ հարևանն է
և ընկերանում է ինձ, — առաջ այս փողոցների ցեխի մեջ
խրվում, կորչում էիր, հիմա տեսնում ես, էլի, ասֆալտված,
մաքուր պողոտաներ ունենք: Առաջ լույսն ինչ է, չգիտեինք,
ոչ մեր հյուղականերում կարգին լամպ կար, ոչ էլ մանավանդ
փողոցներում մի աղոտ ճրագ, հիմա տեսնում ես, էլի, էլեկ-
տրական լույսով ողողվել է Երևանն էլ, ամբողջ Հայաստանն
էլ ու դարձել, ինչպես Հովհաննէս Թումանյանն է ասում.

— «Հո՛ւլսի հայրենիք, լո՛ւլսի հայրենիք»:

Երևանն անձանաչելիորեն փոխվել է, դարձել է արդյու-
նաբերական մեծ կենտրոն: Բնակչութեւոյնն արտակարգորեն
աճել է:

— Նոր Երևանը, — շարունակում է ընկեր Լևոնը, — չի՛
կարելի ըմբռնել, երբ դուք հինը չգիտեք: Այդ հինը բա-
ցատրելու կարիք չկա, մեկ-մեկ տեսնում ես էլի, դեռ

մնացել են նմուշներ: Ուսումը անօրինակ չափով բարձրացել է, այսօր արդեն ունենք 13 բարձրագույն ուսումնական հաստատություններ, համալսարան, 48 տեխնիկում, 45 գիտահետազոտական ինստիտուտներ, 1150 դպրոց և 280 հազար դպրոցականներ: Մեզ նման մի փոքրիկ ժողովրդի, մի փոքրիկ երկրի համար սրանք շատ մեծ թվեր են: Իսկ ձեզ վրատահեցնում եմ, ես ինքս կարդացել եմ. իր թվի համեմատությամբ ամենից շատ համալսարանավարտ ունեցող ժողովուրդներից մեկն է մեր ժողովուրդը, մենք յուրաքանչյուր հազար հոգու դեմ ունենք 6 համալսարանավարտ, Ամերիկան՝ 4, Ֆրանսիան՝ 3, Իտալիան՝ 2 և այլն: Տեսնո՞ւմ ես ի՞նչ է կատարվում մեր հարենիքում: Տեսնում ես երեկվա անգրագետ ժողովրդից ինչ սերունդ է հասցրել մեր Սովետական Հայաստանը: Այսօր մենք ունենք տարբեր ճյուղերի պատկանող 30 հազար մասնագետ: Իսկ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայում գործում են 500 գիտական աշխատողներ: Մեկ ու կես միլիոն հայության համար սրանք հպարտացուցիչ թվեր են:

Ես հիացումով տեսնում եմ Երևանի բազմահազար երկսեռ ուսանողությունը, Աբովյան փողոցով անվերջ, օրն ի բուն, մինչև գիշերվա ժամը 11-ը նրանք գնում են ու դալիս. ուսանողական քառհարկանի շենքերը լիքն են: Ուսումնաստենչ հայ ժողովուրդը իր զավակներին ուղարկում է բարձրագույն վարժարաններ, որովհետև ուսումը ձրի է, կառավարությունը ամեն դյուրություն տալիս է սովորողներին, անգամ թոշակ, որպեսզի նրանք հասնեն իրենց ազնիվ ու վեհ բաղձանքներին:

—Մի տես, ի՞նչ հոյակապ շենք է,—շարունակում է ընկեր իկոնը, երբ մենք կանգ ենք առնում օպերայի առաջ. սրանմանը շատ քիչ կա ամբողջ Սովետական Միության մեջ: Դեռ չի ավարտվել, մի վերջանա, նոր կտեսնես. ասում են շատ շքեղ է լինելու: Ա՛յ, տե՛ս այս կողմը բոլորն էլ նոր շենքեր են, մեր վարչաձևի օրոք շինված: Թատրոնը մի քիչ փոքր, բայց նորից գեղեցիկ է. կինոյեր, օպերետտա, անթիվ շրջիկ թատերախմբեր մտնում են ամեն մի դյուղ ներկայացումներ

առաջիկա, ժողովրդին դաստիարակում ու զարգացնում: Չկա ոչ մի գյուղ, որ գրադարան-ակումբ չունենա: «Սովետական Հայաստան»-ը տպվում է 60 հազար օրինակ և փոխադրվում է օդանավով՝ երկրի նամեն մի անկյուն: Իսկ ձեզ ցույց տվեցի արդեն Պետական Հանրային հարուստ գրադարանը, Պետհրատը, Թանգարանը, ձեռագրերի Մատենադարանը, Ֆիզհարմոնիան, Աստղադիտարանը և այլն: Գիտե՞ք, ի՞նչ լավ գրադեաներ, բանաստեղծներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, երաժիշտներ, քանդակադործներ, գիտուններ ունենք: Այս բոլորի մասին չի կարելի այսպես, ոտի վրա խոսել, բայց ինչ որ ունենք ուղղում եմ ասել, որ մեզ դասում են կուլտուրապես առաջադեմ ժողովուրդների շարքում և հակառակ մոտիկ անցյալի, ուղղում եմ ասել թուրքական կոտորածների կորուստներին, մենք երբե՛ք ետ չենք մնացել. ինչ որ կատարվել է ընդամենը 24 տարվա պատմությունում: Ի՞նչ կլիներ մեր մակարդակը, եթե ուրեմն մենք էլ դարերով խաղաղ կյանք ու զարգացում տեսնեինք, օտար ժողովուրդների նման նվիրվեինք հառաջադիմության:

Ընկեր Լևոնը եռանդով ծանոթացնում էր ինձ մեր նոր հայրենիքի հետ: Երբ մենք տրամվայով անցնում էինք Միկոյանի պողոտայից, նա ասում էր, թե այդտեղ 20 տարի առաջ ոչ մի շենք չկար, այդտեղ թափում էին քաղաքի աղբը, կառքով էին կայարան դնում, որ անձրևի ժամանակ ցեխից անանցանելի էր դառնում:

— Իսկ հիմա, — ավելացնում է ընկեր Լևոնը, — տեսնում ես էլի, կայարանը մնացել է քաղաքամեջ, իսկ նոր Երևանը տարածվել է դեպի հարավ, երկարել է դեպի Սովետաշեն և մի օր միանալու է նրա հետ: Այն մյուս կողմը, որ առավոտյան գնացինք, Պետկրկեսից մինչև Նորադավիթ, դա՛շտ էր, մարդիկ ցորեն, դարի էին ցանում, այժմ մի նոր քաղաք է կառուցվել. տրամվայով գնացինք մոտ կես ժամից: Չէ՛, Երևանը և առհասարակ մեր երկիրը դարձել է արդյունաբերական առաջադեմ երկիր: Մեր հայրենիքում պատրաստվում է 400 տեսակի սննդամթերք, ունենք նոր կառուցված 120-ից ավելի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ և տե-

դական արհեստագործական մի քանի հարյուր գործարան-
 ներ: Համամիութենական նշանակութիւն ունեն արդյունա-
 բերական մի շարք մեծ գործարաններ, որոնք բոլորն էլ աշ-
 խատում են էլեկտրաէներգիայով: Մենք շուտով էլեկտրա-
 էներգիայի արտադրութիւնը կբարձրացնենք ժամական 860
 միլիոն կիլովատի: Հինն անցել է պատմութեան դիրկը, է՛լ
 ետ չի դա. մեր Հայաստանը այժմ նոր կյանքի, նոր ժա-
 մանակի առաջավոր երկրներից մեկն է, իսկ սա՝ մեծ պա-
 տիվ է մեզ համար՝ քայլէ՛լ մարդկութեան առաջադեմ, լու-
 սավոր ճանապարհով, քայլէ՛լ միշտ դեպի առաջ, նայվածքը
 բարձունքների հառած: Մեր դյուղացիները է՛լ արորով չեն
 վարում իրենց դաշտերը. Հայաստանում տրակտորներն են
 հերկում հողը: Անթիվ ջրանցքների ջուր են տալիս, կյանք
 են բաշխում մեր անապատներին: Հազարավոր հեկտար ճա-
 հիճներ են շորացվել և այսօր մշակելի դարձել: Գյուղացին
 է՛լ աղքատ չի՛: Կոլխոզի մեջ աշխատում է, բայց և այնպէս
 պահում կով, ոչխար և իր համար մշակում մի փոքրիկ հո-
 դամամ:

Ես արդեն ամեն օր տեսնում եմ հայրենի ժողովրդի ու-
 րախ ու երջանիկ կյանքը: Մենք Լենինի հրապարակում հան-
 դիպում ենք հայ բարձրատիճան զինվորականների, հանդի-
 պում ենք կրծքերի վրա ոսկի աստղ կրող հերոս զինվորնե-
 րի, այս պարագան առիթ է տալիս, որ ընկեր Լեոնը խոսի.

— Հայրենական Մեծ Պատերազմում, մեր տղերքը լա՛ւ
 կռվեցին, — հպարտանում է ընկեր Լեոնը, — 42 հազար հայ
 զինվորներ պարզեատրվեցին Սովետական Միութեան զանա-
 ղան շքանշաններով և մեդալներով: Հարյուր հայ ռազմիկներ
 ստացան հերոսի կոչում, 60 հայ զորավարներ իրենց ճիգը,
 ռազմական տաղանդն ու կորույր միախառնեցին Կարմիր
 Բանակին և պատվով ու հաղթանակով դուրս եկան պատե-
 րազմից: Զորավար Բաղրամյանի անունը դարձավ յուրա-
 քանչյուր հայի համար սիրո ու հպարտանքի առարկա, և աշ-
 խարհը ականջալուր եղավ նրա քաջագործութիւններին:
 89-րդ Թամանյան պանծալի դիվիզիան Գրոզնոյ սկսած հա-
 լածեց ու ջարդեց դերմանացիներին և մտավ Բեռլին: Այսօր

շնորհիւ մեր հերոս զինվորներին, շնորհիւ Կարմիր Բանակին մենք խաղաղ և ազատ ապրում ենք այստեղ: Հայաստանը սիրո և եղբայրութեան անքակտելի կապերով միացել է Սովետական մեծ Միութեանը կազմող եղբայր ժողովուրդների երջանիկ ընտանիքին և դրավում է պատվավոր դիրք:

Լռում է ընկեր Լեոնը: Մի քիչ հետո դարձյալ շարունակում:

— Քեզ հոգնեցրի, դեռ կխոսենք, ասելիք շատ բան կա: Ի՛նչ լավ կլիներ մի պտույտ կատարենք քեզ հետ մեղերկրում, դնայինք Մեղրի, Գորիս և բարձրանայինք մինչև Դիլիջան, Ալավերդի և Ստեփանավան: Դուք կտեսնեիք դեռ ի՛նչ շինարարութեաններ են կատարվել, ինչքան ծաղկել ու զարգացել է Հայաստանը: Գյուղերում անգամ կառուցվել են գործարաններ, պետք է տեսնել Սևանի նոր էլեկտրակայանը, Գյումրիշգեսը...

— Ես մեծ ուրախութեամբ դնացքի միջից տեսել եմ արդեն, — պատասխանում եմ, — տեսել եմ Կիրովականը, Համամլուն, Լենինականը և ինչպես ասացի գյուղերում կառուցված մեծ գործարաններ:

— Ես բավական խոսեցի, այժմ դու էլ պատմիր ձեր մասին, ո՞նց էիք ապրում արտասահմանում:

Ես չեմ մերժում, հակիրճ կերպով պատմում եմ մեր դադթական կյանքի տառապանքի ու թշվառության մասին:

— Ո՛չինչ, կմոռանաք, հայրենիքը քաղցր է, հայրենի ժողովուրդը կբուժի ձեր բոլոր վերքերը, — պատասխանում է ընկեր Լեոնը, — կապրեք մեր նոր կյանքով և կմոռանաք չաբաշուք անցյալը:

Ճիշտ է, արդեն մենք չենք ուզում հիշել երեկը, մեր միտքն ու հոգին լի՛ են նոր կյանքով: Արտասահմանից եկած բոլոր ուսանողները ուրախ և ոգևոր հետևում են համալսարանի և իշխանութեանից ստանում են թոշակ, որ կարողանան ավարտել իրենց բարձրագույն ուսումը: Արտասահմանից եկած բոլոր մտավորականները մտել են իրենց ասպարեզների համապատասխան միութեանների մեջ և վայելում են ամեն հոգածություն, ստանում նյութական և բարոյա-

կան ամեն աջակցություն: Գրողների Միությունը վերադարձող գրագետների համար բնակելի շենք կառուցելու հոգսը ստանձնել է իր վրա և յուրաքանչյուր գրագետի կառավարության կողմից տրամադրված 30 հազար ռուբլուց դատ, Գրողների Միությունը որոշել է ինքն էլ մի գումար ավելացնել և կառուցել քառհարկանի մի շքեղ շենք Ալավերդյան, Ստալինյան պողոտայի կենտրոնական փողոցում: Արդեն սկսել են տպագրվել նոր ներգաղթած գրագետների երկերը: Նույն ուշագրությանն ու սիրո հողածության առարկա են նկարիչները, դերասանները, երգիչները և բոլոր արվեստագետները: Մեր արհեստավորներն աշխատում են գործարաններում և արտելներում: Բոլորը վայելում են հարգանք: Նրանք 150—200 տոկոսով կատարում են իրենց պլանը և մասնակցում են սոցմրցությունների, հաճախ շահելով առաջնություն: Բոլորն էլ վարկ են ստացել և կառուցում են իրենց սեփական տները: Ներգաղթող հողագործները գյուղերում տեղավորված ավելի լավ են ապրում, նրանք աշխատում են կոլխոզներում և բավականին աշխօրեր վաստակում, բայց և այնպես իրենց ձմեռվա պաշարի համար մշակում են սեփական փոքրիկ հողամաս և պահում ընտանի կենդանիներ:

Ներգաղթողները Սովետական Միության ազատ և համահավասար իրավունքներ վայելող քաղաքացիներ են: Ստալինյան Կոնստիտուցիայի օրենքով մենք էլ 1947 թ. փետրվարի 9-ին Հայաստանի Գերագույն Սովետի ընտրություններին մասնակցեցինք: 60-ամյա մարդիկ հուզումով հայտարարում էին, որ իրենց կյանքում առաջին անգամն է, որ որպես ազատ քաղաքացիներ քվեարկում են:

Այսօր Մասիսի ստորոտում, Արարատյան դաշտում ծածանվում է ռևոլուցիայի, ազատության, կարմիր դրոշմ. ժամանակի հասունացող առաջընթացով կսլարդվի և՛ Մասիսի կատարին: Իսկ գաղութներից ինչպես մի ժամանակ Րաֆֆին էր երազում «պանդուխտ հայ ազգիք» գունդ առ գունդ արդեն գալիս են դեպի «յուրյանց սիրուն հայրենիք»:

Հանձարեղ Կոմիտասը իր խելագարության օրերին ան-

գամ իմաստալից էր խոսում: Նրա հիվանդության նոպաներին, երբ անգիտակցաբար իրեն այցի գնացող բարեկամներ էին լինում, նա վռնդում էր նրանց հաճախ ասելով.

— Հայդե՛, հայդե՛, տուն գնացեք, ձե՛ր տունը, այստեղ ի՞նչ գործ ունեք, ինձ հանգիստ թողեք և տո՛ւն գնացեք, ձե՛ր տունը միայն կարող եք հանգիստ լինել. չե՞ք լսում, ձե՛ղ եմ ասում, ձե՛ր տունը գնացեք:

Մենք ձայն ենք տալիս դադութների ավելի քան մեկ միլիոն հայության, փրկության ուղի և վերջնական հանգրվան ենք ցույց տալիս.

— Վերադարձեք դեպի հայրենի տուն, դեպի հայրենի՞ք:

Եվ մենք մեր հոգու աչքերով տեսնում ենք, որ դրոշադարդված նավեր, լիքը դադթական հայերով, ուրախափայլ դեմքերով, խանդավառ և գոռ երգերով, դարավոր կարոտով՝ վերադառնում են ա՛յն հողի գիրկը, որից մի դժբախտ օր դադթել էին թուրքերի ստեղծած սարսափների, տանջանքների մահասփյուռ յաթաղանի պատճառով:

Ես այսօր Սովետական Հայաստանի հպարտ քաղաքացին եմ: Նոր եմ զգում հայրենիքի քաղցրութունը, հարազատ ժողովրդի սերը, քաղաքացու պարտավորություններ ու իրավունքները, կյանքի իմաստը: Իմ առաջն է պայծառ և արևոտ ապագան: Ես հավատում եմ վաղվա մե՛ծ հաղթանակին, համայն աշխարհի բոլոր ժողովուրդների եղբայրության: Ես զգում եմ, որ իմ փոքրիկ հայրենիքը մենակ չէ, նա մի օղակն է 16 ռեսպուբլիկաների ամուր և անխորտակելի շղթային. ես զգում եմ, որ մենք մեկ-երկու միլիոն չենք, այլ ուղիղ 200 միլիոն, և ո՛վ որ մի միլիոնին ուզում է վնասել, իր դեմ գտնում է 200 միլիոնների երկաթյա բռունցքները: Ես տեսնում եմ, որ մեր կարմիր դրոշը ծածանվում է Մեղրուց մինչև Մուրմանսկ, Էջմիածնից մինչև Վլադիվոստոկ: Ես զգում եմ, որ ընդարձակ և աննվաճելի է մեր մեծ հայրենիքը—Սովետական Միությունը: Հայրենի հողի վրա կանգնած, իմ սիրտը հորդում է շնորհակալության և երախտագիտու-

թյան անսահման զգացմունքով դեպի Լենինի—Ստալինի մեծ պարտիան և ուստի մեծ ժողովուրդը, որոնց շնորհիվ ես այսօր գտնվում եմ իմ հարազատ հայրենիքում:

Իմ ընտանիքը անցել է թուրքական դժոխքից, տվել է բազմաթիվ զոհեր, տառապել է շատ, անցել է և՛ օտար երկրների փշոտ ճանապարհներով, բայց այսօր նա կանգ է առել, խարիսխ է նետել իր հայրենի հողի վրա, Մասիսի հովանու տակ և երբեք է՛լ չի հեռանա, ի՛նչ որ էլ լինի, չի՛ հեռանա այս սրբազան հողից:

Թուրքերը ցանկացել էին արմատախիլ անել, դերեղմանել հայությունը, բայց նրանց այս ոճրային ծրագրին իբրև պատասխան՝ ահա՛ մեր Սովետական ծաղկող Հայաստանը: Թուրքերը ուզեցել էին իմ ընտանիքը բնաջնջել մահվան ճանապարհից ինձ մինչև Դեր-Զոր արսորելով, բայց ահա՛ ես նոր կյանքի արևոտ ճանապարհի վրա կանգնած, իմ երեխայի՝ ձեռքից բռնած, ճակատս բարձր, ձայն եմ տալիս աշխարհին.

— Եվ սակայն ես ապրում եմ ու պիտի ապրեմ, իմ ուժը Սովետական Հայաստանն է, Սովետական հզոր Միութենությունը, ազգերի ու ժողովուրդների եղբայրությունը:

Վ Ե Ր Զ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԱՍ. ԹՈՒՐԻԱՅՈՒՄ

	Էջ
Իմ ծննդավայրը	3
Հալածանքների և կոտորածների զրդապատճառները .	7
Թուրքահայերի տեղահանութիւնը	21
Միջագետքի անապատներում	28
Մի քանի զրվագներ	39
Դեր - Զոք	47
Հալեպի ջարդը	51
Վերադարձ	62
Հերոսական զիմադրութիւններ	66
Մեր կորուստները	72
Կրկին գաղթ	75

Բ. ՄԱՍ. ԱՐՏԱՍՍՀՄԱՆՈՒՄ

Թշնամու չղաղարող դավերը	79
Մեր կյանքը	84
Վերադարձ դեպի հայրենիք	91

Գ. ՄԱՍ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առաջին տպավորութիւնները	100
-----------------------------------	-----

Պատ. խմբագիր ՀՐ. ՔՈԶԱՐ
Նկարիչ Ռ. ԲԵՂՐՈՍՈՎ.

Տեխ. խմբագիր Ա. ՄԱՏԻՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎՖ 02768 Պատվեր 14: Տիրած 4000:
Հեղ. 5 մամուլ, տպ. 7¹/₈ մամուլ
Հանձնված է արտադր. 9/1 1948 թ.
Ստորագր. է տպ. 5/III 1948 թ.

ՀՍՍՌ Մ. Սովետին կից
Պոլիգր. և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, Ալա-
վերդյան № 65,
Երևան, 1948 թ.

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող		Տարված է	Պետք է լինի
69	4	ն.	Սվերդիան	Սվերդիան
87	9	վ.	Հոգեբարձուհի	Հոգեբարձուհի
90	2	վ.	ռևանդատ	այլասեղծում
95	10—11	վ.	մի քանի հարյուր	մի քանի հարյուր հազար

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030159

[604]

ԳԻՆԸ 6 Ռ.

Ա ^{II} 30159